



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գրադարան

Հայոց Ազգական
Գրադարան

Հայաստանի Թ. Բ. Հ. Զ. Գ. Հ.

№ 55

Ն. ԳՈԳՈԼ

Ներեցք և լուծար
ՏԱՐԱՆ ԲՈՒԻԼԲԱ

Թ. Ա. Բ. Կ. Մ. Ա. Ե. Յ.

Ա. Ա. Բ. Ե. Ա. Ա. Ա.

Ակրելը

1540

Թ. Ա. Բ. Կ. Մ. Ա. Ե. Յ.

Ա. Ա. Բ. Ե. Ա. Ա. Ա.

1892

2013 3
ETOS RAM
27 JUL 2006

Հրատարակութիւն Թ. Ը. Հ. Գ. Հ.

25 NOV 2010

Անդրեաս

9-1540

աշ.

№ 55

Ա. ԳՈԳՈՒ

ՏԱՐԱՍ ԲՈՒԼԲԱ

Թարգմանեց

Մ. Աբեղեան



ԹԻՖԼԻԶ

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԵԽԵԱՑԵ

1892

- Ենկերութեան հետեւեալ հրատարակութիւնները վաճառ-
ում են ընկերութեան գրասենեակում և Կենդրոնական
գրավաճառուանոցում:
- | | | |
|---|-------------------|------|
| 1 Թաւամազ մեղու, | թարգ. օր. Ն. Տէր- | |
| Մարկոսեան. | · . . . | — 40 |
| 2 Կարմիր լապտեր, | թարգ. օր. Ն. Տէր- | |
| Մարկոսեան. | · . . . | — 50 |
| Նոյնը առանց կազմի | · . . . | — 30 |
| 3 Թովմաս եզրօր տնակը, | թարգ. օր. Ն. | |
| Տէր-Մարկոսեան. | · . . . | — 60 |
| Նոյնը առանց կազմի | · . . . | — 45 |
| 4 Մանկական երգեր, Գամառ-Քաթիպա. | | — 25 |
| Նոյնը առանց կազմի | · . . . | — 15 |
| 5 Մորեխ և նրա ջնջելու հնարները, Հ. | | |
| Տէր-Քարսեղեանի. | · . . . | — 10 |
| 6 Առողջապահական ընթերցանութիւն,
նեղ և խոնաւ ընակարանների մասին, Հ. | | |
| Առաքելեանի. | · . . . | — 10 |
| 7 Սրբու հօրն մերոյ Մովսիսի Խորենացու | | |
| Պատմութիւն Հայոց | · . . . | — 80 |
| 8 Փոքրիկ ձեռնարկ գործնական տնտեսու-
թեան, Մօրիս Բլօքի, Վոլխազր Ա. Պա-
լասանեանցի. | · . . . | — 50 |
| 9 Ոօբինզօնի պատմութիւն, թարգմանու-
թիւն Գիւտ քնն. Աղանեանցի. | · . . . | — 60 |
| 10 Գամառ-Քաթիպափ բանաստ. կազմ. | 1 20 | |
| Նոյնը առանց կազմի | · . . . | — 50 |
| 11 Ուժաստորք, գործ Վլինէլմ Հառուֆի | · . . . | — 75 |
| 12 Գատնուկ և Լուսաստուկ, վեպեր Քրիս-
տափոր Շմիդտի, թարգ. Խուարդ. | · . . . | — 25 |
| 13 Սալեաթ-Նօվա, ազգակին երգիչ. | · . . . | — 5 |

20 MAR 2013

1913 JUL 13

ՏԱՐԱԾ ԲՈՒՀԼԲԱ

ՏԱՐԱԾ ԲՈՒՀԼԲԱ

Ա.

— Հասպանի շուռ արի, որդիս: Պահ, քո
տունը շինուի, ինչ ծիծաղելի ես: Այդ ի՞նչ
տէրտէրի կապայ է հագներիդ: Տօ, ամենքն էլ
այդպէս են հագնուում ձեմարանում:

Այսպիսի խօսքերով դիմաւորեց ծերունի
բուլբան իր երկու որդոց, որոնք սովորում
էին Կիևի հոգեոր գովրոցում և եկել էին տուն
իրենց հօր մօտ:

Որդիքը հենց նոր էին ձիուց վէր եկել:
Նրանք երկու ուժեղ, յաղթանդամ տղերք էին,
որոնք, իբրև նորաւարուսեմինարիսաներ, դեռ ևս
անվատահութեամբ՝ աչքի տակով էին մտիկ տա-
լիս: Նրանց առոյզ երեսներին բուսել էր ա-
ռաջին աղուամազը, որին ածելի դեռ չէր դի-
պած: Որդիքը խիստ շփոթուեցան հօր այսպի-
սի ընդունելութիւնից և, աչքները գետին
դշած, անշարժ կանգնած մնացին:

— Կացէք, կացէք, որդիք. թողէք մի լաւ-



1590-2013

(4542
41) 7.8.1833

Дозвол. пизз. Тифлисъ, 4-го Июля 1892 года.

Типографія М. Д. Ротиніавпа, Голов. прос. № 41

մաիկ տամ ձեղ, —շարունակեց հայրը դէս ու դէն
շուռ տալով նրանց. —ի՞նչ երկայն վերարկու է
հազներիդ, տօ: Վերարկու եմ տառւմ՝ է: Պահ,
պահ, պահ. աշխարհիս երեսին այդպիսի վե-
րարկու իսկի չի եղել գեռ: Հապա, մէկն ու մէկդ
մի վազէք, տեսնեմ՝ փէշներիդ մէջ չէք փա-
թաթուիլ ու գետին թրմփալ:

—Մի ծիծաղիլ, մի՛, ափու, —ասաց վեր-
ջապէս մեծ որդին:

—Բա՛, սրան տես. ի՞նչ մեծ-սրտանի է ե-
ղել. ինչի՞ չպիտի ծիծաղեմ որ...

—Հենց այնպէս: Նատ էլ հայրս ես, բաց
որ վրաս ծիծաղես, Աստուած վկայ, կըթա-
կեմ...

—Ախքո ըսենց-ըսենցը, ի՞նչպէս, հօ՞րդ, —
ասաց Տարասը, զարմացած մի քանի քայլ ետ-
ետ գնալով:

—Հա՛, թէկուզ հենց հօրս: Որ ինձ վիրա-
սորեն, էլ մտիկ չեմ տալ ու ոչոքի խաթրը չեմ
պահիլ:

—Ի՞նչպէս ես ուզում հետոս կոռուել. բոլնց-
քով, հա՞:

—Դէ ի՞նչով կ'ուզի՞ լինի:

—Լաւ, արի դէ բոնցքակուիւ տանիք, —ա-
սաց Բուլբան, թէելը քշտելով. —տեսնեմ ի՞նչ
մարդ ես բոնցքակուի մէջ:

Եւ հայր ու որդի, երկար ժամանակ իրա-
րուց բաժանուած լինելուց յետոյ՝ միմեանց ող-
ջունելու փոխանակ, բոռոնցքներ էր որ սկե-
ցին հասցնել իրար:

—Սրան տեսէք. ցնորուել է ալեորը, խել-
քը բոլորվին կորցրել է, —ասում էր նրանց
տժգոյն, նիհար ու բարի մայրը, որ կագնած
էր դռան շեմքին և գեռ չէր կարողացել գրկել իր
սիրասուն զաւակներին: —Այն Աստուածը, որ
խելքը կորցրել է: Երեխայքը տուն են եկել,
մի տարուց աւելի կայ՝ նրանց չենք տեսել, իսկ
աս, Աստուած զիսէ՝ խելքին ի՞նչ է փէլ,
բոնցքակուիւ է սարքում:

—Հա՛, շատ լաւ է կուռում, ասաց Բուլբան
կանգ առնելով, —և՝ իմ հոգին, որ լաւ է...
Այ այգպէս, —շարունակեց նա, մի քիչ ուղ-
ղուելով. —Էլ խօսք չի ուզիլ: Լաւ կազակ դուրս
կըզայ: Դէ՞հ, բարով ես եկել, որդի. հիմա ա-
րի դէ մի պուշտի անենք: —Եւ հայր ու որդի
սկեցին համբուրուել:

—Ապրիս, մրգիս. այ հենց այգպէս պիտի
սալջարդ անես ամեն մարդու, ի՞նչպէս ինձ գոր-
սեցիր: Զլինի մէկին ձեռիցդ բաց թողնես:
Բայց և այնպէս, հազիդ զարդարանքն էլի ծի-
ծաղելի է: Տօ՛, այս ի՞նչ պարան է վրացիցդ
կախ: Իսկ դու, դմբոյ, ի՞նչ ես կանգնել ու ձեռ-

Ներդ կախ գցել,—ասաց նա, կրտսեր որդուն
դառնալով:—Բայ դժու, շան տղաց, ինչու չես
թակում ինձ:

—Այդ էր պակաս,—ասաց մայրը, որ այդ
միջոցին զրկում էր կրտսեր որդուն:—Բայն յոր-
դորեց, էլլի: Որտեղից էլ մոքովն այդպիսի բան
է անց կենում: Փա՞ս, հարազատ որդին հօրը
ծթծի: Մէկ էլ ասես հենց դրա ժամանակն է
հիմա. խեղճ երեխաս այնքան ճանապարհ է ե-
կել, յոգնել (այդ երեխան քսան տարեկանից
աւելի էր և հասակով ուղիղ մի սաժեն) ... նրան
հանգատանալ է պէտք հիմա և մի բան ուտել,
խակ սա ստիպում է նրան կոթւ տալ:

Ըհը՛, ինչպէս տեսնում եմ, երես ես առել՝
այս, —ասաց նուլլան:—Մօրդ ականջ մի՛ դնիլ,
որդի. կնիկ-արմատ է, խեղը բան չի կտրում:
Խնչ գգուանք է ձեղ պէտք: Զեր գգուանքն ա-
զատ-արձակ դաշտն է, մէկ էլ նժոյդ ձին - ահա
ձեր գգուանքը: Այս թուրն էլ տեսնում էք —ա-
հա ձեր մայրը: Բոլորը դատարկ բաներ են, ինչ
որ զլուխներդ լցնում են թէ ձեմարանը, թէ
այն բոլոր զբքերը՝ քերականներն ու փիլիսո-
փայութիւնները և այդ ամեն այբ-մէ-ճէ-ռան,
թքել եմ այդ ամենի վրայ էլ:—Այսաեղ նուլ-
լան մի այնպիսի խօսք էլ աւելացրեց, որ գը-
րելլ մի փոքր անվայել է, ուստի կարելի է

թողնել: —Ա՛յ, լաւն այն է, որ հենց գալ շա-
քաթ ձեղ ջապորոժիկ ուղարկեմ: Ահա թէ մր-
տեղ է ուսումը: Այնտեղ է ձեր ուսումնարանը.
այնտեղ միայն խեղը կըսովորէք:

—Բայս հենց միայն մի՞ շաբաթ պիտի մնան
տանը, —ասաց խղճալի ձայնով, արտասուզն աչ-
քերին, նիհար ու պառաւ մայրը. —խեղճ երե-
խայքս ոչ պիտի կարողանան մի փոքր շունչ
քաշել, ոչ իրենց հօր օջախը մի կարգին տես-
նել, և ոչ էլ ես պիտի կարողանամ կարուս
առնել:

—Հե՛րիք է, հե՛րիք դռուաս զլսիս, ա պա-
ռաւ. կազակը նրա համար չի ստեղծուած, որ
կանանց ետեից քարշ գայ: Գնա, գնա, մեղ հա-
մար հաց զցիր շուտով և ինչ ունիս՝ բե՛ր:
Մեզ պէտք չեն նազուկ, զաթայ, հալուայ-մա-
լուայ. ուղղակի մի ամբողջ ոչխար քարշ տուր,
բեր սուփրի վրայ: Մէկ էլ արազը, արազը
շատ լինի, համ: Այն շինովի արազից չէ, որ
հետը չամիչ ու ես ինչ գիտեմ՝ հազար ու մի
տեսակ բաներ են խառնում: հապա թակը, մա-
քուր արազ, որ փրփուրը երեսին՝ գժուածի
պէս եռայ ու պճպճայ:

Բուլլան իր որդոցը ներս տարաւ հիւրա-
բանոցը, որտեղից վախվսելով դուրս վախան
երկու՝ կամիր վզնոցներով՝ առողջակազմ աղջ-

կերք, երբ տեսան եկած երիտասարդ պարոն-ներին, որոնք սովոր չեին ձեռքներն ընկածը բաց թողնել: Սենեակում ամեն բան կարգա-ւորած էր այն ժամանակուայ ճաշակով. իսկ այդ ժամանակը ծԶ-րդ զարու մօտերքն էր, երբ դեռ նոր էր սկսում ծնուել ունիացի միաքը: Ամեն բան մաքուր էր, գունաւոր կա-ւով սոււղած: Ամբողջ պատը թրերով ու հրա-ցաներով զարգարած էր: Սենեակի լուսա-մուտները փոքր էին, կոր կաթն-ապակինե-րով, որոնց տեսակից այժմ պատահում են մի-այն վաղեմի եկեղեցիներում: Եռանկիւնու ձևով շինած դարակների վրայ, որոնք բանում էին սենեակի անկիւնները, շարած էին կառէ կծեր, կսպոյս ու կանաչ շիշեր, արծաթէ թասեր, ոսկե-ջրած բաժաներ, —վենետիկեցոց, թիւրքի ու չեր-քէղի բանուածքներ, որ Բուլլայի սենեակը մը-տել էին հազար ու մի ճանապարհներով, սրա ձեռքից նրա ձեռքն անցնելով, որ շատ սովո-րական բան էր այն կտրճական ժամանակներում: Ամբողջ սենեակի շուրջը շարած լորի նստա-րանները, սենեակի մէջտեղում՝ դրած ահազին սեղանը, որ ինչպէս հաստափոր ուսւա վաճա-ռական կին, շինախեցիների վրայ նկարած ինչ-որ աքլորներով, սենեակի կէսը կտրել էր, —այս բոլոր առարկաները բաւական ծանօթ էին մեր

երկու կտրիճներին, որոնք համարեա ամեն տա-րի արձակուրդին սոսով տուն էին գալիս. սոսով էին գալիս մէկ նրա համար, որ դեռ ձի չու-նէին, մէկ էլ նրա համար, որ սովորութիւն չէր, որ թոյլ տային՝ աշակերաները ձի նստեն, ձիով ման դան: Նրանց ունեցածը միայն իրենց երկայն ցցունքն (քեաքիւլ) էր, որից կա-րող էր բանել, թափ տալ ամեն մի զէնք կրող կազակ: Յուլքան, նրանց ուսումն աւարտելու ժամանակ միայն, իր ջոկից երկու ջահիլ յով-տակ ուղարկեց նրանց:

—Դէ՛ տղերքս, ամենից առաջ մի մի արագ զցենք: Տէր Աստուած, քեզ փառք: Կենդանու-թիւն. ողջ լինիք, որդիքս. Օստապ, ողջ լի-նիս. դու էլ, Անդրէ: Տայ Աստուած, որ կոռի մէջ աջողակ լինիք, անհաւասներին ջարդէք, թաթարներին ջարդէք, թիւրքէրին էլ ջար-դէք. լիներն էլ որ սկսէն մեր հաւատի դէմ բան սարքել լիներին էլ ջարդէք: Հապա բա-ժակդ պահիր...ինչ, լաւն է արազը: Հապա ասա տեսնեմ՝ ի՞նչպէս է լատիներէն արազ: Հը՛մ, բանն էլ այդ է՛ է, որդի. յիմար են եղել լատինները. նրանք իսկի չեն էլ իմացել աշխարհիս երեսին արազ ասած բանը կայ: Ը՛լ՛... ի՞նչպէս էր, գուք ասէք, նրա անունը, որ լատիներէն ստանաւորներ է զրել: Ես զրել-

կարդալու մէջ քաջ չեմ, դըմ համար էլ մտիս
չէ: Հորացիոս ^{*)} էր, ի՞նչ էր:

—Տեսնում ես հօրս,—խածում էր ինքն
իրեն մեծ որդին՝ Օստապլը.—շուն ալւորն ա-
մեն բան իմանում է, ու դեռ չիմանալու է
տալիս:

—Կարծեմ, վարդապետը չէր թողնում
արազի հոսն էլէ առնէք, —շարունակեց Տա-
րասը:—Հապա, ձիշոն ասէք, տղերք, ուռի
ու եղունի կակուղ ճիպոտներով լաւ չթին դա-
զում մէջքներդ ու միւս փափուկ տեղերդ:
Կամ կարելի է, որովհետեւ դուք արգէն խելք-
ներդ գլուխներդ էք հաւաքած եղել, կարելի
է մտրակներով էլ էին կաշիներդ քերթում:
Կարծեմ, այն էլ ոչ միայն շաբաթ օրերը,
չորեքշաբթի ու հինգշաբթի օրերն էլ էիք լաւ
անուշ անում:

—Ի՞նչ հարկաւոր է յիշել, ափու, —ասաց
Օստապն իր սովորական սառնարինութեամբ.—
անցուկը մուցուկ է:

—Հիմա մենք ուրիշներին կընախշենք
մեր թրերով ու դաշոյններով, —ասաց Անդ-
րէն:—Հապա թող ձեռքներս մի թաթար ընկ-
նի—կազակի թրի համը լաւ կ'առնի:

^{*)} Հոռմակեցի բանաստեղծ, որ ապրում էր
61-8 թ. Քր. առաջ: Ծ.

—Ապրիս, որդիս, ապրիս, ես՝ իմ Աս-
տուածը: Վէ՛ որ բանն այդպիս դառաւ, ես էլ
եմ գալիս ձեզ հետ. Աստուած վկաց, գալիս եմ:
Ի՞նչս է կտրուել, որ այստեղ նստեմ: Ի՞նչ,
ես... ու ցանքի, խողարածների ետևից ընկ-
նեմ, կամ կնոջս հետ սիլի-բիլի անեմ: Կհրչի
դա՝ է: Դրա համար տանը նստեմ: Ես կազակ
եմ, չեմ ուզում: Ի՞նչ անենք, որ կորւ չկաց.
հենց այնպէս՝ զբանելու համար վեր կըկենամ,
կըդամձեզ հետ Զապորոժիէ: Աստուած վկաց, գա-
լիս եմ:—Եւ ծերունի Բուլլան կամաց-կամաց տա-
քացաւ, տաքացաւ. վերջը բոլորովին բարկացաւ.
վեր կացաւ սեղանից և, տղամարդի պէս շի-
տակ ու խրոխտ կանգնելով, ոտքը գետնին
լոփեց.

—Վաղն ևեթ գնում ենք: Ի՞նչ ունինք յե-
տաձեկու: Ի՞նչ ենք կորցրել, որ այստեղ նըս-
տենք ու սպասենք: Ինչներից է պէտք այս
խրճիթը. ինչներից են այս բոլորը. ինչնացու
են այս աման-չամանը: —Այս ասելով՝ սկսեց
խփել, ջարդոտել ու դէն շպրտել կձուճներն ու
շիշերը:

Խեղճ պառաւ կինը, որ արդէն վարժուել
էր իր մարդու այսպիսի արարմունքներին,
տախտի վրայ նստած՝ տխուր մտիկ էր անում:
Նա սիրտ չէր անում՝ բերանը բանաց ու մի

խօսք ասի. բայց այդ՝ իրեն համար սարսա-
փելի որոշումը լսելով, չկարողացաւ արտասու-
քը զապել։ Աչքը գցեց զաւակներին, որոն-
ցից ստիպուած պիտի լինէր այնպէս շուտով
բաժանուել, —և ով կարող է նկարագրել նրա
սրտի այն բոլոր համբ ու գառն կսկիծը, որ, ասես,
ցոլանում էր նրա աչքերի մէջ և գողղողում
զզաձգարար սեղմուած շրթունքների վրայ։

Բուլլան խիստ յամառ մարդ էր։ Նա այն
բնաւորութիւններից մէկն էր, որ կարող էին
ծնուել միայն բիրա մերդ դարում, այն էլ Եւ-
րոպացի կէս-թափառական արեելքում այն
ժամանակ, երբ ճիշտ ու անճիշտ հաւեկցողու-
թիւն ունէին երկիրների սեփականութեան մա-
սին, որոնք մի տեսակ վիճելի ու չվճռուած
տիրապետութիւն էին դարձել։ Այդպիսի երկիր-
ներին պատկանում էր այդ ժամանակ և Ուկրայ-
նան^{*)}։ Այսամենը, ինչպէս երեք գանազան բնա-
ւորութեան տէր ազգերի գէմսահանները պաշտ-
պանելու մշտական անհրաժեշտութիւնը, Ու-
կրայնացի զաւակների քաջազդութիւննե-
րի համար մի տեսակ ազատ-արձակ աս-
պարէզ էին բաց անում և նրանց մէջ հոգու
յամառութիւն զարգացնում։ Հոգու այս յամա-

ռութիւնն իր բոլոր զօրութեամբ դրոշմուել
էր Տարաս Բուլլայի վրայ։ Երբ Բատորին^{**}) Մա-
լուսոսիայում զօրագնդեր կազմակերպեց և Մա-
լուսոսիան այն պատերազմական սպառազի-
նութեամբ վառեց, որով սկզբում Պորոգների^{***})
բնակիչներն էին միայն յացանի, Տարասն առա-
ջին գնդապեսներից մէկն էր։ բայց հենց ա-
ռաջին պատահած դէպքում բոլոր միւսների
հետ կռուեց նրա համար, որ լեհացի և կա-
զակ զօրքերի միացած ուժով թաթարներից

^{*)} Ստեփան Բատորի՝ լեհաց թագաւոր (1576—
1586)։ Մալուսոսիան այդ ժամանակ լեհաց իշխա-
նութեանն էր ևնթարկում։ Ծ. թ.

^{**) Պորոգ} (Պօրօրց) — քարավազ, սահանք, խու-
թեր՝ գետի լաստակին բարձրացած ժայռեր, որոնց
վրայով կամ միջով ջուրն արագ սահում է։ Դնեսպը
գետի այդ քարավազը, որի մասին լիշտում է վէպի
մէջ, գտնուում է գետի ներքին ընթացքում, ուր գե-
տը, մի քանի տասնեակ վերստ տարածութիւն
արգավիսի խութերի և սեպացած քարավիների միջով
անցնելուց լեսոտ, մանում է ընդարձակ տաշտի մէջ,
որի երկու կողմից ափերը հարթ են։ Այս վերջին
հոսանքի վրայ գետի մէջ կան շատ կղզիներ, որոնք
ծառացում էին կազակների համար իբրև ամենալաւ
ապաստանարան։ Այդ կղզիներից մէկի վրա սովորա-
բար գտնուում էր կազակների կապանքը, որ կոչ-
ում էր Սեչ, որ մի ամբացրած բանակի տեսք ու-
նէր։ Այդ կղզիները՝ պարոգներից գէնը գանուելով՝
կոչւում են Զապորոժիէ (Անդր. Քարավազ), Ծ. թ.

^{**} Մալուսոսիան։ Ծ. թ.

վերջրած աւարը իրենց մէջ հաւսասար չէին բա-
ժին արել, և լինացի զօրքերն աւելի նախապատ-
ռութիւն էին առացել: Նա բոլոր ժողովական-
ների առաջ պաշտօնից հրաժարուեց և ա-
սաց. «Պարոն դնդապեաններ, դուք ինքներդ որ
ձեր իրաւունքները չէք ճանաչում, ջառ ու
ջհանդամը ձեր գլուխն ու արելը: Ես ինձ հա-
մար ջոկ գունդ կըժողովեմ, և թող մէկը հա-
մարձակուի իմ իրաւունքիս ձեռը տալ, ես
դիտեմ թէ նրա քիթ ու պոռնդն ինչպէս կը-
ջարդեմ»:

Ցիրաւի, կարճ ժամանակում իր հայ-
րենական կալուածից բաւական նշանաւոր զօ-
րագունդ կազմեց, որ բազկացած էր միանդա-
մայն հողագործներից ու զինուորներից և հը-
լու հպատակում էր նրա կամքին:

Առհասարակ նա սիրահար էր ասպատակու-
թիւնների և խոռվութիւնների: Հոտով իմա-
նում էր թէ ուր և որ տեղում ապստամբու-
թիւն է ծագել, և մէկ էլ տեսնես ական-թօթա-
փել, ձին նստած, վրայ էր հասնում: «Հապա, տղերք. ի՞նչ, ի՞նչպէս. ում և ինչու-
պէտք է ջարդել», ասում էր սովորաբար ու
խառնում գործին: Սակայն ամենից առաջ
խիստ քննում էր հանդամանքները և միայն-
այն ժամանակն էր զէնք բարձրացնողների կող-

մը բռնում, երբ տեսնում էր, որ խկապէս ի-
րաւունք են ունեցել բարձրացնելու, թէ և այդ
իրաւունքը, նրա կարծիքով, միայն հետեւալ
դէպքերում էր լինում. — եթէ հարեւան աղդը
քշում էր տաւարը, կամ հողի մի մասը կտրում,
եթէ կոմիսարները աւելի հարկ էին դնում և
կոռ ու բեկար առնում. կամ գլխաւորներին
չէին յարցում և նրանց առաջը գդակը դլսը-
ներին էին խօսում, և կամ թէ ուղղափառ հա-
ւատը ծաղրում էին: Այս դէպքերում անպատ-
ճառ հարկաւոր էր զէնքի զիմել. իսկ անհատ-
ների՝ թաթարների ու թիւբքերի դէմ ամեն-
ժամանակ իրաւունք էր համարում զէնք-
բարձրացնել ի փառս Աստուծոյ, քրիստոնէ-
ութեան և կազակութեան: Մալոռասիացի այն-
ժամանակուայ դրութիւնը, որ գեռ որեւէ կարգ-
ու կանոնի չէր բերուած, մինչև անգամ չէր
ստուգուած ու յացնի եղած, նպաստում էր
մէկմէկուց բոլորովին առանձին շատ տիրագլուխ
ասպատակաւորների գոյութեանը:

Իուլիան ամենապարզ կեանք էր վարում, և
նրան հասարակ կազակից ամենեւին կարելի չէր
զանազաննել, եթէ միայն նրա դէմքը մի տեսակ
հրամացողականութիւն և մինչև անգամ վեհու-
թիւն չունենար, մանաւանդ այն ժամանակ, երբ
հաստատ վճռած էր լինում մի բան պաշտպանել:

Բուլքային առաջուց ուրախութիւն էր պատճառում այն միաքը, թէ ինչպէս այժմ ինքն իր երկու որդոց հետ կերեաց ու կ'ասէ. «Այ, տեսէք՝ ինչ կտրիմներ եմ բերել ձեզ»; Նա մըտածում էր թէ ինչպէս կըտանի նրանց Զապորոժիի - այն ժամանակուաց Ուղրայնացի այս զինուորական դպրոցը, կըներկայացնի ընկերակիցներին և մտիկ կըտայ թէ ինչպէս նրանք իր աչքի առաջ քաջայազմող կըհանդիսան պատերազմական արուեստի և քէֆի մէջ, որը նոյնպէս ասպետի առաջին արժանաւորութիւններից մէկն էր համարում: Սկզբում ուզում էր որդոցը մենակ ուղարկել, որովհետեւ անհրաժեշտ էր համարում գնդի նոր կազմակերպութեամբ զբազուել, որի համար հարկաւոր էր իր ներկայութիւնը, —բայց տեսնելով որդիներին յաղթահասակ ու առողջ, յանկարծ բորբոքուեց իր պատերազմական ողին և վճռեց, որ ինքն էլ որդոց հետ գնայ միւսն օրն ևեթ, թէև դրա կարեւորութիւնը իր յամառ կամքն էր մի միայն:

Առանց մի բոպէ կորցնելու՝ սկսեց պատուէրներ տալ իր եսաւուլին ^{*)}, որին Տովկաչ էր անուանում, որովհետեւ իրաւ որ սա նման էր մի տեսակ սառը մեքենայի, —կուուի ժամանակ ան-

^{*)} Գնդապետի օգնական, հարիւրապետ. Պ. թ.

վրդով անցնում էր թշնամու շաբքերի միջով, թրովը մաքրելով՝ ասես թէ խմոր էր հունցում, ինչպէս որ բանամարտիկը իր համար ճանապարհ է. բաց անում: Բուլքայի պատուէրն այն էր, որ Տովկաչն ազարակում մնայ, մինչեւ որ ինքն իմաց կըտայ նրան թէ երբ պէտք է արշաւանքի դուրս դայ: Սրանից յետոց ինքն անձամբ դնաց իր կուրենները ^{*)} ման ե՛ւաւ, միքանիսին հրամայեց, որ պատրաստուեն հետը գնալու, ձիանքը ջրեն, դարի տան և իր ձին դուրս քաշեն, որին սովորաբար «Դև» էր անուանում:

Հ Յ Ա Վ
190-20/3
(Հ/Տ Հ/Հ)

— Հապա, տղերք, այժմ քննենք. իսկ էգուց — բանն. Աստուած: Դէ մեզ համար տեղ մի՛ գցիլ. մեզ անկողին սէտք չէ — դուրսը կըքննենք: Գիշերը դեռ նոր էր պատել երկինքը. բայց Բուլքան միշտ վաղ էր պառկում: Նա ձգուեց գորգի վրայ, վրան քաշեց ոչխարի մորթէ մուշտակը, որովհետեւ գիշերուաց օդը բաւական զով էր, մէկ էլ՝ որովհետեւ հուլքան, երբ տանն էր լինում, սիրում էր տաք փաթաթուել: Նուտով սկսեց նա խռմիացնել, և ամբողջ տունը հետևեց նրան: Ինչ կարծկար բակի զանազան

^{*)} Կուրեն (Կյորեն) կոչւում էին մի մեծ և զանազան մանր տներից բաղկացած շինութիւնները: Ծ. թ.



քունջ ու սրուճախում, բոլորը սկսեցին խորմ-
փացնել ու եղանակել: Ամենից առաջ պահա-
պանը քնեց, որովհետև ամենից շատ էլ նա էր
խմել երիտասարդ պարոնների գալու առթիւ:

Միայն խեղճ մօր քունը չէր տանում: Նա
խոնարհել, կպել էր իր՝ կողքէ-կողք պառկած-
սիրելի որդոց զլիստակի բարձին. սանրում էր
նրանց երիտասարդական, անհոգ զզզուած զան-
դուները և արտասուքով թրջում: Նայում էր
նրանց իր բոլոր էռթեամբ, նայում էր բոլոր
զզայարանքներով, նա հոգով ու մարմնով ամ-
բողջապէս մի տեսողութիւն էր զարձել և նա-
յելուց չէր կարողանում կշտանալ: Նա սնուցել
էր նրանց իր մայրական կաթով. մեծացրել,
փայփայել էր—և լոկ մի՛ վայրկեան միայն տես-
նում էր նրանց իր աչքի առաջ: «Զաւակնե՞րս,
սիրելի զաւակներս, ավ զիսէ՞ ինչ է զալու-
զլմներիդ, ինչ է սպասում ձեզ: Խ նչ կըլինի,
որ մի՛ շաբաթ գոնէ մտիկ անէի ձեզ», ասում
էր նա, և արտասուքի կաթիլները կանդ էին
առնում խորշոմների մէջ, որ կերպարանափո-
խել էին նրա երեմն գեղեցիկ դէմքը:

Իրաւ որ նա խղճալի էր՝ ինչպէս այն կը-
ալըճական դարու ամեն մի կին-մարդը: Նա
մի՛ ակնաթարթ միայն ապրում էր սիրով—մի-
այն կըքի առաջին բորբոքման, խանդավառ երի-

տասարդութեան առաջին եռանդի ժամանակ
միայն—որ ահա իր խասաբարոց հրապուրիչը
թողեց իրեն՝ թրի համար, ընկերների համար,
գինարբութեան համար: Մարդու երեսը
տարուաչ մէջ երկու-երեք օր էր տեսնում,
և յետոյ մի քանի տարի շարունակ նրա համ-
բաւը չէր զալիս: Մարդու հետ տեսնուելու ժա-
մանակն էլ հծ, երբ միասին էին ապրում, ի նչ
կեանք էր նրա կեանքը: Վիրաւորանքներ էր
որ կրում էր, մինչև անգամ ծեծ ուտում: Գը-
գուանքը միայն իրեւ ողորմութիւն էր տես-
նում: Նա մի օտարոտի էակ էր այն անկին աս-
պեաների շրջանում, որոնց վրայ քէֆասէր Զա-
պորոժիէն դրել էր իր խիստ կնիքը: Երիտա-
սարդութիւնն առանց վայելչութեան մի ըստէ
միայն փայլեց նրա աչքի առաջ, և նրա զե-
ղեցիկ, զեռափթիթ այտերն ու կուրծքը թա-
ռամեցին ու ծածկուեցան վաղահաս խորշոմնե-
րով: Ամբողջ սէրը, բոլոր զզացմունքները, ամե-
նը՝ ինչ որ քնքուշ ու խանդակաթ բան կաց
կնոջ մէջ, ամենը փոխուեց նրանում մի մայ-
րական զզացմունքի միայն:

Նա եռանդով, կաթողին սիրով, արտասու-
քըն աչքերին, ուրուրի պէս պառյա էր զալիս
իր զաւակների զլիսովը: Որդիկերանց, իր սի-
րասուն որդիկերանց առնում ևն ձեռիցը,

առնում են, որ էլ երբէք չտեսնի նրանց։ Ո՞վ գիտէ, դուցէ հենց առաջին կոռի մէջ թախարը նրանց գլուխը կըտրի, և ինքը չպիտի իմանայ թէ ճառեղ են ընկած նրանց դէն գրցած մարմինները, որ կտցահարելով կըքբըրի ճանապարհի գիշատիչ թռչունը, և որոնց ամեն մի կտորիկի, ամեն մի կաթիլ արիւնի համար ամեն բան կըտար աշխարհում։ Նեկեկալով նայում էր նրանց աչքերին, որ ամենակարող քունն արդէն սկսել էր փափել, և մտածում էր. «Թերես, Բուլբան որ զարթնի, ճանապարհ ընկնելը մի-երկու օրով յետաձգի։ Կարելի է նրա համար միտքը գրեց այդպէս շուտով գնալ, որ շատ էր խմել»։

Լուսինը երկնքի բարձրութիւնից վազուց արդէն լուսաւորում էր քնողներով լիքը բակը, ուռիների խիտ ծառախումբը և բարձր մոլիխոտը, որի մէջ թաղուած էր բակը շրջապատող ցանկապատը։ Նա դեռ շարունակ նստած էր սիրելի որդոց զիսավերեւում, մի բոպէ անգամ աչքը նրանցից չէր հեռացնում և քնելու վրայ չէր էլ մտածում։ Զիանքն արդէն, լուսաբացի մօտենալն զդալով, բոլորը նստուցին խոտի վրայ և գագարեցին ուստելուց. ուռենիների վերին տերեններն սկսեցին սօսաւել, և սօսաւող հոսանքը ճիւղերի վրայով կամաց-կամաց

իջաւ գէպի տակը։ Նա մինչեւ լոյս նստած մընաց և բնաւ խոնջացած չէր զգում իրեն և ներքուստ ցանկանում էր, որ գիշերը, որքան կարելի է, զեռ երկար տեի։ Դաշտից սլացաւ յովտակի զիլ խրխինջը. կարմրագոյն շերտերը պայծառ փայլեցին երկնքի երեսին։

Բուլբան յանկարծ սարթնեց ու վեր թռաւ տեղից։ Նա շատ լաւ մտաբերում էր, ինչ որ նախընթաց օրը պատուիրել էր։

— Դէ՛հ, տղերք, հերիք քնէք։ Ժամանակն է. վեր կացէք, վեր։ Զիանքը ջրէք։ Պառանւն ուր է (այսպէս էր սովորաբար կոչում իր կնոջը)։ Նուտ արա, պառաւ, պրծիր, ուտելու բան տուր մեզ. առաջներիս մեծ ճանապարհ կայ։

Խեղճ պառաւը, վերջին յոյսը կտրած, սըրտաբեկ քարշ եկաւ գէպի խրճիթը։ Մինչդեռ նա, արտասուքն աչքերին, պատրաստում էր ինչ որ նախաճաշկի համար հարկաւոր էր, Բուլբան իր հրամաններն էր տալիս, զոմի մէջ զէս ու զէն էր ընկնում և իր զաւակների համար անձամբ ընարում ամենալաւ զարդարանքներն ու սարքերը։

Բուրսակները *) յանկարծ կերպարանափոխուեցան։ Նրանց ոսքերին առաջուայ կեղտու

*) Բուրսա կոչում էր կինի հոգեսոր դպրոցը, որի աշակերտները բուրսակ էին ասւում։ Ծ. թ.

կօշիկների տեղը արծաթի պայտերով, կարմիր սեկ կօշիկներ երևացին. շալուարները, Սև ծովի լայնութեամբ՝ հազար ու մի ծալքերով ու փոթերով, ձիգ կապած էին խոնջանով. խոնջանից պինդացրած էին փոկեր՝ վինջուխների և չերուխի միւս զանգուլակների հետ. Կրակի պէս պայծառ՝ ալ գոյնի մահուդ կապակինի *) վրացից մէջքներին նախշուն դօտի էին կապած. տաճկական քանդակագարդ ատրճանակները դօտում մէջ խրած. թուրը կողքներիցը կախ՝ չխշխում էր ոտներին դիպչերով: Նրանց դեռ քիչ արեառ դէմքերը գեղեցկացել ու սպիտակել էին. նորածիլ սե բեղերը. այժմ, ասես, աւելի պայծառ շուշ էին տալիս երեսների սպիտակութեանն ու երիտասարդական առողջ ու զբարթ գոյնին: Ասկեթել ծայրով մորթէ գտակները գլուխներին՝ սիրունատես էին. Նրանք: Խեղճ մայր. Նրանց որ տեսաւ, մի խօսք անգամ ասել չկարողացաւ, և արտասուքի կաթիւներն աչքերի մէջ սառան, ֆնացին:

— Դէ տղերը, ամեն բան պատրաստ է. Էլ ուշացնել պէտք չէ, — ասաց վերջապէս Բուլքան: — Այժմ քրիստոնէական սովորութեամբ, ճանապարհ ընկնելուց առաջ, ամենքս պէտք է նստենք:

*) Կաղակների կարճ վերնազգեստ: Ծ. թ.

Ամենքը նստեցին, մինչեւ անդամ դոների մօտ պատկառանքով կանգնած ծառաներն էլ: — Այժմ, մայր, օրհնիր զաւակներիդ, — ասաց Բուլքան: — Խնդրիր Աստուծուց, որ քաջ պատերազմող լինին, միշտ պաշտպանեն ասպետական պատիւը, միշտ Քրիստոսի հաւատի համար պաշտպան կանգնեն. ապա թէ ոչ, կորչե՞ն ու նրանց հետքն անգամ չմնայ աշխարհիս երեսին: Զեր մօրը մօտեցէք, երեխայքս: Մայրական աղօթքը ծով ու ցամաքում փըրկում է մարդուս:

Մայրը, թոյլ ինչպէս մայր, գրկեց նրանց, երկու փոքրիկ խաչ հանեց և հեկեկալով վզներն անց կացրեց.

— Այս Աստուծածինը... պահի՛-պահանի ձեզ... Զմոռանաք ձեր մօրը, որդիքս... մի խարարիկ էլէ ուղարկէք...: Նա այլ ես չկարողացաւ շարունակել:

— Դէ զնանք, տղերք, — ասաց Բուլքան: Գուանը պատրաստ կանգնած էին թամքած ձիանքը: Բուլքան թուաւ իր «Տեի» վրայ, որ կատաղութեամբ տատանուելով մէջքը կուացրեց, զգալով վրան քսան պուղանոց բեռը, որովհետեւ Բուլքան չափազանց ծանր և հաստամարմին էր:

Մայրն որ տեսաւ՝ իր որդիքն էլ ձի հե-

ծան, վրայ ընկաւ դէպի փոքր որդին, որի գէմքի վրայ աւելի էր մի տեսակ քնքշութիւն երևում. Նրա ասպանդակից բռնեց, թամքիցը կտաւ և, յուսակտուր կերպարանքով, ձեռիցը բաց չէր թողնում: Երկու յաղթանդամ կազակ զգուշութեամբ վերցրին Նրան ու խրճիթը տարան: Բաց երբ բակի դռներից դուրս եկան, նա իր տարիքին անհամապատասխան արագութեամբ, ինչպէս մի սրբնթաց այծեամ, դուրս վագեց դարբասից և աներեակայելի ուժով կանգնեցրեց ձին ու որդիներից. մէկին գրկեց մի տեսակ խելացնոր, անզայ խանդաղատանքով: Նրան դարձեալ տարան:

Երիտասարդ կազակները յուզուած էին ճանապարհ գնում և արտասուքները զսպում էին, վախենալով իրենց հօրից, որը, պակայն, իր կողմից նոյնպէս մի քիչ շփոթուած էր, թէև աշխատում էր ցոյց չտալ: Որը միգամած էր. կանաչը փայլում էր պայծառ. թլուչունները մի տեսակ աններդաշնակ ճըւծում էին: Նրանք բաւական առաջ գնալով՝ ետ նայեցին: Իրենց ազարակը կարծես թէ գետնիտակն էր մտել, իրենց համեստ տնակից միայն երկու ծխաններն էին երևում գետնի երեսին, մէկ էլ միայն ծառերի կտարները, ծառերի, որոնց ճիւղերի վրայով միւռոի պէս մագլցում էին

իրենք. մի միայն հեռաւոր մարգագետինն էր դեռ փառւած առաջներին, մարգագետինը, որի վրայ նայելով՝ կարող էին մտաքերել իրենց կեանքի ամբողջ պատմութիւնը, այն տարիքից տկաած, երբ թաւալ էին գալիս նրա ցօղալից արօտի վրայ, մինչեւ այն տարիքը, երբ սպասում էին այնտեղ սկայօն կազակուհուն, որ, իր երկու առոյզ ու առողջ ոտիկների օգնութեամբ, վեհերկոտ թռչտում էր մարգերի վրայով:

Ահա մի միայն ջրհորի վրայի ձողն է, որ մի սայլի անիւ ծայրիցը կաւած՝ մենաւոր դուրս է ցցւում երկնքի երեսին: Նրանց անց կացած դաշտավայրը հեռուից արդէն սարի պէս է երևում և իր ետեւում ծածկել է ամեն բան: Մնաք բարով և մանկութիւն, և խաղեր, և ամեն բան, և ամեն բան:

❖

Երեք ձիաւորներն էլ ճանապարհը լուռ ու մունջ էին գնում: Ծերունի Տարասն անցած-գնացած օրերի մասին էր մտածում, — նրա աչքի առաջից անցնում էր իր երիտասարդութիւնը, իր տարիքը, այն տարիքը, որի համար միշտ ողբում է կազակը, որ ցանկանում է իր ամբողջ

կեանքը միայն երիտասարդութիւն լինի: Նա
մտածում էր թէ իր առաջուայ ընկերակից-
ներից ում կը հանդիպի Սեղում. մէկ-մէկ հա-
մարում էր թէ որո՞նք մեռել են արգէն և
որո՞նք կենդանի են դեռ ևս: Արտասուքը հե-
զիկ ոլորուեց նրա բրի վրայով, և ալեզարդ
գլուխը վհասութեամբ կախ ընկաւ:

Որդիքն ուրիշ մոքերով էին զբաղուած:
Այժմ իդէպ է մի բան ասել նրա որդոց մասին:

Տասներկու տարեկան հասակում նրանց կիւեի
ճեմարանն էին տուած, որովհետեւ այն ժամա-
նակուայ բոլոր պատուաւոր իշխանաւորները
անհրաժեշտ էին համարում երեխաներին կրթու-
թիւն տալ, թէև այդ կրթութիւնը նրա հա-
մար էր միայն տրւում, որ յետոյ բոլորովին
մոռանան: Դպրոց մոնելու ժամանակ նրանք,
ինչպէս և բոլոր մտնողները, ազատութեան
մէջ մեծացած վայրենի էին: Դպրոցում ար-
դէն սովորաբար մի փոքր տաշւում, կոկուում
էին և մի տեսակ ընդհանուր բան ձեռք բերում,
որ իրար նման էր գարձնում նրանց: Մեծը՝
Սստապը իր ասպարէզը նրանով սկսեց, որ
հենց առաջին տարին ուսումնարանից փախաւ:
Նրան յետ գարձին, սարսափելի կերպով ձադ-
կեցին ու նստեցրին, զիրքը ձեռը տուին: Նա
չորս անդամ իր ալբենարանը գետնի տակ

թաղեց, չորս անդամ էլ անհոգի կերպով նրա
կաշին քերթեցին և նրա համար նորը գնե-
ցին: Բայց անկասկած հինգերորդ անդամ էլ
նոյնը կըկրինէր, թէ որ հայրը հանդիսաւոր
խոստում չանէր, որ՝ եթէ նա Ճեմարանում
բոլոր ուսանողները չսովորի-պրծնի, ամբողջ
քան տարի վանքի փոքրաւոր կըդարձ-
նի նրան և այդ փոքրաւորութեան մէջ կը-
սպանի, և թէ նա է՛լ յախտեան չի տեսնիլ
Զապորոժիէն: Հետաքրքիր է, այս ասումը էր
հենց մի և նոյն Տարաս Բուլլան, որ հայնոյում
էր ամբողջ ուսումնի ու զիտութիւնը և, ինչ-
պէս արդէն գիտենք, որդիներին խորհուրդ էր
տալիս ուսումնով չպարապել: Այդ օրից Սստապն
արտասովոր ջանքով սկսեց ձանձրալի գիրը
ձեռն առնել և շուտով լաւագոյն աշակերտնե-
րի շարքն անցաւ:

Ուսման այն ժամանակուայ տեսակը խիստ
տարբերում էր կեանքի եղանակից: Այդ սքո-
լաստիկ քերականական, ճարտասանական ու
տրամարանական նրբութիւնները բնաւ յա-
րակցութիւն չունէին ժամանակի հետ, երբէք
չէին զործագրում ու կրինուում կեանքի մէջ:
Ոչ մի բանի չէին կարող սէտք գալ նրանց թէ-
կսւզ մինչեւ անդամ նուազ սքոլաստիկական

գիտելիքները։ Նոյն իսկ այն ժամանակուաց գիտնականներն ուրիշներից աւելի տգէտ էին, որովհետեւ կեանքի փորձից բոլորովին հեռացած էին։ Այս ամենը, նմանաւանդ հոգևոր դպրոցի այն հասարակաւուտական կազմակերպութիւնը, երիտասարդ, առողջ, առողջ մարդկանց այն ահազին բազմութիւնը, հարկաւ ուսումնարանից բոլորովին դուրսը գործունէութիւն պէտք է ներշնչէր նրանց։ Մի կողմից վաստ պահպանելը, կամ քաղցով յաճախ պատժելը, միւս կողմից այն բազմաթիւ կարիքները, որ զարթնում են զուարթ, առողջ, ուժեղ պատահում մէջ, այս ամենը միանալով ծնում էր նրանց մէջ այն անվեհներ ձեռնամխութեան ոգին, որ յետոց զարգանում էր Զապորոժիեում։ Դպրոցի քաղցած աշակերանները չափչփում էին Կիևի փողոցները և ստիպում ամենքին, որ զգոյշ լինին։ Շուկայում նատած առևտրական կանաչը անց կացող բուրսակին տեսնում էին թէ չէ, ձեռքերով իրենց կարկանդակները, բլիթներն ու դդմի կորիզները միշտ ծածկում էին, ինչպէս արծիւներն իրենց ձագերին։ Դասապետաշակերտը, որի պարտականութիւնն էր հսկել իր տեսչութեան տակ գտնուած ընկերների վրայ, վարտիքի մէջ ացնպիսի սարսափելի գըր-պաններ էր ունենոմ, որ միջին կարող էր

բաց-բերան առևտրական կնոջ ամբողջ խանութը տեղաւորել։

Այս դպրոցը բոլորովին առանձնացած աշխարհ էր կազմում։ Լեհացի և ռուս ազնուականներից բաղկացած բարձր շրջանի մէջ մանել չէին թողնում նրանց։ Նոյն իսկ նահանգապետ (վոյևոդա) Աղայ Կիսելն էլ, չնայելով ձեմարանին ցոյց տուած իր հովանաւորութեանը, հասարակութեան մէջ նրանց չէր մացնում և հրամացում էր աւելի խիստ պահել նրանց։ Սակայն այդ հրահանգն աւելորդ էր բոլորովին, որովհետեւ տեսուչն ու վարժապետ-աբեղաները ճիպոտ ու մորակ չէին խնայում, և շատ անգամ ձաղկող ծառաները, նրանց հրամանով, այնպէս անխիղճ ճիպոտում էին իրենց դասապետներին, որ սրանք մի քանի շաբաթ վարտիքները քորքորում էին։ Բայց շատերի համար այդ ծեծը բոլորովին ոչինչ էր, շատ շատ՝ պղպեղով համեմած լաւ արագից մի քիչ աւելի բան էր թւում. ուրիշներին վերջապէս խիստ ձանձրացնում էր այդ անդադրում ծեծ ու թակը, և նրանք փախչում էին Զապորոժիէ, եթէ միայն կարողանում էին ձանապարհը գտնել, և եթէ կիսաճանապարհին չէին բռնոտում նրանց։

Օստապ Բուլբան, չնայելով որ մեծ ջանքով

սկսեց տրամաբանութիւն և մինչեւ անգամ աս-
տուածաբանութիւն սովորել, բայց ոչ մի կեր-
պով չէր կարողանում այդ անգութ բրածեծից
ազատուել։ Բնական է, որ այս ամենը պէտք է
նրանց մէջ զարգացնէր մի տեսակ խիստ և հաս-
տատուն բնաւորութիւն, որ կազակների յատ-
կանիշն է եղել միշտ։ Օստապը միշտ ամենալաւ
ընկերներից մէկն էր համարւում։ Քիչ կըպա-
տահէր, որ նա ուրիշներին առաջնորդէր մի
յանդուգն ձեռնարկութեան—որևէ մէկի այցին
կամ բանջարանոցը պրճոկելու. բայց, դրա վո-
խանակ, միշտ նա էր լինում առաջններից մէ-
կը, որոնք ժողովում էին որևէ քաջայննդուգն
բուրսակի գրօշակի տակ, և երբէք, ոչ մի դէպ-
քում իր ընկերներին չէր մատնում։ Ոչ մի մըտ-
րակ ու բրածեծ չէր կարող ստիպել նրան, որ
այդ անի։ Նա խիստ ու ժուժկալ էր ուրիշ ա-
մեն ցանկութիւնների և դրդումների վերա-
բերմամբ, բայց պատերազմից և զբանագուարթ-
խրախճանքից։ զո՞նէ ուրիշ բանի մասին համա-
րեա չէր մտածում երբէք։ Նա պարզասիրտ էր
իր հաւասարների հետ. բարի էր, ինչպիսի բա-
րութիւն որ կարող էր ունենալ մի այդպիսի
բնաւորութեան աէր մարդ, այն էլ այդպիսի
ժամանակներում։ Նա խորը զգացուեց մօր ար-
տաւոքից, և այս էր միացն, որ յուզում էր

նրան և ստիպում գլուխը քաշ անել։

Նրա կրտսեր եղբայր Անդրէն մի փոքր աւելի
վառ և մի տեսակ աւելի զարգացած զգացմունք-
ներ ունէր։ Նա ուսանում էր աւելի սիրով և
առանց ոյժերը լարելու, ինչպէս սովորաբար
ձեռնամուխ է լինում ծանր և զօրեղ բնաւո-
րութեան տէր անձը։ Իր եղբօրից աւելի հնա-
րագէտ էր. շատ անգամ բաւական վտանգաւոր
ձեռնարկութեան առաջնորդ էր հանդիսանում
և երբեմն իր հնարագէտ մոքի շնորհիւ կարո-
ղանում էր պատժից խոյս տալ, մինչդեռ նրա
եղբայր Յաստապը, մի կողմ թողնելով ամենայն
հոգս, վերարկուն հանում և գետնին պառկում
էր ու բնաւ չէր մտածում, որ ներում խնդրի։
Անդրէն նոյնպէս պապակում էր քաջազդործու-
թեան ծարաւով, բայց մի և նոյն ժամանակ նրա
հոգուն մատչելի էին և ուրիշ զգացմունքներ։
Ցամութ տարին նոր էր անց կացրել, որ սի-
րոյ կարիքը կենդանի կերպով բորբոքուեց նրա
մէջ։ Կինն աւելի յանախ սկսեց երեան գոյլ
նրա վառ ցնորքների մէջ. փիլխոփայական հա-
կաճառութիւնները լսելիս՝ ամենայն բոպէ նա
կին էր տեսնում՝ կայտառ, սեաչեայ, քնքուշ
կին։ Նրա աչքի առաջ երեւում էին կնոջ շողջո-
ղուն, առաձգական կուրծքը, ամբողջապէս հո-
լանի կոները։ Նոյն խակ կանացի կայտառ, կու-

սական և միանգամայն ուժեղ անդամների շուրջը կապած զգեստից մի տեսակ անսասելի հեշտասիրութիւն էր շնչում նրա ցնորքների մէջ: Նա պատանեկան խանդավառ հոգու այս շարժումները խնամքով թափցնում էր ընկերներից, որովհետև այն դարում կազակի համար ամօթ ու անպատճութիւն էր, կուր չտեսած, կնոջ ու սիրոյ մասին մտածել: Վերջին տարիներն Անդրէն ընդհանրապէս քիչ անգամ էր առաջնորդ դառնում որևէ խմբի, այլ աւելի մէն-մենակ շրջում էր Կիևի բալի ազգիների մէջ թաղուած որևէ առնձնացած ոլոր-մոլոր փողոցվ, ցածրիկ տների միջին, որոնք հրապուրիչ կերպով դէպի փողոցն էին նայում: Երբեմն մտնում էր նա և արխատոկրատների փողոցը, այժմեան Հին-Կիևի մէջ, ուր ապրում էին մալուս և լեհացի ազնուականները, և աները մի փոքր ինքնահաճ ճաշակով էին շինուած:

Սի անգամ, երբ նա քշուած-վերացած երկար մտիկ էր անում, քիչ մնաց՝ մի լեհացի պանի^{*)} կառք վրայովն անցնի, և սայլորդի նըստարանում նստած՝ զարհուրելի բեղերով կառապանը խարազանով կարգին շրպպացրեց նրան:

^{*)} Լեհացի ազնուական,—տէր, պարոն, ֆ.թ.

Երիտասարդ բուրսակի արիւնը գլխին խփեց. նա կատաղի համարձակութեամբ իր հզօր ձեռքով ետի անուից բռնեց ու կառքը կանգնեցրեց: Բայց կառապանը վախենալով, որ իր արարմունքն իրենէժան չինստիլ, ձիաներին մուրակեց, ձիանքը դուրս խլուեցան, և Անդրէն, որ բարեբախտաբար կարողացել էր ձեռքը ցետ քաշել, երեսի վրայ զետին շրմիաց՝ ուղիղ ցեխի մէջ: Մի լիահնչիւն, ներդաշնակ ծիծաղ լառեց նրա գլխի վերևում: Աչքը բարձրացրեց նա և տեսաւ պատուհանի առաջ կանգնած մի սեւահեր կին, որ գեղեցիկ էր՝ չդիտեմ, ինչի նման, սեաչեայ և սպիտակ՝ ինչպէս արեգակի վաղորդեան կարմրութիւնից շառագունած ձիւնը: Գեղեցկուհին ծիծաղում էր ի բոլոր սրտէ, և ծիծաղը մի տեսակ փայլուն ոյժ էր տալիս նրա շացուցիչ գեղեցկութեանը: Անդրէն շշկուած մնաց. նա ինքն իրեն բոլորովին կորցրած՝ նայում էր այդ կնոջը, մտամոլոր սրբելով երեսի ցեխը, որի մէջ աւելի ևս շաղախուեց: Ո՞վ էր արգեօք այդ գեղեցկուհին: Նա փորձեց իմանալ տանը ծառայող մարդկանցից, որոնք, ձուս հազնուած, խմբով կանգնած էին բակի դռանը ու շրջապատել մի երիտասարդ փանդիու ածողի. բայց ծառաները նրա ցեխուած

ուելսը որ տեսան, քրթիջ բարձրացրին և նրան
պատասխանի արժանի չհամարեցին: Վերջա-
պէս նա իմացաւ, որ դա Կոմոյի՝ ժամանա-
կաւորապէս Կիւ եկած՝ վրեւողայի աղջին է:
Հետեւեալ գիշերը հենց, բուրսակներին միայն
յատուկ յանդգնութեամբ, նա ցանկապատի վրա-
ցով ներս մտաւ այսին, բարձրացաւ ծառը,
որի ճիւղերը, չորս կողմը տարածուած լինելով,
հենց տան կառուրի վրայ էին իջնում. ծառից վէր-
եկաւ տանիքի վրայ և բուխարու ծինելոցի
միջով ներս սողաց ուղղակի գեղեցկուհու
նաջարանը, ուր նա այդ ժամանակ, ճրագի ա-
ռաջ նստած, ականջներից թանգաղին գինդե-
րըն էր հանում:

Գեղեցիկ լեհացի աղջին իր առջե որ մի
անձանօթ մարդու չտեսաւ, այնպէս վախեցաւ,
որ մի խօսք անզամ ասել չկարողացաւ. բացց
երբ տեսաւ, որ բուրսակն ակնկոր կանգնած
էր մնացել և վախիցը չէր համարձակում տե-
ղից շարժուել, երբ իմացաւ, որ նա մի և նոյն
տղան է, որ իր աչքի առաջ փողոցում գետ-
նին զրխկաց, ծիծաղն էլլ չկարողացաւ բռնել.
մանաւանդ որ Անդրէի գէմքի վրայ ոչ մի զար-
հուրելի բան չկար,—նա շատ սիրունատես տը-
ղայ էր: Գեղեցկուհին ի սրտէ ծիծաղում էր
և երկար զուարձանում նրանով: Նա՝ իբրև լե-

հացի կին՝ մի թեթևաոլիկ աղջիկ էր, բայց
նրա աչքերը, հրաշալի թափանցիկ աչ-
քերը մշանջենաւորութեան նման երկար հա-
յեցք էին ձգում: Բուրսակը չէր կարողանում
տեղից շարժուել և շուարած, տեղումը մե-
խուած էր մնացել, երբ վրեւողայի աղջիկը
համարձակ մօտեցաւ նրան, իր շողովուն ա-
պարօշը նրա զլիսին դրեց, շրթունքներից կախ
արեց զինդերը և վրան ձգեց իր՝ ոսկեկար գը-
րասաններով զարդարուն մարմաշէ թափանցիկ
կրծկալը: Նա զարդարում էր բուրսակին և նրա
զագար ու մի խաղ էր խաղում մանկա-
վան արձակ համարձակութեամբ, որ յատուկ է
կամ արձակ համարձակութեամբ, որ յատուկ է
թեթևամիտ լեհացի կանանց, որը և աւելի
մեծ շփոթութեան մէջ ձգեց խեղճ տղացին:
Վերջինս ծիծաղելի սրատէր էր ներկայաց-
նում, բերանաբաց և անշարժ նրա շացուցիչ
աչքերին նայելով:

Պոան մօտ մի թրիսկոց լսուեցաւ. թրիսկո-
ց գեղեցկուհու մէջ երկիւղ զարթեցրեց, և նա
հրամայեց բուրսակին, որ իր մահմակալի տակ
պահուի: Բայց հենց որ վրդովմունքն անցաւ,
ձայն տուեց իր թաթար գերի նաժշտին և հը-
րամայեց, որ զգուշութեամբ պարտէզ տանի
նրան և այնտեղից ցանկապատի վրայով ճա-
նապարհ դնի: Բայց մեր բուրսակն այս ան-

դամ այնքան բախտաւոր կերպով անց չկացաւ, —
զարթնած պահապանը կարգին շրմիացրեց նը-
րա ոտներին, և հաւաքուած սպասաւորները
երկար արդէն ծեծում էին նրան փողոցում,
մինչեւ որ արագընթաց ոտները փրկեցին նրան:

Սրանից յետոյ տան մօտովի անցնելը խխառ
երկիւղալի էր, որովհետեւ վոյւղայի սպասա-
ւորները շատ բազմաթիւ էին: Նա կաթոլի-
կաց եկեղեցում մի անգամ էլ տեսաւ գեղեցկու-
հուն: Սա նկատեց նրան և շատ համելի կեր-
պով ժամաց նրան՝ իբրև հին ծանօթի: Նա մի
անգամ էլ տեսաւ այդ աղջկան, և ապա կով-
նոյի վոյւղան շուտով մեկնեցաւ, ու գեղեցիկ,
հրապուրիչ թխիկի տեղը՝ պատուհաններից ինչ-
որ հասուիկ դէմք էր դուրս նայում:

Ահա ինչի մասին էր մասձում Անդրէն՝
դլուիը կախ արած և աչքերը ձիու բաշին
գցած:

Մինչայս-մինչայն՝ տափաստանը վաղուց
արդէն նրանց բոլորին իր կանաչ գիրին էր
ընդունել և բարձր խոտը ըրջապատել, ծած-
կել էր նրանց, և միայն կազակների մե դդակ-
ներն էին մերթ-ընդ-մերթ երեսում խոտի մէջ:

— Դէ՛, զէ՛, ի՞նչ էք այդպէս լոռել,
ասաց վերջապէս բուլբան, սթափուելով իր
մասձունքներից: — Ճնոց իմանաս, մե ու սուգ

մասձ լինինք: Դէ՛ շո՛ւս, շո՛ւս. բոլոր մըտ-
մասուքներդ մի հետով քամուն տուեք: Իերան-
ներդ առեք չիբուխներդ, ու ծխնկք. ձիաններին
ապանդակիք ու այնպէս թռչենք, որ թռչու-
նըն էլ իր թեւով ետեներիցս հասնել չկարո-
ղանաց:

Եւ կազակները, ձիանների մէջքին մի
փոքր առաջ թեքուելով, կորան խոտի մէջ:

Այլ ևս մե զգակներն էլ կարելի չէր տես-
նել. մի միայն ճմբուած խոտի կաչծակի նման
արագաթուիչ ակօսն էր ցոյց տալիս նրանց
արշաւը:

Արեգակը վաղուց դուրս էր նայում պար-
զած երկնքի երեսից և իր կենդանարար, չեր-
մացուցիչ լոյսը ափուում տափաստանի վրայ:
Մի ակնթարթում ցնզուեց կազակների հոգու-
բոլոր նսեմն ու թմբիրը: Նրանց սրտերը
թրթռացին, ճիացին ինչպէս թռչուններ:

Քանի առաջ էին գնում, տափաստանն
աւելի ու աւելի զեղեցկանում էր: Այն ժա-
մանակ ամբողջ հարաւը, այն ամբողջ տարա-
ծութիւնը, որ կազմում է այժմեան նովո-Թո-
սիան (Նոր-Թուսիա), մինչեւ նոյն իսկ Սև ծովը,
կուսական կանաչ անապատ էր: Արօրն երբէք չէր
անց կացել վայրի բոյսերի անսահման ալիքների
միջով: Մի միայն ձիանքն էին, որ՝ արօտի մէջ

ծածկուած ինչպէս անտառում՝ կոխոտում էին խոտերը; Բնութեան մէջ ոչ մի բան չէր կարող դրանցից աւելի սիրուն լինել; Երկրի ամբողջ մակերեսով մի կանաչ-ոսկեգոյն ովկիան էր ներկայացնում, որի վրայ շաղ էին ընկած միլիոնաւոր զոցնդոցն ծաղիկներ; Խոսի բարակ ու բարձր ծզօնների միջով աչքի էր ընկնում երկնագոյն, կապոյտ ու բաց մանիշակագոյն ծտաճքը. դեղին մոշենին վեր էր ցցում իր բրդաձև կատարը. սպիտակ առուոյտն իր հովանոցաձև գդակներով երփներին փայլում էր. Աստուած զիտէ ո'րաեղից եկած ցորենն իր հասկն էր լցնում խիտ արօտի մէջ; Դրանց բարակ արմատների մօտով, վզերը երկարացրած, դէս ու դէն էին սորում կաքաւները; Օդը լցուած էր հազար ու մի թուչունների ծլվոցով; Բազէները, թեւերը փուած և աչքերը խոտին սեեռած անշարժ, ահազին բազմութեամբ ամպի նման բոնել էին երկնքի երեսը; Մի կողմաւմ վայրենի սագերի շարժուղ երամի ձայնը արձագանդ էր տալիս, Աստուած զիտէ, ո'ր հեռաւոր լճի երեսին: Խոտի միջից, թեւերը համաչափ ճօճէլով վեր էր բարձրանում ուրուրը և շքեղութեամբ լողում կապուտակ ալիքների մէջ; Հրէն կորանա բարձրութեան մէջ և սեին է տալիս ինչ-

պէս մի կէտ: Հրէն թեւերը շուռ տուեց նա, շուռ եկաւ և շողշողաց արեւի դիմաց... Գրո՞ղի տարած տափաստան, ի՞նչ դեղեցիկ ես: Մեր ճանապարհորդները մի քանի բուէ միայն կանգ էին առնում ճաշելու համար. այդժամանակ նրանց հետ գնացող տասը կազմից կազմուած զօրաբաժինը ձիուց իջնում էր և բաց անում արազով լցրած փայտէ սրուակներն ու դդմակները, որ ամանի տեղ էին գործ ածում; Միայն հաց ու ճարպ կամ կորժ էին ուսում և մի մի բաժակ միայն խմում լոկ կազմուրուելու համար, որովհետեւ Տարաս Բուլբան ճանապարհին երբէք թոյլ չէր տալիս աւելի խմելն, և մինչեւ երեկոյ շարունակում էին ճանապարհը:

Երեկոյեան ամբողջ տափաստանը բոլորովին փոխում էր: Արեգակի վերջին պայծառ արտափայլմունքը սփուռում էր նրա ամբողջ գոյնզգոյն տարածութեան վրայ, որ հետզիետէ մթնում էր, այնպէս որ երեսում էր թէ ինչպէս սոսուերը սահում էր նրանց վրայով, և նրանք մուգ կանաչ գոյն էին ստանում: Գոլորշիներն աւելի թանձր էին բարձրանում. ամեն մի ծաղիկ, ամեն մի խոտիկ բուրմունք էր արձակում, և ամբողջ տափաստանը ծխում էր անուշահոսութեան ծովի մէջ: Մութ կա-

պոյտ երկնքի երեսին, ասես, հսկայական վրբ-
ձինով վարդագոյն-ոսկեղէն շերտեր էին քաշած.
թե՛ծև, թափանցիկ ամպերը կտոր-կտոր սպի-
տակին էին տալի մէկ-մէկ, և ամենաթարմ, հր-
րասպուրիչ հովիկը, ծովի ալիքների նման, հազիւ-
ծածանում էր արօտի երես ու մեղմիկ դիպչում
մարդու թշերի: Ամբողջ ցերեկը հնչող երաժշտու-
թիւնը խաղաղում էր և ուրիշ երաժշտութեան-
տեղի տալիս: Խառուտիկ սուլող առնչուները որ-
ջերից դուրս էին սոլում, ետի թաթիկների վրայ:
իանցնում և իրենց սուլոցով տափաստանը
լցնում: Ճարտաների ճրճոցն աւելի էր լսելի-
լինում: Երբեմն որևէ առանձնացած լծից
լսում էր կարապի ճիչը և, արծաթի պէս,
արձագանդ տալիս օդի մէջ: Ճանապարհորդ-
ները դաշտերի միջին կանգ առնելով՝ գիշե-
րելու տեղ էին ընտրում. կրակ էին անում
և վրան դնում կաթսան, որի մէջ իրենց հա-
մար կերակուր էին եփում: Նոզին դուրս էր
գալիս և օդի մէջ թեք բարձրանում: Ընթրիք-
անելոց յետոյ՝ արօտի մէջ էին թողնում ճի-
անքը՝ ոտները կապած, և իրենք պառկում-
էին քնելու: Նրանք ձգում էին վերարկուների
վրայ: Վերևից գիշերային աստղերն էին ուղ-
ղակի նրանց վրայ նայում: Նրանք իրենց
ականջով լսում էին արօտը լցնող միջատների-

անհուն բազմութեանը: Դրանց չըթկոցը,
սուլոցն ու կոռոցը՝ բոլորը գիշերուայ մէջ
բարձր հնչում էր, զիշերային թարմ օդի մէջ
մարդում և մարդուս ականջին ներդաշնակ
հասնում: Եթէ ուղեսորներից մէկն ու մէկը տե-
ղից վեր էր կինում, մի առժամանակ կանգնում,
տափաստանը նրան՝ լուսատու ճիճունեցի փայ-
լուն կայծերով սփոռուած էր երեսում: Երբեմն
գիշերային երկինքը տեղ-տեղ լուսաւորում էր
մարդագետինների վրայ և զետերի ափերին
կրակ տուած. չոր եղեգնուտի պայծառ-կար-
մրագոյն բոցով, և դէպի հիւսիս թռչող կա-
րապների մութ երամը լուսաւորում էր յան-
կարծ արծաթի-վարդի գոյնով, և այն ժամա-
նակ թւում էր թէ կարմիր թաշկինակներ էին
թռչում մութ երկնքի երեսով:

Ճանապարհորդները գնում էին առանց
որևէ արկածի: Ոչ մի տեղ ծառեր չէին պատա-
հում նրանց. միշտ մի և նոյն անվերջ, մի և նոյն
ազատ-արձակ, գեղեցիկ տափաստանն էր: Ժա-
մանակ-ժամանակ միայն մի կողմում կապուաին
էին տալիս Ննեպրի ափերով ձգուած հեռաւոր
անտառի կատարները: Մի անգամ միայն Տա-
րասը որդոցը մատով ցոյց տուեց հեռուն
խոտի մէջ սկին տուող մի կէտ, ասելով. «Նա-
յէք, տղերք, հրէն արշաւում է թաթարը:»

Փոքրիկ, բեղաւոր դլսիկը հեռուից ուղղակի նրանց վրայ տնկեց իր նեղիկ աչքերը, որսկան շան պէս օդը հոսուեց և այծեամի նման կորաւ, անյայտացաւ, տեսներով, որ կազակները տասներեք հոգի էին:

Հասպա, ձե՛ղ տեսնե՞մ, տղերք, փորձեցէք թաթարի ետևից հասնել... Լաւն այն է, որ իսկի էլ չփորձէք, ձեր օրումը չէք բռնիլ նրան. Նրա ձին իմ «Գեից» արագավազ է:

Բայց և այնպէս՝ բուլբուն, երկիւղ կրելով որեէտ տեղ թաքցրած դարանից, զգուշութիւն բանեցրեց: Նրանք ձիանքը քշեցին դէպի մի փոքր գետակ, որ Թաթարկա էր կոչում և թափուում է Դնեպրի մէջ, իրենց ձիաններով ջրի մէջ ընկան և երկար լողում էին գետի միջով, որ իրենց հետքը կորցնեն, և ափ դուրս գալուց յետոյ միայն նորից շարունակեցին ճանապարհը:

Սրանից երեք օր յետոյ արդէն հեռու չեն իրենց մտադրած տեղից: Օդը յանկարծ զովացաւ. Նրանք զգացին, որ Դնեպրը մօտիկ է: Ահա շողշողում է նա հեռուում և մութշերտի նման բաժանուեց հորիզոնից: Նա իր սառը ալիքներից զով էր փչում և փուռում էր աւելի ու աւելի մօտիկ, և վերջապէս երկրի ամբողջ մակերեսովթի կէսը բռնեց: Աս

Դնեպրի այն տեղն էր, ուր գետը, մինչ այդ խութերով սեղմուած, վերջապէս ազատութիւն էր գտնում և, ծովի պէս աղմկացոց, ազատ-արձակ դուրս էր գալիս ափերից. ուր նրա մէջտեղն ընկած կղզիները նրան էլ աւելի հեռու էին դուրս մզում ափերից, և նրա ալիքները հարթ գետնի երեսին փուռում, տարածում էին, չպատահելով ոչ քարափների և ոչ բարձրութիւնների:

Կազակները ձիուց վիր եկան, լասոի վրայ ելան և երեք ժամ լաստով գնալուց յետոյ՝ արդէն Խորտիցա կղզու ափերին էին, ուր գտնուում էր այդ ժամանակ Սեչը, որ այնքան շուտ-շուտ փոփոխում էր իր բնակավայրը:

Խուսն ըազմութիւնը ափին հայնոյելով կըռ-ռում էր լաստավարների հետ: Կազակները ձիանքը կարգի բերեցին. Տարասը շտկուեց, տղամարդի պէս խրոխտ կանգնեց, գօտին աւելի ձիգ կապեց և ձեռքով հապատ-հպարտ սղալեց բեղերը: Նրա երիտասարդ որդիքը նոյնակա մի տեսակ երկիւղով և անորոշ զրւարձութեամբ ոտից դլուխ մտիկ տուին իրենց, և բոլորը միասին մտան արուարձանը, որ Սեչից կէս վերատ հեռու էր գտնուում: Ներս մոնելու բոպէին նրանց ականջը խլացրին ցիսուն դարբնի կոաններ, որ խփում էին գետ-

Նի մէջ փորուած և չիմով ծածկուած քսանհինդ դարբնոցներում։ Ուժեղ կաշեգործները նստած էին փողոցում, սրահների ծածկի տակ, և իրենց ջլապինդ ձեռքերով եղան կաշի էին տրորում։ Առևտրականները տաղաւարների տակ նստել էին՝ կայծքարերի և հրահանների ու վառդի կուտակներն առաջներին։ Հայը բացել ու կախ էր արել թանգաղին թաշինակները։ թաթարը շամփուրների վրայ լուլաքեարաբն էր պտտեցնում։ ջնուտը, վիզը ձգած, արաղ էր հանում տակառից։ Բայց նրանց առաջին հանդիպողը մի զապորոժցի էր, որ ձեռն ու սար պարզած՝ քնած էր հենց ճանապարհի մէջտեղում։ Տարաս Բուլբան չկարողացաւ կանդ չառնել և սրտի բերկութեամբ մտիկ անել նրան։

— 0'հ, ի՞նչ փառաւոր ձգուել է։ Փա՛հ, փա՛հ, փա՛հ, ի՞նչ փարթամ պատիերք է, — ասաց նա, ձին կանգնեցնելով։

Իրաւ որ դա մի բաւական խրոխտ պատկեր էր։ Զապորոժին առիւծի նման մեկնուել էր ճանապարհի վրայ։ Նա հպարտութեամբ գէն էր դցած քեաքիւլը, որ գեանի վրայ փոռուել, կէս արշին տեղ էր բռնել։ Ալ գոյնի թանգաղին մահուդ շալուարը կպրով կեղտոսած էր, որ ցոյց տայ իր կատարեալ արհամարհանքը զէպի այդ շալուարը։

Բուլբան, զուարձութեամբ մտիկ անելուց յետոյ, առաջ անցաւ նեղ փողոցի միջով։ Փողոցը բռնուած էր արհեստաւորներով, որոնք այդուղ էին իրենց արհեստը բանեցնում, և ամեն աղդի մարդկանցով, որոնք լցւում էին Անչի այդ արուարձանոցի և հազինում ու կերակրում էր Անչը, որը քէֆ անել և հրացան արձակել միայն դիտեր։

Անչապէս արուարձանն անց կացան և տեսան մի քանի այստեղ-այստեղ ընկած կուրենան, որոնք ծածկուած էին չիմով կամ, թաթարական ձեռվ, թաշիքով։ Մի քանիսի վրայ դրած էին թնդանօթներ։ Ոչ մի տեղ չէին երևում ոչ յանկապատ, և ոչ այն ցածրիկ տնակները՝ դռան առաջ փայտէ ցածրիկ սիւների վրայ շինած ծածկերով, որ կային արուարձանում։ Փոքրիկ թումբը և կտրտած ծառեանում։ Փոքրիկ թումբը առաջական պատճշը, որ բոլորովին անրով ամրացրած պատճշը էին մնացած, խիստ անհողութիւն պահպան էին մնացած, խիստ անհողութիւն էին ցոյց տալիս... Մի քանի յաղթանդաւ էին ցոյց տալիս... Մի քանի յաղթանդաւ զապորոժցի, չիբուխն ատամների մէջ, ուղիղ զապորոժցի, չիբուխն ատամների մէջ, ուղիղ զապորոժցի, չիբուխն ատամների մէջ, ուղիղ զապորոշին մտիկ արին նրանց և տեղաբերութեամբ մտիկ արին նրանց և տեղաբերութեամբ մտիկ արին նրանց և տեղաբերութեամբ մտիկ արին նրանց միջով, զգուշութեամբ անց կացաւ նրանց միջով,

ասելով. «Բարո՛վ ձեզ, պաներ»; — «Աստուծու
բարին էլ ձեզ», պատասխանեցին զապորժցի-
ները: Հինգ վերստ տարածութեան վրայ ցըիւ
էր եկել ժողովրդի բազմութիւնը: Այդ բազ-
մութիւնը այստեղ-այնտեղ հաւաքուել, փոքր
խմբեր էր կազմել: — Այ, որն է Սէջը. ահա
այն օջախը, որտեղից դուրս են թռչում այն
բոլոր առիւծի նման հպարտ ու հզօր մար-
դիկը. ահա որտեղից է ազատութիւն և կա-
զակութիւն սփռում ամբողջ Ուկրայնացի
երեսին:

Ուղեռները դուրս եկան մի ընդարձակ
հրապարակ, ուր սովորաբար լինում էր
խորհուրդը (ռազմն): Մի շուռ տուած մեծ-
տակառի վրայ առանց շապկի նստած էր մի զողո-
րոժցի. նա շապկիլ ձեռին բոնած՝ ծանր-ծանր
կարկատում էր ծակուած տեղերը: Նրանց ճա-
նապարհն էլի կարեց երաժիշտների մի ամ-
բողջ խումբ, որի մէջտեղում պար էր
գալիս մի երիտասարդ զապորժցի, դդակն
ականջի վրայ կոտրած և ձեռները վեր բար-
ձրացրած: Նա միայն գոռում էր. «Նախով
ածէք, սազանդարներ: Արագ ածա, Թո՛մաս.
արագ մի խնայիլ ուղղափառ քրիստոնեա-
ների համար»: Եւ Թոմասը, որի մէկ աչքի
տակը ջարդած էր, ամեն մօտ եկողի համար մի մի

ահազին թաս չափում էր անհաշիւ: Երիտա-
սարդ զապորժցու այս ու այն կողմում չորս
ծերեր իրենց ոտներով բաւական մանր աշխա-
տանքի վրայ էին. քամու պէս մի կողմի վրայ
թռչում, ընկնում էին գրեթէ երաժիշտների
գլուխ վրայ և մէկ էլյանկարծ ցածանալով՝ սրա-
նում էին կզած և իրենց արծաթէ պայտե-
րով արագ ու պինդ խփում էին հոծ կոխկըռ-
տած գետնին: Գետինը չորս բոլորում խուլ
թնդում էր, և օդի մէջ լաւում էր էր միայն՝
տրա-տա-տա', տրա-տա-տա': Քանի գնում՝
բազմութիւնը աճում էր. պարողներին միա-
նում էին և ուրիշները, և ահա գրեթէ ամ-
բողջ հրապարակը ծածկուեց կիզած պարող
բողջ հրապարակը ծածկուեց կիզած պարող
զապորժցիներով: Այս տեսարանը մի խիստ յա-
գաղաղութեաներով: Այս տեսարանը մի խիստ յա-
գաղաղիչ-գրաւիչ բան ունէր իր մէջ: Զէր կարելի
առանց ի բոլոր սրտէ զգացուելու տեսնել թէ
ինչպէս չբոլոր բազմութիւնը կոտրածում էր
ամենաազատ, ամենակատաղի պարը, որ-
պիսին տեսել է երեւէ աշխարհը, և որը իր
հզօր հնարողների անունով «կազաչկա» է
կոչում:

Տարաս Բուլյան աղաղակեց անհամբերու-
թիւնից և զայրանում էր, որ ձին, որի վրայ
նստած էր ինքը, արգելք էր լինում որ
ինքն էլ մէջ ընկնի, պարի: Ոմանք չափազանց

ծիծաղելի էին, որ ոտներով այնպէս լրջօրէն ու վեհապանձ աշխատում՝ էին։ Խիստ զառամածները, թիկնած սիւնին, որից Սեչում սովորաբար կապում էին յանցաւորին, ոտները գետնին էին դոփում և կոխ տալիս։ Ինչ տեսակ աղաղակ ու երգ ասես, որ կարող էն մարդուս գլխովն անցնել զբօսաղուարթ ուրախութեան բոպէին, այսոեղ հնչում էին ազատ։

Տարասը շուտով շատ ծանօթ անձերի հանդիպեց։ Յատապն ու Անդրէն այսպիսի ողջոյններ էին միայն լսում։ «Ա՛, այդ դո՞ւ ես, Պեչերիցա։ Բարով, Կողոլուսպ։ Այդ ո՞ր քամին քեզ այսոեղ բերեց, Տարաս։ Դո՞ւ ինչպէս այստեղ եկար, Դոլոսո։ Բարով, Զաստեժկա։ Խակի մաքովս կ'անցնէր, որ քեզ այսոեղ տեսնեմ, Ուեմեն։ Եւ արեւելեան Ուուսիայի ամբողջ քէֆասէր աշխարհից ժողովուած հսկաները պաշպաշում էին իրար, և ահա հարց ու փորձեր էին, որ իրար վրայ թափուեցան։ «Ո՞նց է Կասեանը, Բորոդաւկա՞ն ոնց, Կորպէ՞րը ոնց։ Պիդսի՞տոկը ոնց», և Տարաս Բուլբան պատասխան էր առնում միայն, թէ՝ Բորոդաւկային կախել են Տոլոսանում։ Կոլոպերի կաշին են քերթել Կիզիրմենի մօտ։ Պիդսիտովի գլուխը տակառի մէջ աղն են դրել և Սամբոլ ուղարկել։ Գլու-

Խոր քաշ գցեց ծերունի Բուլբան ու մոսխոն ասաց։ «Ավսո՞ս, լաւ կազակ էին»։

Պ.

Արդէն մօտ մի շաբաթ էր, որ Տարաս Բուլբան և իր որդիկը Սեչում էին ապրում։ Օստապըն ու Անդրէն քիչ էին կարողանում զինուորական կրթութեամբ պարապել, չնայելով որ հայրը յատկապէս խնդրել էր փորձուած ու հմտած ձիավարների, որ վարժեցնեն նրանց։ Ընդհանրապէս կարելի է ասել, որ Զապորօժիկում ոչ մի տեսական ուսումնասիրութեան կամ ընդհանուր կանոններ չկային. այնուղ բոլոր երիտասարդութիւնը դասախրաբակում ու կրթում էր միայն փորձով, նոյն իսկ կուիների կրակ ու բոցի մէջ, որոնք այդ պատճառով էլ գրեթէ անընդհատ էին լինում։ Կոիւ չեղած ժամանակները կազակները տաղոտկալի էին համարում որևէ կարգ ու կանոն սովորելով պարապել։ Նատ քչերն էին օրինակելի զինախաղերով պարապում։ Նրանք իրենց բոլոր ժամանակը նուիրում էին քէֆի, որ յատկանիշն է հոգեկան ազատութեան բաց-արձակութեան։ Ամբողջ Սեչը մի անսովոր երեսոյթ էր ներկայացնում։ Դա մի անընդհատ խնջոյք, մի պարահանդէս

էր, որ սկսուած էր աղմկով և իր Տայրը կորցրած էր: Մի քանիսն արհեստներով էին պարապում: ուրիշները խանութ էին պահում և առատուր անում: շատ մասը առաւօտից մինչև երեկոյ քէֆ էին անում, եթէ միայն գլուպաններումը զբնզբնգում էր կարողութիւնը, և եթէ ձեռք բերած բարիքը մանրավաճառների ու գինեվաճառների ձեռքը չէր անցել դեռ ևս: Այդ ընդհանուր խնջոյքն իր մէջ մի տեսակ կախարդիչ բան ունէր: Դա վշտից խմող գինարբուների մի ժողով չէր. դա սոսկ ուրախութեան մի կատաղի խրախճանք էր: Ամեն մարդ, որ այստեղ էր գալիս, մոռացութեան էր տալիս ու թողնում: ինչ որ մինչ այն հետաքրքրում էր իրեն: Նա, կարելի է տակը թքում էր իր ամբողջ անցեալի վրայ և ֆանտիկոսի մոլեռանդութեամբ անձնատուր լինում ազատութեան և իրեն նմանների ընկերութեանը, որոնք ոչ ազգական ունէին, ոչ տուն, ոչ տեղ, բայց ազատ երկնքից և իրենց սրախ ուրած մշտական խնջոյքից: Դրանից էր առաջանում այն կատաղի ուրախ-զուարթութիւնը, որ ոչ մի ուրիշ ազբերից չէր կարող բղանի: Խմբով գետնին պառկած բազմութեան բերանից լսուած զբոցներն ու զուարձախօսութիւններն այնքան ծիծաղաշարժ էին լինում և այնպիսի խորը

ծաղրածութեամբ լի, որ մարդ ալետք է միայն զապորոցու պաղարիւն կերպարանքն ունենար, որ իբոլոր սրաէ ծիծաղէր: Դա արբեցողներով լցուած մի զինեատւն չէր, ուր մարդս, ուրախութեան մոացլ խեղաթիւրուած զծագրութեամբ, անմտաբար մոռացութեան է տալիս իրեն. դա զպրոցական ընկերների մի մուերիւմ շըջան էր: Տարբերութիւնն այն էր միայն, որ փոխանակ նաուելու և զբացոցը *) ձեռին՝ վարժապետի տուած տափակ, անբովանձեռին՝ վարժապետի տուած տափակ, անբովանզակ դասերը լսելու, նրանք հինգ հազար հոգակ զասերը լսելու, նրանք հինգ հազար հոգակ զասերը լսելու և զբացոցը ասպասակ էին սըփում. մարգագետնի փոխանակ, ուր գնասակ էին ուում, ունեին անպաշտպան, անխնայթուագուստի մոլեռանդութեամբ անձնատուր լինում ազատութեան և իրեն նմանների ընկերութեան այն հաշարժ և գինահայեաց: Տարբերութիւնն այն էր, որ, զպրոցում նրանց միացնող բոնի կամքի, ոչ ամանակ մի փոքրիկ փափս էին տալիս, որագլնթաց ոսների հունարն էր ցոյց տալիս, և թիւրքն՝ իր կանաչ չալճայով՝ նայում էր անշարժ և գինահայեաց: Տարբերութիւնն այն էր, որ փոխանակ փոքրիկ փափս էին իրենց հօրն ու մօրը և կամքով թողնում էին իրենց հօրն ու մօրը և հայրական տնից փախչում: այստեղ նրանք

*) Հին ժամանակ աշակերտների ձեռքը կարդալու ժամանակ մի փոքրիկ փափս էին տալիս, որ կարգալիս փափսով բառերը ցոյց տան և մատով գիրքը չկեղասունեն: Այդ փափսը կոչում էր զբացոց կամքը զբոց: Ծ. թ.

էին միայն լինում, որոնց վզին արդէն փաթաթուել էր պարանը և որոնք տժգոյն մահուան փոխանակ՝ կեանք էին տեսել, և կեանքն իր բոլոր ամսձարձակ զուարձութեամբ. այսուղ նրանք էին միայն լինում, որոնք ազնիւ սովորութեամբ գրպաններում մի կոպէկ անգամ չէին կարող պահել. այսուղ նրանք էին միայն լինում, որոնք մինչեւ Սեչ զալը մի ոսկին մեծ հարստութիւն էին համարում, որոնց գրպաննը, կոսպալառու ջնուզների շնորհեւ, կարելի էր շուռ տալ՝ առանց ամենեին երկիւղ տանելու թէ մի բան վայր կ'ընկնի: Այսուղ էին այն բոլոր բուրսակները, որ չէին դիմացել ձեմարանի ճիպուններին, և որոնք գորոցից մի «այբի» կատր անգամ չէին զուրս բերել. բայց գրանց հետ միասին այսուղ կային և այնպիսինները, որ գիտէին թէ ինչ բան է Հորացիոսը, Կիկերոննը *) և Հոռմայեցոց հասարակավետութիւնը: Այսուղ կային շատ կրթուած, փորձառու ասպատակաւորներ, որոնք այսպէս մտածելու ազնիւ համոզմունքն ունէին թէ որտեղ կ'ուզի պատերազմ մղեն, հաշիւը մէկ է, միայն թէ պատերազմն, որովհետեւ ազնիւ մարդու համար անգայել է առանց կոռուի մը-

*) Հոռմայեցի երեւլի ձարտասան (107—43 թ. Քր. առաջ): Ծ. թ.

նալ: Այսուղ կային և շատ սպաներ լեհական զօրքերից: Սակայն որ ազգից մարդիկ չկացին այսուղ: Այս տարօրինակ հասարակավետութիւնը հենց այն ժամանակուայ ուահանջն էր: Պատերազմական կեանքի, ուկի թասերի, թանգագին կերպանների, զուկանների և ուշալների **) սիրահարները ամեն ժամանակ կարող էին իրենց համար գործ գանել այսուղ: Մի միայն կանանց երկրպագուները ոչինչ չէին կարող գտնել այսուղ, որովհետեւ կին ասածը Սեչի արուարձանում անգամ չէր համարձակուիլ երեալ:

Օստապին ու Անդրէին շատ օտարուափ իժուաց, որ իրենց այնակեղ եղած ժամանակը հենց՝ ժողովրդի անհուն բազմութիւն էր գալիս Սեչ, և մէկն էլ է չէր հարցնում նրանց թէ ո՛րտեղից են գալիս, ո՛վքեր են, ինչ է նրանց անունը: Այդ մարդիկն այսուղ այնպէս էին գալիս, որ հենց իմանաս իրենց սեփական տունը ետ գառնում լինէին, որից մի ժամ առաջ էին զուրս ե՛կել: Եկողը միայն ներկայանում էր կոշեոցին **)

*) Դուկատ-ոսկի դրամ. Ուշալ-արձաթի զրամ Խոպանիացում, Պարսկաստանում և ուրիշ երկրներում: Ծ. թ.

**) Կոշեոց-կազակների զօրքի զլխաւոր զօրավարը, որին խորհուրդն (ռազման) էր ընտրում: Խակ զօրքի մի մասի զօրավարը կոչւում էր ատաման: Ծ. թ.

որ սովորաբար ասում էր. «Յարով եկար. Քրիստոսին հաւատում ես»: — «Հաւատում եմ», պատասխանում էր եկողը: «Սուրբ երրորդութեանն էլ հաւատում ես»: — «Հաւատում եմ»: — «Ճամ էլ զնուց ես»: — «Գնուց եմ»: — «Հապամ մի երեսիդ խաչ հանիր, տեսնեմ»: Եկողը խաչակնքում էր երեսին: «Ի՞ւ լսւ», պատասխանում էր կոշտոյը, «ո՛ր կուրենն էլ ուզուց ես՝ զնա»: Սրբանով վերջանում էր ամբողջ ծիսակատարութիւնը: Եւ բոլոր Սեչն ազօթում էր մի եկեղեցում և մինչեւ արեան վերջին կաթիլը պատրաստ էր այդ եկեղեցին պաշտպանելու, թէ պասի ու պահեցողութեան անունն անգամ լրսել չէր ուզում: Միայն սաստիկ շահասիրութիւնից զրգուած ջնուդները, հայերը և թաժաժարներն էին համարձակում Սեչի արուարձաններում ապրել և առուտուր անել, որովհետեւ զապրոցիները սովոր չէին երբէք սակարկութիւն անել, այլ ինչքան փող որ ձեւ քները հանում էր գրպաններից, այնքան էլ վճարում էին: Սակայն այս շահասիր մանրավաճառների վիճակը նման էր Վեսուբի ^{*)} սոորոտում ընակութիւն գրած մարդկանց, որովհետեւ զապրոցիների փողը պահասում էր թէ չէ՛, իսկոյն կոտրատում էին նրանց խանութները և միշտ

^{*)} Հրաբխալին սար Խոտալիալում: Ծ. թ.

ձրի վերցնում: Ահա այսպէս էր այն Սեչը, որ այնքան շատ հրապոյըք ունէր երիտասարդների համար:

Ոստապն ու Անդրէն երիտասարդական բուռն աշխոյժով ընկան այս քէֆի ու զուարձութեան ծովի մէջ: Նրանք շուտով մասացան և երիտասարդութիւնը, և դպրոցը, և հայրենական առունը, և ամենը՝ ինչ որ գաղտնի յուզում է մարդու մասաղ հոգին: Նրանք քէֆ էին անում, եղբայրանում էին անհոգ, անտուն-անտեղ մարդկանց հետ և կարծես թէ չէին ցանկանում, որ այդ կեանքը մի փոփոխութիւն կրի:

Այդ միջոցին Տարասն սկսել էր մտածել թէ ինչպէս անի, որ շուտով մի բան սարքի. նաչէր կարող երկար անգործ մնալ:

— Ի՞նչ ես ասում, կոշեօյ, ասաց նա մի անգամ, ասամանի մօտ գալով. — Հը՛, Ժամանակը չէ՛, որ Զապրոցինք մի փոքր զբօանքի գնան:

— Գնալու տեղ չկայ, — պատասխանեց կոշեոյը, բերանից հանելով փոքրիկ չիբուխը և մի կողմի վրայ թքելով:

— Ո՞նց թէ չկայ: Կարելի է Տաճկաստան կամ Թաթարստան գնալ:

— Ոչ Տաճկաստան կարելի է, ոչ էլ Թաթարստան, — պատասխանեց կոշեոյը, էլ ետ բե-

բանն առնելով չի բուխը:

—Ո՞նց թէ չի կարելի:

—Այ ո՞նց. մենք սուլթանին խաղաղութիւն ենք խոստացել:

—Բայց չ որ սուլթանն անօրէն է, իսկ անօրէններին՝ Աստուած էլ, Սուրբ Գիրքն էլ հրամայում է, որ ջարդենք:

—Իրաւունք չունինք: Որ մեր հաւատով երգում կերած չլինենք, էլի դուցէ կարելի էր մի կերպ:

—Այդ ի՞նչպէս կարելի է, կոշկօյ: Ո՞նց թէ ասում ես՝ իրաւունք չունինք: Ահա ես երկու որդի ունիմ. ջանիլ տղերք են, պէտք է սովորեն և խմանան՝ ինչ է կոփւը. իսկ դու ասում ես զապորոժյիները չպէտք է կոռոի դընան:

—Ճարե՞րս ինչ, —պատասխանեց կոշկոյը մի և նոյն ասոնասրտութեամբ, —պէտք է սպասենք:

Բայց դրանով դոհ չմնաց Բուլբան:

Նա հաւաքեց այս ու այն գլխաւորներին ու կուրենների ատամաններին և ամբողջ գիշերը մինչեւ լոյս քէֆ տուեց նրանց: Փանի քէֆներումը քէֆ կար՝ քէֆ անելուց յետոյ, նրանք գնացին հրապարակը, ուր սովորաբար ժողովում էր խորհուրդը, և սիւնից կապած կար

թմբուկը, որ ածում էին սովորաբար և ժողովի՛ հրաւիրում: Զգտնելով կոպալները, որ միշտ թմբկահարի մօտ էին պահուում, ձեռքները մի մի փայտի կատր առան և սկսեցին թմբուկը թակել: Թմբկի ձայնի վրայ ամենից առաջ վազեց թմբկահարը, որ մի բարձրահասակ մարդ էր, մի հատիկ՝ այն էլ խիստ քնաթաթախ աչքով:

—Այդ ո՞վ է համարձակուում թմբուկն ածել, —գոռաց նա:

—Լոիր. քեզ որ հրամայում են, կոպալներդ վե՛ր առ ու թակիր, —պատասխանեցին հարբած գլխաւորները:

Թմբկահարն խկոյն գրապանից հանեց կոպալները, որ հեան էր առել, շատ լաւ իմանալով այսպիսի զիպուածների վախճանը: Թմբուկը որոտաց, և շուտով հրապարակի վրայ բռուերի նման հաւաքուել սկսեցին զապորոժյիների սեւ լսմբերը:

Կոշկոյի ետեխից գնացին մի քանի մարդիկ և հրապարակ բերեցին նրան:

—Իսկի մի վախենալ, —ասացին նրան առաջը եկած գլխաւորները: Ժողովրդին մի խօսք ասա՝ թէ որ չես ուղում վերջը վատ լինի. խօսք ասա, որ զապորոժյիք անօրէնների գէմ կոռուի գնան:

Կոշեոյը՝ տեսնելով որ բանը համաք չէ,
հրապարակի մէջտեղը գուրս եկաւ, չորս կողմը
գլուխ տուաւ և ասաց.

—Պան զապորոժյիք, քաջ կտրիմներ, կր-
թողնէք հրամանքներդ, որ մի խօսք ասեմ:

—Ասն, ասն,—աղմուկ բարձրացնել սկս-
ցին զապորոժյիները:

—Այ, խօսքն ու խորհուրդը, պատուական
սպաներ, հիմա այն բանի վրայ է, որ...բայց,
կարելի է, հենց ինքներդ էլ գիտէք, որ շատ
զապորոժյիք միկիտանխանէքում ջնուդների
և հենց իրենց եղբայրների ձեռին ացնքան
սպարտի տակ են ընկել, որ էլ հիմա մարդ չի
հաւատում նրանց: Այս հօ այս: Մէկ էլ շատ
շատ այնպիսի տղերը կան, որ իրենց օրումը
գեռ կոռուի երես չեն տեսել, չեն իմանում՝ կր-
ուիւն ինչ է, մինչդեռ ջահիլ մարդը, ինքներդ
էլ գիտէք, պաներ, առանց կոռուի չի կարող
մնալ: Էլ ի՞նչ զապորոժյի կըլինի այն մարդը,
որ կեանքումը մի անգամ էլէ անօրէններին
չի ջարդել:

—Այ, լաւ է խօսում, —ասաց գրագիրը,
արմունկով բոթելով Բուլբային: Բուլբան գըլ-
խով արեց:

—Բայց դէ՛ հենց չխմանաք, պաներ, որ ես
նրան համար եմ այս առամ, որ խաղաղութիւնը

խանգարենք: Տէր մի՛ արասցէ. ես այդ միայն
հենց այնպէս ասում եմ, է՛լի: Մէկ էլ մեր ժա-
մը՝ մեղք է ասել՝ ի՞նչ օրում է: Հրէ՛ս քանի
տարի է, Սէչը հայ ու կայ, բայց մինչև
օրս չէ՛ թէ ժամի գուրսը, ներսի պատկերնե-
րըն էլ առանց զարդի են մնացել: Մի արծա-
թի զարդ էլէ մէկը խերքի չընկաւ, որ շինել
առայ: Ինչ որ մի քանի կազակ մեռնելիս կտակ
են արել, ժամը հենց այն է, որ ստացել է:
Կրանց տուածն էլ հօ՛ մի զատ չէր, պատճառ
որ իրենց կենդանութեան օրով ունեցածները
բոլորը խմիչքի էին տուել: Այսպէս, իմ խօսքս
այն չէ, որ անհաւատների հետ պատերազմ բա-
նանք. ո՛չ, որովհեաւ սուլթանին խաղաղու-
թիւն ենք խոսացել. մեզ համար էլ մեծ մեղք
է, պատճառ որ մենք մեր հաւատի վրայ ենք
երդում կերել:

—Այ անիծած, տես ինչե՛ր է խառնում, —
ասաց Բուլբան գրագրին:

—Հա դէ՛, այդպէս, տէ՛սնում էք, է՛լի, պա-
ներ, որ կոխւ սկսել կարելի չէ. ասպետական
պատիւն էլ այդ չի վեր ունիլ: Ես էլ իմ կարձ
խելքով այ ի՞նչ եմ մտածում. նաւակներով մի-
այն ջահիլներին բաց թողնենք. թո՛ղ մի քիչ
տակն ու վրայ անեն Անասոլիայի ^{*)} ափերը:

^{*)} Փոքր Ասիա. Յ. թ.

Խոնչ էք կարծում, հը՞, պաներ:

— Բոլորիս, բոլորիս տար,—կանչեց ամեն կողմից ամբոխը: — Հաւատի համար պատրաստ էնք գլուխներս վէր դնելու:

Կոշեռյը վախեցաւ: Նա ամենեւին չէր ուզում ամբողջ Զավորոժիէն աղմկել: Բացի այդ՝ նրան անարդար բան էր թւում խաղաղութեան բաշինքը խանգարել:

— Թողէք, պաներ, մի բան էլ ասեմ, խօսքը վերջացնեմ:

— Հերիք է, — զոչում էին զավորոժիները. — Էլ դրանից լաւ բան չե՞ս ասելու:

— Ար այդպէս է, թող ձեր ասածը լինի. բայց մեզ համար էլ մեծ ասպարէզ կըքացուի: Գիտէք խօ՛, պաներ, սուլթանն անպատճ չի թողնիլ այն զուարձութիւնը, որ պիտի վայելին մեր կորիմները: Խակ մենք, գիտէք, պատրաստ կըլինինք. մեր ոյժերն էլ թարժ կըլինին: Մանաւանդ որ թաթարն էլ կարող է մեր այստեղ չեղած ժամանակը մեզ վրայ յարձակուել: Բայց ձիշն որ ասենք, մի աճնքան էլ նաւակներ չունինք, որ ամենքս էլ կարողանանք դընալ: Թէ չէ՛, հրէս ես պատրաստ եմ ձեր խոնարհ ծառան եմ:

Խորամանգ ատամանը լոեց: Բազմութիւնը խումբ-խումբ բաժանուած ակսեցին բանակցել, իսկ

կուրենների ատամանները խորհրդակցում էին, և բանը նրանով վերջացաւ, որ վճռեցին՝ մի քանի երիտասարդների ուղարկեն փորձուած և ծերունի մարդկանց առաջնորդութեա իր:

Այսպիսով ամենքը հաւատացած էին, որ բոլորովին իրաւացի են իրենց ձեռնարկութիւնը սկսում: Իրաւունքի այդպիսի հասկացողութիւնը շատ ներելի էր այն ժողովրդի համար, որ ապրում էր վտանգալից սահմանների վրայ, կատաղի հարեանների միջև: Եւ տարօրինակ կըլինէր, եթէ այլ կերպ վարուէին: Թաթարները հազար անգամ ընդհատում էին. իրենց խախուտ զինադուլը և ցանկալի օրինակ էին տալիս: Մանաւանդ որ ի՞նչպէս կարելի էր՝ այնպիսի քէֆասէր ասպետները, այն էլ աճնպիսի քէֆի դարում, մի քանի շաբաթ առանց կըռուի մնային:

Երիտասարդները վաղեցին գէպի նաւակները, որ մտիկ տան և ճանապարհի համար կաղմեն-պատրաստեն: Ծերունի, արեւակէզ, լայնաթիկունք զավորոժիները, ալեխան բեղերով, շալուարները մերքշտած, մինչև ծնդները կանգնած էին ջրի մէջ և նաւակներն ավեց քաշում էին պինդ պարաններով: Մի քանի մարդ ուղարկեցին մթերանոցը, Վնեպրի գէմուղէմի ափիը, ուր անմատչելի զաղագարանում պահում

էին ձեռք բերած զէնքերի և աւարի մի մասը: Փորձուածները մի տեսակ զուարձութեամբ սովորեցնում էին միւսներին, պահպանելով միանգամայն և պատկառելի, խիստ կերպարանք: Ամբողջ գետափը շարժուող կերպարանք առաւ, և եռանդուն գործունէութիւն տիրեց մինչայն անհոգ մարդկանց:

Այդ միջոցին մեծ լաստափայտը մօտենում էր ափին: Նրա վրայ կանգնած մարդկանց խումբը դեռ հեռուից ձեռքներն օդի մէջ շարժում էին: Այդ խումբը քրքրուած վերաբկուներ հագած կազակներ էին: Անկարգ հազուսալը (նրանք բացի շապիկից ու չիբուխից՝ ուրիշ բան չունեին) ցոյց էր տալիս, որ նրանք խիստ ճընշուած են թշուառութեան տակ, կամ թէ չէ արդէն չափից դուրս քէֆ են արել և մարմնի վրայ ունեցած-չունեցածները խմիչքի են տուել: Նրանց միջից որոշում էր մի կոլոտ, թիկնաւէտ, մօտ ցիսուն տարեկան մարդ, որ առջեռում էր կանգնած: Նա միւսներից աւելի բարձր էր գոռում և ամենքից աւելի էր ձեռքերը շարժում:

— Աստուած կարողութիւն տայ, պան զապորոցցիք:

— Բարով, հազար բարին, — պատասխանեցին նաւակներում աշխատողները, դադարեցնելով իրենց գործը:

— Պան զապորոցցիք, կըթողնէք մի խօսք ասեմ:

— Ասմա:

Եւ բազմութիւնը փոռեց ու ամբողջ գետափիը բռնեց:

— Լսե՞լ էք, ի՞նչ է լինումհնեթմանութեան[»]) մէջ:

— Ի՞նչ որ... ասաց կուբենների աստամաններից մէկը:

— Այնպիս բաներ են լինում, որ ասելու բան չէ:

— Ի՞նչ բաներ:

— Ել ի՞նչ ասեմ: Աչքներս բաց ենք արել և դեռ այլպիսի բան չենք տեսել, — պատասխանեց կարճահասակ կազակը, աչքերը մանածելով մի կարեռը զաղտնիք ունեցողի հպարտութեամբ:

— Դէ՛ ասում ես՝ ասա. ի՞նչ է պատահել, — միարեան կանչեց բազմութիւնը:

— Միթէ մինչեւ հիմա չէք լսել, պաներ: Այդ ի՞նչպիս կարելի է որ... եօթէ սարի քամակին հօ՛ չէք կենում. թէ՛ թաթարն ականջներդ բուրդ ու բամբակ է կոլսել:

— Պատմի՛ր, հե՛րիք զլիսիցդ դուրս տաս, —

^{«)} Հեթման կոչում էր Մալոռոսիակ զլիսաւոր կառավարիչը՝ Հեթմանութիւն-Մալոռոսիա: Ծ. թւ.

ասացին առջեռում կանդնած զլսաւորներից մի
քանիսը:

—Բաս դուք չեք լսել, հա, որ ջնուդ-
ները սուբբ եկեղեցիները միկխոանխանի պէս
կապալով են վերցրել:

—ԶԵ':

—Բայց դուք այն է՛լ չեք լսել, որ քրիս-
տոնեայ մարդը պատքաց ուտել էլ չի կարող,
մինչև որ շուն շան որդի ջնուդը իր պիղծ
ձեռով նշան չդնի վրան:

—Բան չենք լսել,—ազաղակում էր բագ-
մութիւնը, մօտ-մօտ գալով:

—Կաթօլիկ տէրտէրները հօ՞ գիւղէ գիւղ
ման են գալիս սայլակներով, և այդ սայլերին
լծուած են—ձի էլ է լինէին, այդ էլի ո՛-
չինչ—հապա ուզդափառ քրիստոնեաներ: Այդ-
պէս՝ կարելի է, դուք այն է՛լ չգիտէք, որ պիղծ
կաթոլիկներն ուզում են, որ մենք մեր Քրիս-
տոսի հաւատն էլ ուրանանք: Դուք, կարելի է
այն է՛լ չեք լսել, որ տէրտէրի շուրջառներից
ջնուդի կնանիքը իրենց համար մինթանաց
են կարում:

—Կաց, կաց,—ընդհատեց կաշեոյը, որ
մինչայդ՝ աչքերը զետնին սկեռած, կանդ-
նած էր, ինչպէս և բոլոր զապորոժցիները,
որոնք ծանրակշիռ գործերի ժամանակ երբեք

անձնատուր չեին լինում առաջին բորբոքումին,
այլ անխօս էին մնում և այդ ժամանակ
լուս ու մունջ հաւաքում էին իրենց զայ-
րոյթի բոլոր երկաթի զօրութիւնը:—Կաց,
ես է՛լ մի խօսք ասեմ. բաս դո՞ւք ինչ էիք,
ձեր հէրն անիծած, դո՞ւք ինչ էիք անում.
թուր չունէիք, ինչ է: Ի՞նչպէս թողիք՝ այդ
անիրաւութիւնը լինի:

—Հը՛մմ, ի՞նչպէս թողինք՝ այս անիրաւու-
թիւնը լինի՛,—պատասխանեց կոլոտ կազակը.—

Հապա դուք որ մեր տեղը լինէիք, տեսնեմ
ինչ կ'անէիք, յիսուն հազար հոգի միայն լե-
հերն էին. բացի այդ՝ զեռ հեթմանի մարդ-
կանց մի մասն էլ նրանց հաւատն ընդունեցին:

—Հապա ձեր հեթմանը, գնդապետները
հապա՝ ի՞նչ էին անում:

—Հը՛մմ, հեթմանն ու գնդապետները:
Գիտէ՞ք ո՞րտեղ են հիմա հեթմանն ու գնդա-
պետները:

—Ո՞րտեղ:

—Գնդապետների ոտ ու գլուխն են տօնա-
վաճառները ման ածում, հեթմանը հօ՞ պղնձի
բովի մէջ տապակուած՝ մինչև հիմա էլ զեռ
վէր ընկած է Վարշաւում:

Սարսուռ անցաւ բոլոր բազմութեան մի-

ջով։ Կռութիւնը, որ սովորաբար կարապետ է փոթորկին, կանգ առաւ ամենքի շրթունքների վրայ, և մի վայրկեան յետոյ՝ հզօր բնաւորութեան ուժով հոդու մէջ մինչայդ ճշնշուած զգացմունքները դուրս գեղուեցան, խօսքերի մի ամբողջ հեղեղ դարձած։

—Ի՞նչպէս, մեր՝ Քրիստոսի հաւատը հալածի նզոված ջհուդը, ուզգափառ քրիստոնեաների դլիսին այդպիսի բան գա՞ն. մեր մարդկանց այդպէս չարչարե՞ն, այն էլ ում գնդապետներին և հենց իրեն՝ հեթմանին, և մենք այս ամենը տանե՞նք։ Ո՞չ, այդ անկարելի՛ է։

—Այսպիսի խօսքեր էին թռչում ժողովրդի լայնատարած բազմութեան այս ծայրից այն ծայրը։

Իրարոցով դիպան զապորոժցիները և մի՛անգամից զգացին իրենց ոյցը։ Այս յուզումը թեթևամիտ ամբոխի յուզման նման չէր. այստեղ յուզուզները բոլորը ծանր ու հզօր բնաւորութեան տէր մարդկի էին։ Նրանք վառում, կրակում էին զանդաղ, դժուարութեամբ, բայց և կրակում էին, որ էլ երկար չսառչեն։

—Ի՞նչպէս, ջհուզները մեր դլիսին պան դառնամն։ Դէ՛ հապա, պան եղբայրներ, կախտանք բոլոր ջհուզներին, որ նրանց հոտն ան-

դամ չմնայ, — ասաց ամբոխի միջից մէկը։ Այս խօսքերը կայծակի նման թռան, անցան և ամբոխը գէպի արուարձանը վրայ տուեց բոլոր ջհուզներին մորթուելու բուռն ցանկութեամբ։

Իսրայէլի խեղճ որդիքը, կորցնելով իրենց առանց այն էլ փոքր ոգու բոլոր անվեհերութիւնը, թաք էին կենում արազի դատարկ կարասների, վառարանների մէջ և մինչեւ անգամ սողում, մտնում էին իրենց կամանց մինթանաների տակ, բայց անողոք և անզութ վրիժառուները ամենուրեկ գտնում էին նրանց։

—Պայծառափակնել պաներ, — կանչում էր մի բարձրահասակ լզար ջհուդ, ընկերների խմբի միջից գուրս ցցելով իր՝ սարսափից ծռմռած ռեխը։ — Պայծառափակնել պաներ, մենք ձեզ այնպիսի բան կը յատնենք, որ իսկի դեռ չէք լսել. այնպէս նշանաւոր բան, որ կարելի չէ տաել թէ ինչպէս նշանաւոր։

—Դէ լաւ, թող ասեն, — ասաց Բուլլան, որ սիրում էր միշտ ականջ գնել մեղադրեալին։

— Պայծառ պաներ, — արտօսանեց ջհուդը։ — Այդպիսի պաներ գեռ երբէք տեսնուած չկան, այն Աստուածը, երբէք։ Այդպիսի բարի, լաւու քաջ պաներ աշխարհիս երեսին դեռ չեն եղել...։ Նրա ձայնը վախից խզւում ու դոզդուցում էր։

—Ո՞նց կարելի է, որ մենք զապորոժյոց համար վաս բան մտածենք: Նրանք որ կան, իսկի մերոնցից չեն, որ Աւկրայնայում կասպալառութիւն են անում. այն Աստուածը, որ մերոնցին չեն. էն՝ իսկի ջնուդ էլ չեն. էն՝ սատանան գիտի թէ ինչ են. էն՝ այնպիսի մի զատ են, որ վրաները թքես ու անց կենաս: Այս, սրանք էլ այս մի և նոյնը կ'ասեն: Ճիշտ չեմ ասում, Նլեմա, կամ դու, Նմուլ:

—Աստուած վկայ, ճիշտ է,—պատասխանեցին խմբի միջից Նլեման ու Նմուլը, պատառոտուն թառակները գլխներին, երկուսն էլ գաճի պէս սպիտակի:

—Մենք իսկի մի օր դեռ թշնամիների հետ խօսքը մին չենք արել,— շարունակեց բարձրահասակ ջնուդը,—կաթոլիկների անունը հօ՛ լսել չենք ուղում: Զհանդամը գնան նրանք՝ գեօւը: Մենք ու զապորոժյիկ հարազատ եղբօր պէս ենք...

—Ի՞նչ, զապորոժյիները ձեր եղբայրը լինին, —կանչեց բազմութեան միջից մէկը:— Երազներումդ էլ չէք տեսնիլ, անիծած ջնուդներ: So', Դնեպրն ածէք դրանց՝ է, բոլորին խեղդէք՝ այդ նզովածներին:

Այս խօսքերը մի նշան էին. իսկոյն ջնուդների ձեռներից բռնոտեցին ու սկսեցին ալիքների

մէջ շպրտել: Ողորմուկ ճիչ-աղաղակ բարձրացաւ ամեն կողմից: բայց դաժան զապորոժյիները ծիծաղում էին միայն, տեսնելով թէ ինչպէս ջնուդների ոսները, մաշիկներն ու գուլբաները հագներին, դէս ու դէն էին թպրտում օդի մէջ: Խեղճ բարձրահասակ հոետորը, որ ինքն իր բերանով գլխին փորձանք բերեց, նուլբայի ոսներովը փաթաթուեց և ողորմագին ձայնով աղերսեց.

—Մե՛ծ պարոն, պայծառափայլ պան, ես ձեր եղբօրն էլ էի ճանաչում, լուսահոգի Դորոշին: Ի՞նչ վառաւոր զինուոր էր, նրան ութհարիւր ցելսին եմ տուել, երբ պէտք է թիւրքերի գերութիւնից թափուէր:

—Գու ճանաչում էիր եղբօրս,—հարցրեց Տարասը:

—Այն Աստուածը, որ ճանաչում էի. մեծահոգի պան էր:

—Հապա անունդ ի՞նչ է:

—Եսանկել:

—Լաւ, ես քեզ կըպրձացնեմ:—Այս ասելով՝ Տարասը նրան իր սայլի մօտ տարաւ, ուր կանգնած էին իր կազակները:—Դէ՛սայլի տակը մտիր շուտ, պառկիր այնտեղ ու չշարժուես. իսկ դուք, տղերը, դուրս չթողնէք այդ ջնուդին:

Այս ասելուց յետոյ՝ նա գնաց հրապարակը,
որովհետև թմբկի ^{*)} թնդացող ձայնը յայտնում
էր թէ խորհրդի պէտք էր ժողովուել։ Զնայելով
որ նա տիտուր էր և սիրալ կոտրած էր Աւկրայ-
նայում պատահած դժբախտութիւնների հա-
մար, բայց մի քիչ էլ դո՞հ էր, որ քաջազոր-
ծութիւնների համար արձակ ասպարէզ էր
բացւում, այն էլ այնպիսի քաջազործութիւն-
ների համար, որ մահից յետոյ մարտիրոսական
պատկան էին բերելու նրան։

Ամբողջ Սեչը, բոլորը՝ ինչ որ կար-չկար
Զապորոժիկում, հրապարախն էր հաւաքուել։
Գլխաւորները, կուրենների ատամանները կարձ
խորհրդից յետոյ որոշեցին, որ զօրքով ուղ-
ղակի Լեհաստանի վրայ գնան, որովհետև բո-
լոր չարիքն այնտեղից էր առաջացել։ Նրանք
ցանկանում էին թշնամու երկիրն աւերել և
իրենց համար աւար էին նախատեսում։

Յանկարծ բոլոր Սեչը կերպարանափո-
խուեց։ Ամենուրեք լսելի էին լինում միայն՝
փորձի համար ձգած հրացանների ձայնը,
թրերի շաշիւն, սայլերի ճռնչիւն. ամենքը
գէնք ու զարդով գտեպնդում և վառում էին։
Գինետնները փակուած էին. ոչ մի հարբած

^{*)} Բնագրում լուսաբար, որ կիսագնատածն, պղնձէ
մի երեսանի թմբուկ է։ Ծ. թ.

մարդ չկար։ Անսովոր դործունէութիւնը փո-
խանակեց յանկարծ անսովոր անհոգութեան։
Կոշեոյը մի ամբողջ արշին մեծացաւ, բարձ-
րացաւ. նա ազատ ժողովրդի թեթևամիա
ցանկութիւնների այն երկչոս կատարողը չէր
այլ եւ. նա անսահման հրամայող էր. գրեթէ
մի բռնակալ էր, որ հրամայել միայն զիտէր։
Բոլոր ինքնակամ և իրենց քէֆի ասպեսները
կարգով կանգնած էին շաբքերի մէջ, զլուխ-
ները յարգանքով քաշ գցած՝ չէին համարձակ-
ում աչքները վեր բարձրացնել, երբ կոշեոյը
հրամաններ էր տալիս հանդարտ, ծանր-ծանր,
ինչպէս իր դործը լսւ իմացող մի մարդ, որ
առաջին անգամը չէր, որ այդ դործն իկա-
տար էր ածում։ Փոքրիկ, փայտաշէն եկեղե-
ցում քահանան մաղթանք կատարեց, ամենքի
վրայ օրհնած ջուր սրսկեց. և ամենքը համ-
բուրեցին խաչը։

Երբ Զապորոժիէի զօրքը դուրս եկաւ Սե-
չից, ամենքի երեսները դէպի ետ դարձան.
«Մնաս բարով, մնայր, մեր», ասացին զրեթէ
բոլորը միաբերան. «Աստուած պահի քեզ ամեն
չարից ու փորձանքից»։

Արուարձանով անցնելիս՝ Տարասը զարմա-
ցած մնաց, տեսնելով որ իր ջհուդիկն արդէն
խանութը բաց էր արել և ինչ-որ կայծքարի

կտորտանք ու ամեն տեսակ անպէտք բաներ
էր ծախում:

— Յիմար անմիտ, ի՞նչ ես նստել այդտեղ, —
ասաց նրան, — չլինի ուզում ես՝ ճնձուկի
պէս հրացանով տան, վէր գցեն քեզ:

— Սո՞ւս կացէք, — պատասխանեց ջնուդը, —
ես ձեր ու զօրքի ետևեց կըգամ և այնպէս էժան
դնով պաշարեղէն կըծախեմ, որ գեռ ոչով չի
ծախել: Այն Ասոււածը, որ ճիշտ եմ ասում. ա'յ,
կըտեսնէք:

Բուլբան ուսերը վեր քաշեց և ձին քշեց,
հեռացաւ դէպ իր զօրաբաժինը:

Պ.

Նուտով ահ ու սարսափը տիրեց Նեհական
ամրող հարաւ-արևմտքին. ամեն տեղ զարո-
րությիների վրայ էին միայն ասում-խօսում: Հարաւային հողաշնչն քաղաքներն ու գիւղերը
հողի հետ հաւասարուեցան բոլորովին: Կա-
պալառու չհուզները, կաթովիկ հոգեորակա-
նութեան հետ միասին, խումբ-խումբ կախուե-
ցան: Զապորոժյիները հենց իմանաս քէփ անե-
լով էին իրենց ճանապարհը անց կենում,
ետեներիցը ամայի տարածութիւններ թողնե-
լով: Նեհացոց զօրագունդը ոչ մի տեղ չէր

համարձակւում կանգնեցնել նրանց ընթացքը.
Եհաց գունդը հենց առաջին ընդհարմանը
ցիր ու ցան էր լինում: Ոչ մի բան չէր կարող
գիմագրել զապորոժյոց ասիական յարձակ-
մանը: Պրելատը, *) որ այդ ժամանակ Ռաձիւի-
լեան մենաստանում էր, իր կողմից երկու աբե-
ղայ ուղարկեց զապորոժյոց մօտ, յայտնելով,
որ կառավարութեան և զապորոժյինների միջև
դաշնություն կայ, և թէ վերջիններս ակնյայնի
կերպով սոնստակ են տալիս իրենց պարտա-
կանութիւնն առ թագաւորը, միանգամայն
և միջազգային իրաւունքները: «Բոլոր զապո-
րոժյոց կողմից եպիսկոպոսին ասա», ասաց
կոշեոյը, «որ նա ամենեին չվախենայ, կա-
զակներն այս գեռ չիբուխներն են կպցնում:»
Եւ շուտով փառահեղ մենաստանն աւերիչ բո-
ցով շրջապատուեցաւ չորս կողմից, և նրա
հակայական գոթական պատուհանները զաժան
կերպով նայում էին կրակի բաժան-բաժան
եղած ալիքների միջով: Աբեղանների, զինուոր-
ների, ջնուզների փախստական խմբերը հեղե-
ղեցին մարդաշատ քաղաքներն ու շէները,
որոնք զրեթէ թշնամու հաճոյքին էին թող-
նուած:

*) Կաթոլիկ եկեղեցու հոգեոր բարձր պաշտօն-
ներից մէկը վարող եպիսկոպոս: Ա. թ.

Միմիայն Դուքնոյ քաղաքը չէր անձնատուր լինում: Դրա վրայ խստ զայրացան բոլոր աստիճանաւորները, որոնց թւում յետին տեղ չէր բռնում Տարաս Բուլբան: Նրանք որոշեցին քաղաքը սովով առնել: Ազատ ձիավարների խմբերը քաղաքի պարիսպներն ամեն կողմից պատեցին, տեղաւորուեցան իրենց սայլերի ու աղևերի հետ, որոնք գրեթէ միշտ իրենց ետելից էին դնում: Բնակիչները փոքրաթիւ զօրքի հետ վճռեցին, որքան հնարաւոր է, դիմանալ տառապանքին և երբէք անձնատուր չլինել: Զապորոժցիները հսկողութիւնը կրկնապատկեցին, որ քաղաքին ոչ մի օգնութիւն չկարողանայ դալ. Նրանք «Պոյգ թէ կինտ» էին խաղում, չիբուխները քաշում և մահաբեր սառնասրտութեամբ քաղաքի պարիսպներին էին մոնիկ անում: Անցաւ երկու շաբաթ. և չնայելով որ կազակներն ազատ ասպատակութիւնը շատ աւելի էին գերադասում՝ քան քաղաքներ պաշարելը, սակայն ոչ մի բան չկարողացաւ համբերութիւնից հանել նրանց: Երիտասարդները, կուիների ու վտանգների փորձն առած, անհամբերութեամբ վառառում էին. Նրանց թւում էին և մեր հերոսները՝ Օստապն ու Անդրէն, որոնք յանկարծ փորձառութիւն էին ձեռք բերել պատերազ-

մական դործի մէջ և, կրակոտ ու խիզախութեամբ լի, նոր-նոր պատահարներ էին ցանկանում, ծարաւի էին պատերազմի նորանոր զարգացումներն ու փոփոխութիւնները տեսնելու և ցոյց տալու, որ իրենք էլ գիտեն վտանգների հետ խաղ ու պար անել: Օստապը, կարծես, հենց զրահամար էլ միայն ստեղծուել էր, որ քէֆ անի պատերազմի մշտական խընջոյքի մէջ: Նա այժմ արդէն, կարծես, մի տեսակ վիթխարի, հակաչական բան լինէր դարձած: Նրա շարժմունքները կորովի հաստատութիւն էին ձեռք բերել, և նրա բոլոր յատկութիւնները, որ առաջ աննկատելի էին, այժմ աւելի ընդարձակ ծաւալ էին սոսացել և, կարծես, հզօր առիւծի յատկութիւն լինէին: Անդրէն նոյնպէս ամբողջապէս խորասուզուել էր սրերի և գնտակների գիւթիչ երածշտութեան մէջ, որովհետեւ ոչ մի տեղ ազատութիւնը, մոռացութիւնը, մահը, կեանքի վայելքը այնպիսի պատրիչ, սոսկալի հրապոյբռով չեն միանում, ինչպէս կուտի մէջ:

Այս երկար հանգիստը, որ ունեցան քաղաքի պարիսպների մօտ, գիւր չէր գալիս նրանց: Անդրէն երկար նստած էր իր սայլի մօտ, մինչդեռ ամենքն արդէն քնած էին, բայց մի քանիսից, որոնք պահապան էին կանգնած:

Նիշերը, յուլիսեան գեղեցիկ գիշերն իր անհամար աստղերով պատել էր ամայացած երկիրը։ Բոլոր շրջակացքը մի մեծաշուք տեսարան էր ներկայացնում։ մօտկում և հեռուում տեսանելի էր լինում հրդեհուած գիշերի պայծառ-կարմրագոյն բոցը։ Մի տեղ այդ բոցը հանդարս ու վեհ սփռում էր երկընքի երեսին։ մի ուրիշ տեղ, բռնկող նիւթի պատահելով, մրրի պէս դուրս էր պրծնում յանկարծ, շառաչում և վեր էր թռչում մինչեւ աստղերը, և բաժան-բաժան եղած կտորաանքը մարում էին ամենահեռաւոր երկնքի տակ։ Մի տեղ հրդեհուած սև մենաստանը, որպէս կարտեզեան խստաբարոյ աբեղայ, կանդնած էր անեղատեսիլ և ամեն մի արտափայլ-մունքի ժամանակ իր մռայլ վեհութիւնն էր ցոյց տալիս։ Մի ուրիշ տեղ այգիների մէջ թաղուած մի նոր շէնք էր այրում։ Ծառերը շչում, ճարճատում էին ու ծխով ծածկում։ Երբեմն ծառերի միջով լոյս էր արձակում կրակի հեղեղը, և ճիւղերի վրայ կախ ընկած ճիթ-ճիթ տանձերը պայծառ-կարմիր գոյն էին ստանում։ մինչեւ անդամհեռուից տեսանելի էին լինում աալորները, որոնք ֆուֆորի-մանիշակի-կրակի գոյն էին ստացել. և այս ամենի միջին երբեմն աեին էր տալիս շէնքի պատի վրաց

կախած մի խեղճ ջհուդի կամ աբեղայի մարմին, որ շինուածքի հետ միասին զոհ էր զնում կրակին։ Նրա վրայ բարձրում ճախրում էին թռչունները, որոնք հրեղէն դաշտի երեսին, հազիւ նկատելի խաչիների նմանութեամբ, անհուն մութ, մանր բծերի պէս էին երեսում։ Խաղաղութեան մէջ մի միայն ոտները կապած ձիանքն էին աղմուկ հանում, և նրանց զիւ խրիսնջը որոտընդոստ հնչում էր, մի քանի անդամ կրկնուող դողդոջուն արձագանգ տալով։

Անդրէն լուս նայում էր այս սարսափելի և հրաշալի տեսարանին, որ յանկարծ, կարծես, մի բանի մերձաւրութիւն զգաց։ Նրան թւում էր թէ կշտին կանգնած է մէկը։ Յետ նայեց և, իրօք, տեսաւ մօտին կանգնած մի կին։ Սրա թուլս դէմքը և ասիական գծագրութիւնը, կարծես, ծանօթ երեացին նրան։ Անդրէն անթարթ աչքով նրան սկսեց նայել։ Այն, դա թաթարուհին էր, հենց այն թաթարուհին, որ կովսոյի վոյեոդայի աղջկայ մօտ ծառայում էր իբրև աղախին։ Երիտասարդը ցընցուեց։ Սիրան ուժեղ զարկով բաղսեց նրա հսկայազօր կրծքին, և բոլոր անցեալը, ինչ որ խորքում էր, ինչ որ ծածկուած, խլացած, ճնշուած էր ներկայ աղատ կեանքով, բոլորը

միանդամից վեր լողաց դէպի երեսը, իր կողմից խորն ընկզմելով ներկան: Պատանեկութեան բոլոր հպարտ ոյժը վառուեց յանկարծ անտառնելի և խանդակաթ անհանգստութեան չարատանջ զեղումով: Հարցումները հեղեղի նման դուրս թափուեցան նրա կրծքից. «Որտեղից, ի՞նչպէս, ո՞ւր է պանադ: Ի՞նչպէս եկար այսուեղ. այս ի՞նչ է նշանակում: ասա, ինձ մի՛ տանջիլ»:

—Կամաց, Ասութու սիրոն, կամաց,— ասաց թաթարուհին, և փաթաթուեց կազակի գլխանոցաւոր վերարկուի մէջ, որը՝ քիչ էր մնում՝ վրայիցն ընկնէր:—Պաննան զապործցոց մէջ ճանաչեց ձեզ: Նա քաղաքումն է:—Ողորմած Ասութած, նա այստեղ է. ի՞նչ ես ասում, քաղաքումն է:

Թաթարուհին գլխով հաստատական նշան արեց:

—Ի՞նչպէս է նա, ասա, ասա, ի՞նչ ես լուռ կացել:

—Նա՝ երկու օր է արդէն՝ ոչինչ չի կերել:— ի՞նչպէս:

—Քաղաքի բնակիչներից ոչ մէկը մի կտոր հաց չունի: Ամենքն էլ վաղուց արդէն հող ու մոխիր են միայն ուտում:

—Արարիչ Ասութած. և դուք մինչեւ այժմ

ոչ մի անգամ դուրս չեկամք յարձակում դորձելու:

—Անկարելի է այդ,—զապործցիները չորս բոլորից պատել են պարիսպները: Մի գաղտնի անցք միայն կայ. բայց հենց այդ տեղում էլ ձեր սայլերն են կանգնած: Այդ անցքն իմացան թէ չէ, քաղաքն արդէն առնուած կըլինի: Վաննան հրամայեց ինձ ամեն բան յացնել ձեզ, որովհետեւ դուք չէք դաւաճանիլ նրան:

—Տէ՛ր իմ, դաւաճանեմ, այն էլ ո՞ւմ,— նրան: Եւ ես նրան կըտեսնեմ: Օ՛հ, չմեռնեմ, մինչեւ այդ ժամը տեսնեմ:

Երիտասարդի ամբողջ կրծքի մէջ ուրախութեան ամենասուր սալքներ մխուեցան: Նա աճապարանքի ամենաբուռն եռանդով վրանից դուրս թռաւ. սկսեց ուտելեղէն պարտել, և ի՞նչ որ զտաւ, բոլորը հաւաքեց և շուտով երկու տուղրակ կորեկով ու պաքսիմատով ծանրաբեռնեց: Տոպրակները թաթարուհու ձեռքը տուաւ, վերարկուով փաթաթեց նրան և հրամայեց, որ իր պաննային ասէ, թէ ի՞նքն էլ կըգայ շուտով: Թաթարուհուն հրամայեց, որ նպարները տանելուց յետոյ իր գալուն ապասի: Նա այժմ այն էր մտածում, թէ ի՞նչպէս անի, որ թաթարուհուն անվտանգ հասցնի մինչեւ այն աեղը, ուր ծածկուած էր

ստորերկրեայ անցքը։ Այդ անցքը ռազմա-
մթերքով լցրած սայլի տակին էր գտնուում։
Նրա բախտից զապորոժյիները, իրենց սովո-
րական անհոգութեամբ, բոլորը մեռելի պէս
քնած էին։ Թաթարուհու հետ ձեռք-ձեռքի
գնում էր նա և, ցանկանալով պատուել, քնող-
ների այն կողմն անցնել, արմնկով յանկարծ
հրեց նրան. վերարկուն դէն թռաւ, և հրդեհի
բոցը պայծառ փայլով լուսաւորեց թաթա-
րուհու սպիտակ հագուստը։ Արարիչ Աստուած.
նա յայտնի եղաւ. ամեն ինչ կորած է։ Անդ-
րէն սարսափահար եղած և մեռած-խորտակուած
սրտով աչքերը ման ածեց շուրջը,—8էր Աս-
տուած, ի՞նչ բախտաւորութիւն. նոյն իսկ
աչալուրջ պահնորդը, որ ամենավտանգաւոր
տեղում էր կանգնած, հրացանին յենած՝ քնած
էր։ Թաթարուհին, աւելի պինդ փաթաթուե-
լով վերարկուի մէջ, սայլի տակը մուաւ. փոք-
րիկ քառանկիւնի չիմը բարձրացաւ, և նա
գետնի տակն անցաւ։

Անդրէն շտապով իր տեղը վերադարձաւ,
յանկանալով, որ մտիկ տայ շուրջը և տեսնի
թէ ամենքն արդեօք քնած են, և ամեն բան
հանդարտ է արդեօք։

—Անդրէ՛, —դլուխը վեր բարձրացնելով
ասաց այդ ժամանակ ծերունի նուլքան, —

այդ ի՞նչ թաթար կին էր քեզ մօտ եկել։
Եթէ մէկն այդ ժամանակ Անդրէի երեսին
նայելու լինէր, նորան՝ գերեզմանից վեր կա-
ցած մեռել կըկարծէր։

—Ե՛, զգո՞յշ կաց, ո՞րդի. թէ չէ՛, Աստուած
զիտենայ, գաւազանով մէջքդ այնպէս կըկապ-
տացնեմ, որ հուր-յաւիտենական կըտնքայ։ Կնա-
նիքը քեզ լաւ հացի չեն հասցնիլ։

Այս ասելուց յետոյ՝ Բուլքան, կամ հոգսե-
րով վաստակած լինելով, կամ որևէ կարեռը
նախագծով զբաղուած, բոլորովին մաքովը չանց
կացրեց, որ այդ թաթարուհին քաղաքից կը-
լինի, այլ փախտական գեղջկուհու տեղ դրեց
նրան, որի հետ իր որդին սէր էր անում։
Այսպէս թէ այնպէս, միայն նա միւս կողմի
վրայ շուռ եկաւ ու քնեց։

Անդրէն ազատ շունչ քաշեց։ Սրտագող
վագեց զէպի սայլերը. ման եկաւ, պրատեց
ամեն տեղ. ուր որ ուտելեղէն կար լցրեց,
ծանրաբեռնեց տոպրակներն և իր ահագին
շալուարը։ Այս ամենի ընթացքում նրա սիրալ
նուազում էր, հոգին զբաղուած էր և կար-
ծես, թռչում վերանում էր այն ուրախու-
թեան միակ մոքով, որ առաջիկայում սպա-
սում էր իրեն։ Մի անգամ՝ էլ աչք ածեց

շուրջը, չզգալով ոչ սիրտը, ոչ գետինը, ոչ
իրեն, ոչ աշխարհը, և սողաց սայլի տակ
մտաւ: Փոքրիկ անցքը նրա առաջ բացուեցաւ
յանկարծ և նրա ետևից փակուեցաւ արադ:

Անդրէն աչքը յանկարծ կատարեալ խաւարի
մէջ բաց արեց: Նա իր ոսների տակին դէպի
ցած տանող աստիճաններ էր զգում. մէկն իս-
կոյն ձեռփցը բռնեց, նրանք երկար գնում
էին. վերջապէս սանդուխքը պրծաւ. նրա
ոտքերի տակին հարթ գետին էր: Լապտերի
լրյար փայլեց ստորերկրեայ մուայլի մէջ: Այժմ
ուղիղ գնացէք, — ասաց նրան մի ձայն. դա
թաթարուհին էր:

Ներքնանցքը քաղաքի պարսպի տակովն էր:
գնում և վերջանում էր դէպի վեր տանող մի-
նոյնպիսի սանդուխքով: Վերջապէս երխուա-
սարդը քաղաքի մէջտեղում դուրս եկաւ, երբ
ազօթարանն արդէն բացուել էր, և խաղում
էր վաղորդեան քամին: Ոչ մի ծխանից ծուխ
չէր բարձրանում: Քաղաքի մեռելային տեսքը
ընդհատում էին թոյլ, հիւանդագին հառաչներ,
որոնք չէին կարող չապշեցնել նրան: Պահա-
պանէին կանդնած մահուան պէս տժգոյն
պահորդներ. դրանք աւելի ուրուական էին
քան մարդիկ: Ուղիղ ճանապարհի մէջտեղում
նրանց մի ամենազարհուրելի, սոսկալի առար-

կայ հանդիսպեց. դա մի կին էր, սովի սարսա-
փելի զոհ, որ, վերջին հոգևարքի մէջ ընկած,
ատամների մէջ սեղմած ունէր իր չորացած
ձեռքը: Անդրէն սրսուալով շոապեց թաթա-
րուհու ետևից. Նա բոլոր զգացմունքներով
թուչում էր տեսնելու նրան, որի բախտառ-
րութեան համար պատրաստ էր իր ամբողջ
կեանքը զոհելու: Նա վեր վազեց սրահը. բարձ-
րացաւ սենեակը: Ամեն տեղ խաղաղութիւն էր
տիրում: ամեն ինչ կամ քնած էր՝ տանջանքից
զագարած, և կամ անխօս տառապում էր: Նա
ոտքը ննջարանի շէքին դրեց: Ո՛հ, ի՞նչպէս
թաթկացաւ նրա սիրտը: Ինչպէս սառեց, ըն-
դարմացաւ նա ամբողջովին, երբ սիրտն ասաց
իրէն, որ մի վայրկեանից, մի ազնթարթից
կըտեսնի նրան:

Եւ նա տեսաւ նրան, տեսաւ այն զեղեցկու-
հուն, որ մի ժամանակ անհոդ, ուրախ զոււարթ,
չարաձձի էր. որ մի ժամանակ հազցնում էր
նրան իր զինդերը և զարդարում իր զեղեցիկ,
թիթեանիկի թեւերի նման թեթեւ զարդա-
րանքներով: Նո նորից տեսաւ նրան: Գեղեց-
կուհին նստած էր բազմոցի վրայ, դիւթիչ,
բարեկազմ սոխկը տակը ծալած: Նա նոււաղած
էր, նա տժգոյն էր, բաց նրա սպիտակու-
թիւնը շացուցիչ էր ինչպէս սերովիկի փայ-

լուն հանդերձը։ Եթենեայ յօնքերը-բարակ, գեղեցիկ մի տեսակ բուռն, կրակոս արտայաց-առւթիւն էին տալիս նրա գէմքին, որ քաղցր երկիւղի սրբազն սարսուռ էր ազգում առա-ջին անգամ նրան մտիկ անողին։ Արտեա-նունքները-ցնորքների նման երկայն, խոնարհած էին և մուժ, նուրբ ասեղների նման սուր-սուր երեսում էին նրա երկնացին, գէմքի վրայ։ Ի՞նչ էակ էր դա։ Եւ այդ էակը, որ թւում էր թէ հրաշքի համար էր միայն ծնուել աշ-խարհիս երեսին, որի ոտների տուին եթէ ձգէին ամբողջ աշխարհս, բոլոր գանձերը, փո-քը զոհ կը համարուէր, — այդ երկնացին էակը տառապում էր սովից և այն ամեն դառնու-թիւններից, որ երկրիս բնակիչների վիճակն է։ Բորբոնած հացի կեղևանքը, որ ինչպէս մի թանգարին բան ընկած էր ոսկէ ափակի վրայ, ցոյց էր տալիս, որ գեռ մօտերքը զգա-ցուել էր ացտոեղ սովի բոլոր կատաղութիւնը։ Ոտնաձայն լսելով՝ գեղեցկուհին զլուխը մեր բարձրացրեց և մի երկար, սրտաճմիկ հայեացք ձգեց երիտասարդի վրայ։ Անդրէն նորից, կարծես, չքացաւ և ինքն իրեն կորցրեց։ Աղջկայ գէմքն առաջին անգամից նրան մի ուրիշ տեսակ թուեց։ Նրա գէմքի վրայ պահպա-նուած էին առաջուայ գծերը, բայց վրան

աւելացել էին և անհուն նոր, երկնքի նման գեղեցիկ գծեր։ Այն անխօս տանջանքի նշանը, այն ցաւագար կերպարանքը... Ո՛հ, ո՛քան գեղեցիկ էր առաջուանից։ Անդրէն նրա ոտ-ներն ընկաւ, հպեցաւ և նրա կորովի աչերին էր նայում։ Մի տեսակ ուրախութեան ժպիտ փայլեց աղջկայ շրթունքներին, և միննոյն ժամանակ արտասուքի կաթիլը զոհարի պէս կախ ընկաւ նրա արտեանունքի վրայ։ — Թագուհիս, ասաց նա, — ի՞նչ անեմ քեզ համար. ի՞նչ ես ուզում։

Նա անթարթ աչքով երիտասարդին նայեց և իր հրաշալի ձեռքը նրա ուսին դրեց։ Կրքի լափող բոցով երիտասարդն այդ ձեռքը համ-րոցներով ծածկեց։

— Ո՛չ, ես չեմհեռանալ քեզնից և քո կշտին կը մեռնեմ։ Թո՛ղ որ քո ոտների տակին քաղ-ցից լափուած սովամահ լինիմ քեզ նման, իմ սպաննա. և մահուան, ոտներիդ տակին ստա-ցած քաղցը մահուան փոխարէն՝ ոչինչ չեմ ուզում քեզնից։

— Հասպա ընկերներդ, հասկա հայրդ. դու պէտք է նրանց մօտ գնաս, — ասում էր նա կա-մացուկ։ Աղջկայ շրթունքները երկար գեռ շարժ-ւում էին առանց խօսքի, և նրա աչքերն, արտասուքով լցուած, չեին հեռանում նրանից։

— Ի՞նչ ես ասում, — ասաց Անդրէն կամքի
բոլոր ուժով և հաստատովթեամբ: — Ել ի՞նչ
սէր կլինի այն ժամանակ իմ սէրը, եթէ քեզ
համար այն միայն թողնէի, ինչ որ հեշտ է
թողնել: Ո՞չ, իմ պաննա, ո՞չ, իմ գեղեցիս: Ես
այդպէս չեմ սիրում քեզ, — հայր, մայր, եղբայր,
հայրենիք, ամենը՝ ինչ որ կայ-չկայ աշխարհիս
երեսին, ամենը տալիս եմ քեզ համար. բոլո-
րին հրաժեշտ եմ տալիս. ես այժմ ձե՛րն եմ,
ես քոնն եմ. Ել ի՞նչ ես ուզում:

Աղջիկը գլուխը խոնարհեց դէպի նա: Ան-
դրէն զգաց թէ ինչպէս նրա ելեքտրական բո-
ցավառ այսն իր այտին կպաւ, և համբոյը —
ո՞հ, ի՞նչ համբոյը, — միացրեց նրանց՝ իրար
հետ զօդուած եռուն շրթունքները:

Ե.

— Պան, ասաց ջնուդ Եանկելը, իր թասա-
կը ներս խցկելով վրանի մէջ, ուր նստած էր
Բուլբան: Սա միենոցն Եանկելն էր, որին Բուլ-
բան մահից ազատեց, և որ այժմ զապորոժ-
ցոց զօրքի մէջ առուտուր ու լրտեսութիւն էր
անում: — Պան, գիտէ՞ք ինչ կայ:

— Ի՞նչ կայ որ...

— Տասնուհինդ հազար լեհական զօրք է

գալիս, ու թնդանօթներ են բերում:

— Քսան հազարը ջարդեցինք, տասնհինգն
էլ կը ջարդէնք, — պատասխանեց Բուլբան:
— Բայց գիտէ՞ք՝ Էլի ի՞նչ կայ:

— Ի՞նչ:

— Զեր որդի Անդրէն, պա՛հ-պա՛հ պահ, ի՞նչ
փառաւոր ասպետ է...

— Յետո՞յ...

— Նա հիմա լեհացոց կողմն է անցել:

— Ի՞նչպէս, — կցեց Բուլբան, տեղից վեր թրո-
չելով. — իմ երեխա՞ս... իմ որդի՞ս և... ես քեզ
շանսատակ կննեմ, անիծեալ ջնուդ, սուտ ես
ասում, սատանի՞ ծնունդ:

— Ա՞յ, ա'յ, ա'յ. ո՞նց կարելի է սուտ խօ-
սեմ: Հօրս հոգին զժուսքի բաժին լինի, թէ
առաջ լինիմ ասում:

— Ի՞նչպէս, Տարաս Բուլբայի ո՞րդին ու այդ-
պիսի բա՞ն...

— Աստուած վկայ: Այն Աստուածը, որ այդ-
պէս է:

— Նա Փրիստոսի հաւատն ու հայրենիքը
ծախի՛:

— Աստուած վկայ, այդպէս է: Ես նրան
ինքս իմ այս աչքովս տեսայ: Փա՛հ, փա՛հ, ի՞նչ
շնորհալի ասպետ է: Հարիւր ութսուն ոսկի
զրահները միայն արժեն... շքեղ զբահներ են.

ամբողջապէս ոսկու մէջ թաթախած։ Բայց որ
տեսնէք՝ ինչ փառաւոր կառավարում է զի-
նուորներին։

Տարաս Բուլբան, կարծես, կայծակնահար
եղաւ։

— Ի՞նչե՞ր ես դուրս տալիս, անիծեալ Յու-
դայ, անկարելի բան է, որ քրիստոնեայ մար-
դըն իր հաւատը ծախի։ Որ ջնուդ լինէր կամ
թիւրք, է՛լի… Ոչ, չի կարող նա այդ անել.
Ասուումծ վկայ, չի կարող։

Սակայն նա մտաբերեց, որ երկու օր էր ար-
դէն որգուն չէր տեսել։ Նա մտաբերեց թա-
թարուհուն, որ երեւան էր եկել իր վրանում
— և նրա աչքերը փայլատակեցին։ Կատաղու-
թիւնը, երկաթի հզօր կատաղութիւն, վագրի
կատաղութիւն, բռնկեց նրա դէմքի վրայ։ Այ,
սատանի ձագ, է՛լի դու քոնը արիր։ Սատա-
նան է ծնել քեզ բոլոր ազդի ամօթ ու նախա-
տինքի համար։

Բարկութիւնից բորբոքուած դէմքով վրանից
դուրս եկաւ նա և հրամայեց ձիանը թամբել։

Այդ միջոցին կոշեոյը իր կողմից հրաման-
ներ էր տալիս, որ ամենքը պատրաստ լինին
և ոչ մի կերպով թոյլ չտան՝ պաշարուածները
միանան լեհական զօրքերին, որ մօանում էին։
Թշնամու զօրքերը, սակայն, տասնուհինդ հա-

զարից աւելի էին։ Կոշեոյը և գլխաւորների
խորհուրդն այն վճիռը կայացրին, որ աւելի
այն զիծը զօրացնեն, որ զէպի թշնամի էր
դարձած։ Սրանից քաղաքի հանդիպակաց կողմի
շղթան թուլացաւ։ Թէկ լեհական զօրքն ա-
ռաջին անգամից յետ մզուեցաւ, այն էլ մեծ
կորուսով, բայց քաղաքում նղած զօրագունդը
վճռեց օգուտ քաղել թշնամիների պաշտպա-
նութեան թուլութիւնից և, իսկապէս, յար-
ձակում գործելով դէպի դուրս, պատառեց,
անցաւ շղթայի միջով և յաջողեցաւ գրեթէ
զապորոժցիների աչքի առաջ միւս զօրագնդին
միանալ։ Բուլբան իր գլուխ մազերն էր սրկո-
տում զայրութից, որ անկարելի էր այլ ևս
նրանց բոլորին սովամահ անել։ Զապորոժցի-
ները կուտակուեցան և անխորտակելի ուստ
կազմեցին, — մի միջոց, որ միշտ էական օգուտ
էր բերում նրանց, որովհետեւ նրանց ուղմա-
կան արուեստը ասիսկան բուռն սրբնթացու-
թիւնը միացնում էր եւրոպական անդրդուելի-
ութեան հետ։ Թշնամին, չնայելով որ կրկնա-
պատիկ աւելի զօրաւոր էր, անկարող եղաւ
գերազանցութիւնն իր ձեռին պահել։ Ամենա-
սաստիկ և արիւնահեղ կռիւ բորբոքուեցաւ։
Տարաս Բուլբան գլխաւոր հրամանատարներից
մէկն էր։ արքայական երեք գնդերը, չկարո-

դանալով նրա բուռն յարձակմանը դիմադրել,
պատրաստ էին արդէն նահանջելու և ի փա-
խուստ դառնալու, որ յանկարծ նա իր բոլոր
ոյժերը բոլորովին ուրիշ կողմ դարձրեց:

Նա հեռուից մի կողմում մի զօրագունդ տե-
սաւ, որ լսու երեսութին դարան էր մոտած:
Այդ զօրագնդի միջին ճանաչեց իր որդուն՝
Անդրէին: Օստապին միքանի հրահանդ տուաւ,
թէ ինչպէս գործը շարունակի, և ինքը սակա-
ռաթիւ մարդկանցով այդ զօրագնդի վրայ ըն-
կաւ գժուած: Անդրէն հեռուից ճանաչեց հօրը
և հեռուանց երեսում էր, թէ ինչպէս նա բո-
լոր մարդնով գողգողալ սկսեց: Նա, ինչպէս մի
վատարանց վախոս, իր զինուորների շարքերի
ետևում թաքնուեց և իր զօրքն այնտեղից էր
կառավարում: Տարասի ոյժը մեծ չէր. նրա
հետ տասնութ հոգի միայն կար, բայց այն-
պիսի կատաղութեամբ, այնպիսի գերբնական
սրբնթացութեամբ գրո՞հ տուեց, որ թշնա-
մու շարքերը՝ սարսափահար եղած՝ տեղի էին
տալիս այդ մոլեգնած վարազի առաջ: Դժուար
թէ կարելի լինէր այն ժամանակ մի բանի
նախնեցնել նրան: Գլսարկը վաղուց արդէն
չկար նրա զլսին. մազերը ծածանում էին
բոցի պէս, և քեաքիւն օղի միջով ձգուում
էր օձի պէս: Նրա կատաղած ձին կրծում ու

կծոտում էր թշնամու ձիաներին. հազի թան-
գագին ակամենուը պատռուուած էր. նա թուրը
վաղուց արդէն դէն էր ձգել և դէս ու դէն էր
ձօճում միայն սարսափելի անչափ ծանը լախտը,
որի զլսին սուր-սուր պղնձի ասեղներ էին
խփած: Պէտք է մարդ միայն նրա զէմքին
մաիկ տար, որ մի մարմնացած կատաղութիւն
տեսնէր ու ներէր Անդրէի վախկոտութիւնը,
Անդրէի՝ որ իր խիղճը մի այնքան էլ մաքուր
չէր զգում:

Անդրէն տժգոյն, տեսնում էր թէ ինչպէս
իր լեհացիները ջնջում ու ցրիւ էին զալիս.
նա տեսնում էր թէ ինչպէս վերջինները, որ
իրեն շրջապատել էին, պատրաստ էին արդէն
փախչելու, տեսնում էր թէ ինչպէս մի քանի-
ալն արդէն, իրենց ձիաների գլուխը ետ դարձ-
նելով, դէն էին ձգում հրացանները. «Ազատե-
ցէք», ազաղակում էր նա, յուսակոտը պար-
զելով ձեռքերը. «Ո՞ւր էք փախչում. տեսէք՝
նա մենակ է»:

Զինուորներն, ուշքի գալով, վայրկեան մի
կանգ առան և, յիրաւի, սրտապնդուեցան, տես-
նելով, որ իրենց հալածողը միայն մի հոգի է,
երեք խոնջացած կազակներով: Բայց իզնուր կը-
ճնէին նրանք դիմադրել մի այնպիսի յուսա-
հատ կամքի:

—Ո՛չ, դու իմ՝ ձեռիցս չեա պրծնիլ, -կան-
չումէր Տարասը, հարուածելով փախչողներին,
որ սկսել էին մտածել թէ իսկ որ դեի հետ
գործ ունին:

Յուսահատ Անդրէն ճիզ թափեց, որ փախ-
չի, բայց ուշ էր, —ահոելի հայրը՝ առջևումն
էր արդէն: Յուսաբեկ կանգնեց նա միւնոյն
տեղում: Տարասն աչք ածեց շուրջը, —էլ ոչ
ոք չկար իր ետևում: բոլոր ընկերակիցներն ըն-
կել էին դաշտի գանազան տեղերում: Նրանք
երկուսով էին միայն:

—Հը՞, ո՛րդի, ասաց Յուլիան, որդու աչքե-
րին նայելով:

Անդրէն անսպատասխան էր:

—Հը՞, ո՛րդի, -կրկնեց Տարասը, —օգնեցի՞ն
քեզ քո լեհերդ:

Անդրէն ոչ մի խօսք չարտասանեց. նա կանգ-
նած էր ինչպէս դատապարտեալ:

—Հաւատդ ծախեցիր, ծախեցիր, է՞լի...
Անիծեալ լինի այն օրն ու այն ժամը, որ աշ-
խարհ եկար:

Այս ասելով՝ նա մի տեսակ կատաղի-փայլ-
փլուն հայեացքով այս ու այն կողմը նայեց:

—Դու հենց էիր իմանում թէ ես իշոր-
դուս ուրիշի ձեռը կըսամ: Ո՛չ, ես եմքեզ ծը-
նել, ես էլ կըսպանեմ: Կաց ու չշարժուես, ե-

Ասաուծուց մեղքերիդ թողութիւն մի՛ խընդ-
րիլ. այն կեանքում այդպիսի բանի համար
թողութիւն չկաց:

Անդրէն՝ երեսը սպրեմած, քաթան գա-
ռած, շրթունքներով միմիակ անուն շնչաց.
բայց դա ոչ հայրէնիքի անունն էր, ոչ էլ հօր
կամ մօր. դա դեղեցիկ լեհացի աղջկայ ա-
նունն էր:

Տարասը մի քանի քայլ ետ քաշուեց, հրա-
ցանն ուսից վեր առաւ, նշան դրեց... հրա-
ցանը որոտաց...

Ինչպէս ցորենի հասկը՝ մանգազով տակեցը
կարուած, ինչպէս մատաղ գառը՝ մահաբեր եր-
կաթը վզին դիսպած, առանց մի խօսք արտա-
սանելով՝ գլխակախ վէր ընկաւ նա խոտի վրայ:

Կանգնած մնաց որդեսպանն ու մտածում
էր՝ զաւաճանի մարմինը կողոպուտի և անար-
գութեան մատնի արդեօք, որ գիշատիչ թռչուն-
ները քըքըեն, և արենարբու գայլերը նրա դե-
ղին ոսկորները քաշ-քաշ անեն ու դէս ու դէն
տանե՞ն, —թէ՞ պատուով թաղի նրան:

Այդ միջոցին մօտ եկաւ Օստապը:

—Հայր, ասաց նա:

Տարասը չէր լսում:

—Հայր, այս զո՞ւ ես սպանել սրան:

—Ե՞ս, ո՛րդիս:

Օստապի դէմքը մի տեսակ անխօս կշտամբանք արտայայտեց։ Նա վրայ ընկաւ գրիելու իր ընկերին և կեանքի ուղեկցին, որի հետ քըսան տարի մեծացել էր միատեղ, միատեղ ապրել։

— Հերիք է, ո՞րդի, բաւական է։ Մեռած մարմինը տանենք, թաղենք, — ասաց Տարասը, որ ճնշում էր այդ միջոցին իր կրծքի մէջ ծնունդ առնող դառն կակիծը։

Նրանք մարմինը վերցրին և ուսերի վրայ տարան հրոյ ճարակ դարձած անտառը, որ ընկած էր իրենց զօրքի թիկունքի կողմը, և թրերով ու նիզակներով փոս փորեցին։

Տարասը նիզակը թողեց և աչքը որդու դիակին գցեց։ Նա մեռած տեղն էլ գեղեցիկ էր։ Նրա առնական դէմքը, որ քիչ առաջ լի էր զօրութեամբ ու կանանց համար անպարտելի կախարդանքով, դեռ ևս այդ զօրութեան ու կախարդանքի հետքը պահում էր իր վրայ։ Ու յօնքերը, սուզի թաւշի նման, շուք էին տալիս նրա գունատուած դէմքին։

— Խնչն էր պակաս կազակ լինելուն, — ասաց Բուլլան, — և հասակը բարձր, և ուն-քերը սե, դէմքն ասես ազնուականի, և բա-զուկը հզօր էր կոռուի մէջ, — կորաւ, կորաւ առանց փառքի...
Դիակն իջեցրին, հող լցրին վրան, և մի-

ըսպէից յետոյ Տարասն արդէն թշնամու շար-քերի մէջ լժուրը դէս ու դէն էր ճօճում։ հենց իմանաս՝ ոչինչ պատահած չլինէր։ Տար-բերութիւնն այն էր միայն, որ նա՝ որդու մահուան վրէժն առնելու ցանկութեամբ այ-րուած՝ աւելի մեծ մոլեգնութեամբ էր կռւում։ Նրա սեփական գունդը, որ այդ ժամանակ վրայ հասաւ Տովլաչի հրամանատարութեամբ, նշանաւոր գերակշռութիւն տուեց նրան։ Վեր-ջապէս նա իմացաւ թէ ո՞վ է եղել իր որդու դաւաճանութեան պատճառը, և որոշեց, ինչ ուղում է լինի, քաղաքն առնի։ Եւ նա կըկա-տարէր այդ, մոլեգնած, մահուան պէս կ'անց-նէր անշուշտ քաղաքի փողոցներով։ իր եր-կաթի ձեռքով ամրոցից գուրս կըքաշէր նրան, նրան, այն թովիչ, քնքուշ, շողերես գեղեց-կուհուն երկայն հրապուրիչ մազերցը բռնած՝ մոլեգնարար գետնովը քարշ կըտար նրան, և իր կեռ թուրը կը շոշար նրա տատրակ վր-զին... բայց մի անակնկալ դիպուած յետ կանդ-նեցրեց նրան իր անհաշտ վրէժինդրութեան ճանապարհից։



Զապարոժցոց զօրքին լուր հասաւ թէ թաթարները Սեչն առել, աւերել են և այն-

տեղ մնացած զապորոժցիների մեծ մասը, մի քանի թնդանօթների հետ, գերի են վարել: Այսպիսի դէպքերում կազակները սովորաբար աշխատում էին առանց ժամանակ կորցնելու, աւարառուների վերադարձի ժամանակ, վրայ համել նրանց ետևից և աւարը ձեռքներիցը յետ խլել, որովհետու՝ երեք շաբաթ անց՝ այդ անելն այլ ևս անհնար կըլինէր, և գերի կազակները կարող էին մեծ Ասիայի վաճառանցներում վաճառ հանուել: Կոշեռյը որոշեց և նրա որոշումը հաստատեցին միւս գլխաւորները—անցապաղ օգնութեան գնալ, այսպէս մասձելով թէ դաւաճանութեան և հեթմանների մահուան վրէժն արդէն բաւականաչափ առել են լեհացիներից, և թէ՝ ամայացած դաշտերը երկար կըլիշէն թէ բնչպէս զապորոժցիները հիւր են եղել այնտեղ:

Այդ որոշումին համաձայնեց և Բուլբան, թէպէտ և խիստ ուզում էր քաղաքն առնել: Նա արդէն գնում էր, հրաման տայ՝ ձիանը բեռնեն և սայլերը ձիւթեն, որ յանկարծ կանգ առաւ ու ասաց.

—Աստաման, մի բան էլ էի ուզում հարցնել քեզ. կարծեմ, թշնամու զօրքի մէջ մերոնցից մօտ երեսուն հոգի գերի կան, չէ:

—Ես մարդ ուզարկեցի, որ փոխանակու-

թիւն անենք—չեն համաձայնում: —Բաս ուրեմն նրանց պիտի հենց այնպէս էլ թո'զնենք, էլի: —Ի՞նչ արած: —Ի՞նչ, էլինրանց չարչմրեն, հմ: —Բաս էլ ի՞նչ կարող ենք անել,—պատասխանեց կոշեռյը, —օգնել հօ՛ չենք կարող, որ մնանք էլ, նրանց չենք յաղթիլ, մինչզեռ մերն էլ ձեռներիցս կըգնայ, —թաթարը մեղ չի սպասիլ: —Բաս ուրեմն հերետիկոս անհաւասները ոնց ուզում են՝ մեր Քրիստոսի հաւատը ծաղր ու ծանակ անեն, էլի: Կոշեռյը ուսերը վեր քաշեց: —Իսկ ե՛ս, ատաման, կարծում եմ՝ այդ այդպէս չի լինելու: —Ի՞նչո՞ւ չի լինելու: —Այնպէ՛ս. այդ արդէն ես զիտեմ: —Օհօ՛, ի՞նչ մեծութիւն է ծախո՛ւմ, ասաց կոշեռյը, մասով իր չիբուխի մէջ հուզ տարով մոխիրը: —Լաե՞լ էք, պանե՞ր, կոշեռյը ի՞նչ է ուզում անել,—ասաց Բուլբան, կոշեռյի մօտից դուրս դալով և զապորոժցիներին դառնալով: —Ուզում է՝ հենց այժմ Սեչ վերադառնանք, իսկ մեր ընկերներին, նրանց, որ թշնամու ձեռքը

գերի են ընկել, հէնց այնպէս էլ թողնենք, որ
անօրէն հերետիկոսները չարչարեն; Ի՞նչ կ'ա-
սէք սրան, հը:

—Կոշևոյի խօսքին չենք լսիլ,—ասաց
միաբերան զապորոժցիների մի մասը, բաժա-
նուեց և մի կողմի վրայ կանգնեց:

Դրանք մօտ երկու հազար հոգի էին:

Կոշևոյը դուրս եկաւ; Նա արդէն լսել էր
այն շփոթմունքը, որ յարուցել էր անհանգիստ
Բուլբան:

—Ի՞նչ էք ուզում, ինչի՞ն էք այդպէս զալ-
մազալ բարձրացըել,—գոչեց նա սպառնագին;

—Մենք Սէջ գնալ չենք ուզում; Մենք այս-
տեղ ենք մնում, աղաղակում էր մի խումբը:

—Ի՞նչ էք ասում, խելքներդ կորել է, ի՞նչ
է, սատանի ծնունդներ, ես ձեզ ամենքիդ կը-
կապտեմ:

—Ի՞նչ իրաւունք ունի դա, -ասաց Բուլբան
զապորոժցիներին զառնալով, -մենք ազատ կա-
զակ ենք:

—Իհարկէ, մենք ազատ կազակ ենք, ասում
էին զապորոժցիները:

—Ես ձեզ ազատ ցոյց կրտամ; Ո՞րտեղ էք ա-
զատ, —Սէջում. ա'յ այնտեղ ազատ էք; Այնտեղ
կարող էք իշխանութիւնս ձեռիցս առնել, թէ-
կուզ կապել ինձ ու սպանել, և ինչ որ ուզէք՝

կարող էք անել. իսկ այստեղ՝ ձէն-ծպտուն չը-
լսեմ; Գիտէք, ի՞նչ ասել է պատերազմական ի-
րաւունք; -Դո՞ւ ինչ ես այդտեղ խոռվութիւն
սարքում, ասաց նա Բուլբային գառնալով:

—Ո՛չ, ես խոռվութիւն չեմ հանում. ես
իմ քրիստոնէական պարաքս եմ կատարում, սառ-
նասրութեամբ պատասխանեց Բուլբան: —Նո
մեր իրաւունքներին եմ պաշտպան կանգնում,
պատճառ որ պարտական ենք քրիստոնէայ ա-
րիւնը պաշտպանել:

—Ես քեզ, քամ թառ սատանայ, ես քեզ սաց-
լերին կըկապեմ:

—Հապն մի փո'րձիր, աե՛ս:

—Լսեցէք, պան եղբայրներ, -ասաց կոշևոյը,
խօսքը փոքր ինչ մեղմացնելով, -ինչո՞ւ համար
բան թողնում էք ձեր այն ընկերներին, որ Սէ-
ջում թաթարը գերի է արել: Թէ հէնց զի-
տէք՝ թաթարները լեհերից լա՞ւ կը վարուն:

—Են՝ թաթար են, սրանք լեհ - թաթա-
րըն ու լեհը մէկ չեն, - պատասխանեց Բուլ-
բան: —Մուսուլմանն էլի խղճմունք ու Աստո-
ծու երկիւղ ունի, կաթոլիկներն այդ ոչ ունեցել
են, ոչ էլ կունենան: Կացէք, տղերք, ես էլ ասեմ:
Ի՞նչ, դուք որ գերի ընկնէք, ու սկսէին կաշի-
ներդ կենդանի-կենդանի քերթել, կամ թաւա-
ների մէջ տապակէին ձեզ —ի՞նչ կ'ասէիք դուք

այն ժամանակ: Իսկ ձեր երկրացիներից, ընկերներից, նրանք՝ որ պարտական են մինչեւ արեան վերջին կաթիլը պաշտպանել, ձեր ազդ ընկերներից մէկն էլէ չուղենար օգնութեան ձեռք մեկնել, —ի՞նչ կ'ասէիք դուք այն ժամանակ:

—Ինչ կ'ասէի՞նք, -բացականչեցին մի քանիսը, —կ'ասէինք՝ դուք փալաս էք, չէ՛ թէ զապորոժցի: —Երեսում էր, որ Տարասի խօսքերը խիստ շարժեցին նրանց:

—Կացէ՛ք, տղե՛րք, ես է՛լ ասեմ, ձայն տուեց ատամանը, հասպան ասացէք, պան եղբայրներ, խելքներդ ո՞ւր է կորել: Ինքներդ դատեցէք, ո՞րտեղից կարող էք այդքան թշնամիների հետ գլուխ հանել: Նրանք տասնհազարից աւելի են, իսկ դուք երկու հազար կաք-չկաք: Զէ՛ որ ամենքդ էլ տեղնուտեղը կըկորչէք:

—Կորչելու ենք՝ կորչենք, ասաց Բուլբան:

—Մնացէք բան այստեղ, թէ որ արդէն այդպէս ձեր կորուսոը կամեցաք: Իսկ նրանք, որ ձեզնից խելօք են, հա՛-դէ՛, ճանապարհ ընկնենք:

—Դուք ձերն արէք, մենք էլ մե՛րն անենք, ասաց Բուլբան:

Երկու կողմն էլ անշարժ կանգնած էին մէկմէկու դէմ-յանդիման, և մի ըսպէ զերեղմանային լոռութիւն տիրեց:

Վերջապէս առաջին կարգերում կանգնած ալեոր զապորոժցիները, աչքները գետին դրցած, սկսեցին խօսել.

—Եդ, այսինքն իհարկէ, արդարութեամբ որ դատե՞նք, դուք էլ ասպետական պարտք էք կատարում, մենք էլ ասպետական սովորութեամբ ենք գնոււմ: Մարդս էլ հենց դրա համար է ասլրում, որ հաւատն ու սովորոցթը պաշտպանի: Մանաւանդ, կեանքն էլ որ կայ, այնպէս մի բան է, որ մարդ նրա վրայ որ ափսոսայ, էլ չգիտենք ինչի՞ վրայ չպէտք է ափսոսայ: Շուտավ այն էլ կրականք ափսոսալ, որ մեր կանանց թողել ենք: Պէտք է խօ՛ մի տեսնել ինչ բան է մահը: Ինչ ձախորդութիւն ասես՝ կեանք-ներիս մէջ տեսել ենք: Այսպէս թէ այնպէս, չպէտք է սրտներիս մէջ իրար դէմ թշնամութիւն ու քէն պահենք: Մենք ամենքս զապորոժցի ենք, ամենքս էլ մի օջախից ենք, ամենքիս էլ Սեն է կաթ տուել, մենք ամենքս էլ հարազատ եղբայր ենք... հարցնում ենք իւրաքանչիւրիդ. արդեօք մեզնից որևէ տժգոհութիւն ունի՞ մէկը:

—Ո՛չ մի տժգոհութիւն, միշտ գոհ ենք եղել, կանչեցին ամենքը միաբերան:

—Դէ՛ թող բան բաժանուելու ժամանակն էլ այդպէս լինի... թէ ինչ կայ առաջներիս, այդ Աստուած ինքը միայն զիտէ. դուցէ մեզ-

նից ոչ մէկը էլ չի տեսնիլ իր լնկերին։ Բայ
ամենքս էլ հայբուրուենք։

Եւ երկու հազար զօրականները պաշտչուե-
ցան երկու հազարի հետ։ Կոշևոյը դրկեց Տա-
րասին։

Դէ՛հ, կացէ՛ք բարով, պան եղբայներ-կըտ-
րիձներ։ Տայ Աստուած, որ ամեն բան այնպէս
լինի, ինչպէս իրեն Աստուծու կամքն է։ Եթէ
մե՛նք գլխներս վեր դնենք, դո՛ւք պատմեցէք
մեզ համար, որ ա՛յ այս ինչ կարիճները զուր
չեն ապրել։ Խակ եթէ դնեք ընկնէք և պատուա-
ւոր մահ ստանաք, այն ժամանակ մե՛նք կը-
պատմենք, որ ամբողջ Աւկրայնան, այլ և ուրիշ
երկիրներն էլ իմանան, որ ա՞յ այնպիսի կըտ-
րիճներ կային, որոնք թէ Քրիստոսի հաւասը
պաշտպանել դիակին և թէ ընկերութիւնն էին
յարգում։ Մնաք բարով, թո՛ղ Աստուծու օրհ-
նութիւնը ձեզ վրայ էլ լինի, մեզ վրայ էլ։

Զօրքի երկու մասն իրար միացան, որ չը-
թողնեն թշնամին իրենց բաժանուիլն իմանայ,
և նահանջեցին դէպի հրդեհուած մենաստանը,
որի ստորոտւմ մի խորը քարափ կար։ Հեռա-
ցող կէսը, կոշևոյ ատամանի հետ, լեռան զա-
ռիվայրով ցած իջաւ և քարափի միջով, թըշ-
նամուց անտեսանելի, լուռ ու հանգարտ դադ-
տագնաց էր լինում։

Բարձրութեան վրայ կանգնած լեհական զօ-
քագունդը չէր կարող մասամբ չնկատել զա-
պորոժցոց զօրքի այդ շարժումը և պատրաստ
էր արդէն վճռելու, որ խկոյն ևեթ յարձա-
կում գործի, բայց Փրանսիացի թնդանօթա-
ձիգն ու ինժեները, որ ծառայում էր լեհական
զօրքի մէջ և պատերազմական գործին խիստ
հմուտ մէկն էր, կանգնեցրեց նրանց, ասելով.
«Ո՛չ, ո՛չ, պարոններ։ այդ ձեր կարծածը չէ։
դա լոկ մի դիւական դարանակալութիւն է։
Այս, այդ Զապորոգի մարդիկ'կը» ասաց նա,
մատն իր բագէական քթին դնելով, որի միջո-
ցին նրա՝ մինչայդ խոպոտ ձայնը զիլզիլ հըն-
չեց, «Այդ Զապորոգի ժողովուրդը, սատանի
եափ ոսն է այդ Զապորոգի ժողովուրդը»։

— «Դէ՛, պան եղբայրներ,-ասաց Բուլբան զօր-
քի հեռանալուց յետոյ,-այժմ ժամանակն եկաւ,
որ Զապորոժիէի պատիւը բարձր պահենք։ Տե-
սէք, որ բանն այնտեղ հասնի, որ այլևս կա-
րելի չլինի անհաւատներին դէմ դնել, այն ժա-
մանակ, պահեր, ամենքս էլ տեղնուտեղը վէր
ընկնենք, ոչ մէկս էլ կենդանի չմնայ. ամենքս
էլ իբրև հաւատարիմ ընկերներ դիալմաւալ
պառկենք միենոյն գերեզմանում։ Մէծ ժամից
առաջ հիմա արագ խմենք, պան եղբայրներ,
որովհեաւ մեր վիճակն այժմ նման է հարսա-

նիքի, որի մէջ պէտք է ամեն մարդ ուրախանաց:

Յիսուն կազակ դէպի սայլերը գիմեցին և սրուակները հանեցին, պատրաստուելով մառուակի պաշտօն վարելու: Երկու հազար կազակներն իրենց թաթպանները սրուակներին դէմ արեցին:

Ամենից առաջ, պան եղբայրներ, - ասաց Բուլբան, իր թաթպանը վեր բարձրացնելով, — մեր պարաքն է Քրիստոսի հաւատի համար խմել: Այնպիսի ժամանակ գայ վերջապէս, որ մեր հաւատը ողջ աշխարհում տարածուի, և բոլոր անհաւատները քրիստոնեայ դառնան վերջապէս: Մէկ թատով միանգամից խմենք և Սեչի կենացը, որ երկար, երկար մնայ նա ի կորուստ բոլոր անհաւատների. որ ամեն տարի այնտեղից կտրիներ դուրս գան, մինը միւսից քաջ, մինը միւսից քաջ: Մի հետով խմենք և մեր սեփական փառքի կենացը, որ մեր թուներն ու ծուներն ասեն թէ ժամանակով այ այսպիսի մարդիկ կացին, որ ընկերութեանն ամօթ չբերեցին և իրենց մարդկանցը չբաւաձանեցին: Եւ այսպէս, պան եղբայրներ, ինչպէս այս արազը փրփրում ուղղութեան է, մենք էլ այնպէս ուրախ դնանք

մահուան առաջ: Դէ, մի՛ հետով, հաւատի կենացը:

— Հաւատի կենացը, — կրկնեցին մերձաւոր շարքերը, թաթպանները վեր բարձրացնելով: — Հաւատի կենացը, — կցեցին հեռաւորները:

— Սեչի կենացը, ասաց Բուլբան, թաթպանը նորից վեր բարձրացնելով:

— Սեչի կենացը, — որոտացին մերձաւորները:

— Սեչի կենացը, արձագանք տուին հեռաւորները:

— Փառքի և աշխարհիս բոլոր քրիստոնեաների կենացը:

— Փառքի և քրիստոնեաների կենացը, կրկնեցին մերձաւորները:

— Փառքի և քրիստոնեաների կենացը, կրկնեցին հեռաւորները:

— Այժմ ձիանը հեծնենք, աղերք:

Ամենքն էլ խիոյն ձիաների վրայ թռան և միասին, կանոնաւոր խմբով առաջ շարժուեցան: Ամենքն էլ վասուած էին մի գերբնական ուժով: Դա յուսահատութիւնից ծնուած մի վայրենի աւիւն չէր: Դա մի բոլորովին ուրիշ բան էր: Մի տեսակ ուրախական ոգեւորութիւն, մի տեսակ սարառու էր զգացում այդ քէֆասէր ու քաջ խմբի սրտերում: Նրանց սե ու ալեսոր բեղերը սիդապանծ վայր

էին իշնում. Նրանց դէմքերը վստահութեամբ
լի էին: Նրանց ամեն մի շարժմունքն ազտա էր
և, կարծես, պատկերանում էր որոշ: Ամբողջ
հեծելախումբը թշնամու վրայ գրոհ տուաւ
սաստկութեամբ, առանց իր բոլոր ոյժերը
հաւաքելու, այլ կարծես թէ զուարձանալով և
իր գրութեան հետ խաղ անելով: Որպէս
հարսանեկան երաժշտութեամբ՝ գնդակների
տուլոցի միջով առաջ էին խաղում: Առանց
կանոնաւորութեան մասին որևէ տեսական հաս-
կացողութիւն ունենալու, նրանք զարմանալի
կանոնաւորութեամբ էին առաջ գնում, որ, կար-
ծես, նրանից էր առաջանում, որ նրանց
սրաերն ու յոզերը, ընդհանուր մոքով միա-
ցած, միավէս մի բախիւնով էին բարախում:
Ոչ մէկը չէր անջատում: ոչ մի տեղում չէր
քակտում այդ զանգուածը: Կեհական զօրքերը,
որ բուռն գիմաղբութեամբ նրանց ընդունելու
վրայ էին, սկսեցին ահաբեկուած ետ նահան-
ջել, մասածելով թէ արդեօք որևէ է գերբ-
նական ոգի չէ սկսել կազակներին օգ-
նել: Նրանց բանակի ամենալաւ կարգադրու-
թիւնները ոչնչացան այս աւերիչ ոյժի ձեռ-
քով: Այս ամբողջ հեծելախումբը սլանում էր
մի տեսակ ոգեօրուած, առանց փոփոխուելու,
ոչ սառչելով և ոչ իր եռանդն աւելացնելով: Դա

մի պատկեր էր, և պէտք էր միայն, որ նկա-
րիչը ձեռն առնէր վրձինը ու նկարէր: Ֆրան-
սիացի ինժեները, որ հոգւով խկական արուես-
տագէտ էր, դէն զցեց պատրոյզը, որով պատ-
րաստում էր թնդանօթը կազմելու, և ինքն
իրեն մոռանալով՝ ծափ էր տալիս, բարձրա-
ձայն զոռաւրով: «Կեցցէք, մըսիօ Զապորոգներ»:

Թշնամուց մօտ երկու հազար հոգի սպա-
նուեցան, մի այսքան էլ ցրիւ եկան և ի փա-
խուատ գարձան: Նորեկ զօրքը, որ գեռ կոփւ
չէր մտած, ասես թէ տարակուսած, կանգնած
էր մնացել: Զապորոժցիներն իրենք էլ սիրո
չէին անում առաջ զնալ: Նրանք նոյն իսկ թշնա-
մու աչքի առաջ վերցրին թողած թնդանօթ-
ներն ու պաշարեղէն բարձած սաշէրի մի մա-
սը, և նոյնպէս զարհուրելի կերպով, ճիշտ
միւնոյն կարգով ետ նահանջեցին դէպի հըր-
դեհուած մէնաստանը, որի տեղադրութիւնը
պաշտպանուելու համար խիստ նպաստաւոր էր:

Բուլլան իր զապորոժցիներով, այսպիսի
փառաւոր կոռւից յետոյ քէֆ անել սկսեց.
բայց երբ աչքէ անցրեց և համարեց իր շար-
քերը, տեսաւ, որ ընդամենը հազար հոգուց
աւելի չէին մնացել. մինչդեռ լեհացիներին ան-
դադար նոր զօրքեր էին օգնութիւն գալիս,
և եթէ մի բան թշնամու յարձակումից ազա-

տեց Բուլբային, որ Քրանսիացի ինժեների խորին համոզմունքն էր, որով լեհացիները երկիւղ էին տանում թէ զապորոժցիները թաքնուած բազմութիւն կանենան:

Այդ միջոցին Բուլբան իմացաւ, որ զապորոժցի գերիներին մի հեծելախմբի ուղեկցութեամբ ուղարկել են Վարշաւի ճանապարհով: Նրա գլխում խսկոյն միտք ծնուեց, որ վրայ հասնի նրանց ետևից և նրանց ձեռից գերիներին ազատի: Այս մասին յայններով զօրքին, սկսեց նահանջելու պատրաստութիւն անսնել ծածուկ: Ամբողջ օրը կազակները իրենց սայլերը ձիւթում էին, որ չճռնչան. թնդանօթների մեծ մասը գետնիտակ թաղեցին, որ թշնամու ձեռքը չընկնեն, և միևնույն ժամանակ շարունակում էին անընդհատ հրացանաձգութիւն անել: Զապորոժցիների մի մասն իրենց վերի հագուստները հանեցին. դրանցից խրսուիլակներ շինեցին և վանքի պարխապների վրայ շարեցին ամենուրեք, ուր պահապաններ կային կանգնած: Մենաստանի ետևում մի ճանապարհ գտան, որի մասին, ըստ ամենայն հաւանականութեան, թշնամին տեղեկութիւն չունէր: Այդ նեղ ճանապարհն անցնում էր երկու հեղեղատի միջով և բոլորովին խափանուած էր կարտած փայտերով ու մոխրով:

Գիշերուայ խորին մռայլից օգտուելով, նրանք անդներիցը շարժուեցան, իրար ետևից շարան ընկան իրենց բոլոր սայլերով ու աղլսերով, մօտ հինգ վերաս անցկացան այդ նեղ ճանապարհով և վերջապէս դուրս եկան արձակ դաշտը, որտեղից այլ ևս բոլորովին չէր երևում թշնամին: Զապորոժցիները ձիանը մտրակեցին ու սլացան: Ահա ժամ ևս-ևս նրանք կըպատահէին անշուշտ իրենց շղթայակապ երկրացիներին, դեռ բաւական ժամանակ կ'ունենային գլխաւոր ճանապարհից շեղուելով երկրորդական խուլ ճանապարհն ընկնելու և, թաթարական ձիաների արագավազութեան շնորհիւ, գուցէ Սեւը կրկին տեսնէր իր գըլխաւոր պաշտպաններին:

Բայց, կարծես զիտհամբ, լեհաց զօրքերը մտածեցին մենաստանի վրայ յարձակում գործել: Նեռատես ինժեները ճարտարութեամբ կըրակ տուեց մենաստանին կպած անտառը, հաւատացնելով թէ ամենքը կազակների որսի մսից փառաւոր խորոված կ'ունենան: Բայց խորին խաղաղութիւնն ապշեցրեց նրանց: Ապշութիւնն աւելի ևս սաստկացաւ, երբ տեսան, որ իրենց հեռուից նկատած զապորոժցիների տեղը միայն խրտուիլակներ էին կանգնած: Բոլոր նշաններից երեսում էր, որ զապորոժցիների

թիւը մեծ չէր։ Դա սաստկացրեց նրանց զայրոյթը, և զօրքի հրամանատարը, դիւրագըրգիո մի մարդ, նոյն բոպէին և եթ հրաման տուեց՝ կազակներին հետամուտ լինել խափյն։

Եթէ Բուլբան այնպէս դժուար շարժելի ու ծանր բեռներով դուրս եկած չլինէր, մինչև այժմ շատ աւելի հեռու եղած կըլինէր։ Եւ դրանով գուցէ հետամտութիւնից պրծնէր։ Բայց նա ափսոսեց մի քանի թնդանօթներ թողնել և մի քանի րոպէից յետոյ տեսաւ երկու կողմից եկող բազմաթիւ զօրքից բարձրացած փոշին։ «Թո՛ւ, զրողը տանի, լեհերը հոտըն առան», ասաց նա բերանից հանելով չիրուխը, որ հենց այն է՝ սկսել էր ամենամեծ հանդասութեամբ ծխել։

Տեսնելով, որ անհնար է այդքան բազմութեան ձեռից աւելի հեռուն նահանջել, նա իր սովորական սառնասրտութեամբ հրամայեց սայլերը մի տեղ հաւաքել, կուտակել և մի քանի շարք զապորոժցիներով շրջապատել։ Այդ ուազմական միջոցը կազակների կոխւ մզելու կատարելութիւնն էր համարւում և միշտ այն ժամանակուայ մինչեւ անգամ ամենազիտուն տեսական ուազմազէտների զարմանքն էր շարժում։ Դրա նպատակն այն էր, որ թիկունքի կողմը պաշտպանեն։ Այդուղ կազակներն եր-

բէք չէին յաղթւում. անխորտակելի պատի նման՝ սայլերը շրջապատելով, նրանք ամեն կողմից երեսները դէպի թշնամին էին դարձրած լինում։ Թնդանօթները մեծ օգուտ բերեցին նրանց, թոյլ չտալով, որ երկու թշնամիներն իրար խառնուեն և այնպէս կռուեն, որով և նրանց զօրքերը յոգնելուց ազատ էին մնում, — մանաւանդ որ թշնամին, ցանկանալով շուտ վրայ հասնել, թեթևաձեռն էր ճանապարհ ընկել։ Լեհական զօրքերը, որ միշտ յայտնի էին իրենց անհամբերութեամբ, պատրաստ էին արգէն թողնել-հեռանալու, եթէ զավորոժցիների կողմից եղած մի սխալ նրանց բանը չթեթևացնէր։

Այդ միջոցին 0ստապը, որ իր կողմում արձակում էր բոլոր լցրած թնդանօթները, եռանդից մզուած և անգործ դրութեան վրայ զարանալով, սայլերից բաժանուեց, մի փոքր հեռացաւ, մանր հրացանաձգութեան մէջ մուաւ, յետոյ էլ սկսեց սրազէնքով կռուել։ Թշնամու շարքերի մի մասը ցրուեցաւ նրա կատաղի արիութիւնից, բայց շուտով նա չորս կողմից վրայ տուող թշնամիների բազմութեան ձեռքն ընկաւ, և ծերունի Բուլբան իր աչքով տեսաւ թէ ինչպէս մի քանի ձեռքեր բարձրացրին նրան, հաստ պարաններով կապեցին ու խուռն

բազմութեան մէջ տարան։ Սիրելի որդուն օգնութիւն հասցնելու և նրան ազատելու ցանկութիւնը մոռացնել տուեց Բուլբային իր պաշտօնի կարևորութիւնը։ Նա զապորոժցիների մեծ մասի հետ սայլերից անջատուեց և գրոհ տուեց թշնամու մէջտեղը, ուր կարծում էր թէ կրգտնի Յատապին։ Զապորոժցիները՝ թշնամու բազմութիւնից իրարուց բաժան-բաժան լինելով՝ բոլորովին կորան բազմութեան մէջ։ Խւրաքանչիւրը պէտք է առանձին կոռուէր. և սիէտք էր տեսնել թէ ինչպէս Նրանցից ամեն մէկը, կայծակի նման, պտըտում էր բոլոր կողմերի վրայ՝ կոռուելով և սրով, և հրացանի կոթով, և մարակով ու մահակով։ Ամեն մէկն իր աչքի առաջ մահն էր տեսնում և աշխատում էր միայն իր կեանքն աւելի թանդ ծախի։ Բուլբան, ինչպէս մի վեթխարի հսկայ, աչքի էր ընկնում ընդհանուր քաօսի մէջ։ Կատաղաբար հասցնում էր իր զօրեղ հարուածները, աւելի ու աւելի բորբոքունով իր գլխին թափուած հարուածներից։ Նա այդ ամենն անում էր վայրենի և սոսկալի աղաղակ բարձրացնելով և նրա ձայնը, ինչպէս յովտակի հեռուստ լսուող խրխինջ, կրկնում էին քաջահնչիւն դաշտերը։ Թրի հարուածները վերջապէս կարկտի նման սկս-

ցին թափուել նրա գլխին։ Նա անզգայացած գետին գլորուեց։ Բազմութիւնը ոտի տակ տուեց նրան ու տրորեց. ձիանը փոշու մէջ կոխուացին նրան։ Զապորոժցիներից ոչ մէկը կենդանի չմնաց. բոլորը տեղն ու տեղն ընկան։ Եւ ոչ մի կենդանի աւար վկայ չէր լեհաց զօրքերի տարած յաղթութեանը։

Է.

— 0'հ, ի՞նչ երկար քնել եմ, ասաց Բուլբան, դիտելով խրճթի անկիւնները, որի մէջ պաոկած էր ինքը, բոլոր մարմնով վիրաւորուած ու ջարդուած։ Քուն էի արդեօք, թէ զարթուն էի տեսնում։

— Ի՞նչ քուն ու զարթուն, քիչ էր մնացել, որ յաւիտեան քնէիր, — պատասխանեց կշոխն նստած Տովկաչը, որի դէմքը մի րոպէ միայն փայլեց կենդանութեամբ և նորից իր սովորական սառնարիւնութեան մէջ ընկղմնեցաւ։

— Լաւ կոտորած էր. այս ինչպէս է եղել, որ ես ազատուել եմ։ Զէ որ բոլորովին թրերի հարուածների տակին էի. իսկ յետոյ ի՞նչ է եղել, էլ արդէն բան չեմ յիշում։

— Այդ մնայ թէ ինչպէս ես ազատուել, լաւ որ ազատուել ես։

Տովկաչն այն մարդկանցից էր, որոնք գործը լռելեայն են կատարում և երբէք իրենց կատարած գործի մասին չեն խօսում:

Բուլբայի տժզոյն և կապտած դէմքից երեսում էր, որ ճիզ էր անում՝ հանդամանք ները մտաբերի:

— Բաս իմ որդիս ինչ եղաւ... Օստապը ինչ եղաւ: Նա էլ միւսների հետ ընկաւ և պատուաբեր գերեզմանին արժանացաւ:

Տովկաչը լուռ էր:

— Ինչո՞ւ ես լուռ. կաց, յիշո՞ւմ եմ, յիշո՞ւմ եմ. ես տեսայ՝ ինչպէս պիզծ կաթոլիկները նրա ձեռներն ոլորեցին, ետեին կապեցին ու գերի տարան: Եւ ես չկարողացայ ազատել քեզ, որգեակ իմ Օստապ: Ոչժա դաւաճանեց ինձ վերջապէս:

Խորշոմները կնճռուեցան նրա ճակատին և նրա՝ սպիներով ծածկուած դէմքը սաստիկ վարանմունքով քօղարկուեց:

— Լոիր, պան Տարաս: Ինչ որ լինելու է կըլինի: Լոիր ու կազզուրուիր. գեռ հարիւր վերստից աւելի ճանապարհ ունինք կտրելու:

— Ինչո՞ւ:

— Նրա համար, որ աեղից վեր կացողը հիմա քեզ է պտրում: Գիտես, գլուխդ տանղին երկու հազար ոսկի են խոստացել, որ տան:

Բայց Տարասը չէր լուռ Տովկաչի խօսքերը: «Արգեակ իմ, Օստապ», ասում էր նա. «Ես քեզ չկարողացայ ազատել»:

Եւ վշաի զեղումն ուշաթափութեան մէջ ձգեց նրան: Տովկաչն ամբողջ օրը խրճիւմ մնաց. բայց զիշերը վրայ հասնելուն պէս՝ տարաւ անզգայացած Տարասին: Խզան կաշու մէջ վաթաթեց նրան, տեղաւորեց թափսի նման արկզի մէջ, թամքի լայնութեամբ ամրացրեց և ամենայն արագութեամբ չափ զցեց իր թաթարական վազան ձին: Ամայի ձորերն և անանցանելի տեղերն էին տեսնում նրան իր ծանր բեռան հետ թռչելիս: Տովկաչը վախենում էր, որ մի գուցէ թշնամիներ պատահեն կամ հետամուտ լինեն իրեն, և թէպէտ նա արգէն տափաստանում էր, որի տէրն ամենքից աւելի զատորոցցիները կարող էին համարուել, բայց այն ժամանակուայ սահմաններն ացնապէս անորոշ էին, որ ամեն մարդ անպաշտան երերի երեսին կարող էր իր քէֆին ման գալ, ինչպէս իր սեփականութեան մէջ: Նա չէր ուզում Տարասին նրա ազարակը տանել, նրան ացնաեղ աւելի պակաս ապահով համարելով քան թէ Զապորոժիէում, դէպի ուր ճանապարհ ընկած զնում էր այժմ: Մանաւանդ որ նա հաւատացած էր,

որ նախկին ընկերներին պատահելը, խնձոյք-ներն ու նոր կուները շուտով կըլաւացնեն Տարասին և նրա թախիծը կըփարատեն:

Եւ արդարեւ, յուսախար չեղաւ նա: Տա-
րասի երկաթի ոյժը յաղթեց, չնայելով որ նա
վաթսուն տարեկան էր, երկու շաբաթից յետոյ
արդէն ոտի կանդնեց: Բայց ոչ մի բան չկարո-
ղացաւ նրա թախիծը փարատել: Ըստ երեսու-
թին, նոյն իսկ զապորոժցիների խնջոյքներն
ու ուրախութիւնները մի տեսակ դառն բան
էին թւում նրան: Նրա մոլից չէր հեռանում
այն ժամանակը, որից գեռ երկու ամիս էլ
չէր անցել. այն ժամանակը, երբ զբօնում էր
իր որդոց, իր գեռ կորովի, առոցդ, ոյժերով
լի որդոց հետեւ նրա՝ մինչայդ անդրդուելի
դէմքի վրայ գուրս էր ցայտում սիրտ կեղե-
քող վիշտը: Եւ նա, զլուխը կախ արած,
մեղմիկ ասում էր. «Որդեակ իմ, Օստապ իմ»:

Զապորոժցիները ծովային արշաւանքի պատ-
րաստուեցան: Երկու հարիւր նաւակ Դնեպրն
իջեցրին, և փոքր Ասիան տեսաւ նրանց՝ ածի-
լած գլուխներով ու երկայն քեաքիւլներով՝ իր
ծաղկած ափերը սրի ու հրի ճարակ տալիս.
տեսաւ թէ ինչպէս իր մահմեղական բնակիչ-
ների չալմաները, իր անթիւ ծաղիկների նը-
ման, շաղ են տուած արիւնով թրջուած դաշ-

տերի երեսին և կամ ափերի մօտ լողում են,
նա զապորոժցիների քիչ կպրոտած շալուար-
ներ ու ջղոս ձեռքեր չտեսաւ՝ սև մորակները
բռնած: Զապորոժցիները կերան ու քարու-
քանդ արին բոլոր այգիները. մզկիթներում
աղբի ահագին կոյտեր թողին. պարսկական
թանգագին շալերը խոնջանի տեղ էին գործ
ածում ու նրանցով իրենց կեղտոտած վերար-
կուները գօտեպնդում: Երկար այնուհետեւ այդ
տեղերում գտնում էին զապորոժցոց կարճ չի-
բուխները: Նրանք ուրախ սրտով յետ էին լո-
ղում: Նրանց ետևից ընկրած էր տաճկական
տասը-թնդանօթանի նաւը, որ իր բոլոր
հրանօթները մի անդամ արձակելով՝ թուչունների
նման ցրիւ տուեց նրանց ծակուած նաւակները:
Նրանց երրորդ մասը ծովի խորքերի մէջ ըն-
կդմուեցաւ, բայց մնացածները նորից մի տեղ
ժողովուեցան և Դնեպրի գետաբերանը հասան՝
իրենց հետ՝ ցեխինով *): Միքը լցրած՝ տասներ-
կու տակառ բերելով: Բայց այդ ամենը այլ ևս
չէր գրաւում Տարասին: Նա անշարժ նստում
էր գետափին, շըթունքները շարժելով ու ար-
տասաններով. «Օստապ, իմ Օստապ: Նրա առաջին
փայլում ու սփուռում էր Յե ծովը. հեռաւոր

*) Ցեխին-ոսկէ զրամ Թիւրքիակում:

Եղեգնուտի մէջ ճչում՝ էր ուրուրը. նրա սպիտակ բեղը արծաթին էր տալիս, և արտասուքի կաթիները ոլոռն-ոլոռն կաթկթում էին մէկը միւսի ետևից:

Երբ ջնուդ եանկելը, որ այդ ժամանակ Ուման քաղաքում էր լոյս ընկել և ինչ-որ պողորաթներով և տեղալոն կապալառուների հետ ունեցած յարաբերութիւններով էր պարապում, երբ ջնուդ եանկելը՝ իր բաւական կեղտոտ սաւանը վրան գցած՝ ազօթում էր և շուռ եկաւ, որ իր կրօնի սովորութեամբ, վերջին անգամ թքնի, յանկարծ նրա աչքերը ետեսում կանգնած Բուլբային հանդիպեցին։ Զըհուդի աչքին ամենից առաջ այն երկու հազար ոսկին ընկաւ, որ Բուլբայի գլխի համար խոստացած էին. բայց նա իսկոյն ամաչեց իր այդ շահասիրութեան համար և ճիդ թափեց ինեղելու իր մէջ ոսկու այդ միտքը, որ որդի պէս՝ յաւիս եան կրծում է ջնուդի հոգին։

— Ասիր, եանկել, ասաց Տարասը ջնուդին, որն իսկոյն եեթ սկսեց զլուխ վէր բերել Բուլբայի առաջ և զուռն զգուշութեամբ փափեց, որ չտեսնեն իրենց։ Նս քո կեանքն ազատեցի, այժմ դռւ պէտք է ինձ մի ծառայութիւն անես։ Ջնուդի երեսը մի փոքր կնճռոտուեց։

— Ի՞նչ ծառայութիւն. եթէ այնպիսի ծա-

ռայութիւն է, որ կարելի է անել, ինչի չեմ անիլ։

— Ոչինչ մի ասիլ։ Ինձ Վարշաւ տար։

— Վարշավաւ. ինչ. Վարշավաւ, ասաց Եանկելը։ Եւ զարմանքից նրա ունքերն ու ուսերը վեր բարձրացան։

— Էլ պատասխան հարկաւոր չէ։ Ինձ Վարշավաւ տար։ Ինչ լինում է՝ լինի, միանգամ էլ նրան կամենում եմ՝ տեսնեմ։ գննէ մի խօսք էլէ ասեմ։

— Ի՞նչպէս կարելի է այդպիսի բան ասել, ասաց ջնուդը, իր երկու ձեռքի մասները չըռելով։ միթէ պանը չի լսել, որ արդէն...

— Գիտեմ, ամեն բան գիտեմ. գլխիս համար երկու հազար ոսկի են տալիս։ Այդ անպիտանները գլխիս զինը լմւ են հասկացել։ Ես քեզ տասներկու հազար կը տամ։ Ահա քեզ երկու հազարն այս բոսկիս։ Այս ասելով՝ Բուլբան կաշէ քսակից երկու հազար ոսկի վեր թափեց։ Մնացածն էլ ետ գառնալիս։

Ջնուդն իսկոյն երես-սրբիչը ձեռքն առաւ ոսկիները ծածկեց։

— Լաւ ոսկի է, ասաց նա, զբամներից մէկը մասների մէջ պատեցնելով և ստամների առակ փորձելով։

— Ես չէի խնդրել քեզ, ես ինքս էլ գուցէ

գտնէի Վարշաւի ճանապարհը, բայց նզոված լեհերը կարող են ինձ մի ձեռվ ճանաչել ու բոնել, որովհետեւ ես այնքան էլ ճարպիկ մարդ չեմ: Իսկ ձեր ջհուլ աղջը այդպիսի բաների համար էլ հենց ստեղծուած է. դուք սատանին էլ կըլսաբէք: Դուք ամեն սատանութիւն գիտէք: Այ թէ ինչու համար եմ քեզ մօտ եկել: Մէկ էլ Վարշաւում ինքս իմ ձեռով ոչինչ չեմ կարող շինել: Իսկոյն ևեթ սայլդ լծիր ու տար ինձ:

—Ի՞նչ էք կարծում, ի՞նչպէս թաքցրած պէտք է տանեմ պարոնին:

—Դէ այդ արգէն ջհուդներիդ բանն է թէ ինչպէս պէտք է տանեք. դատարկ տակառի, կամ թէ չէ մի ուրիշ բանի մէջ:

—Ի՞նչպէս կարելի է տակառի մէջ տանել: Ով տեսնի պիտի կարծի արազ է:

—Ի՞նչ անենք որ...այդ էլ հենց լաւ կըլինի:

—Ո՞նց թէ լաւ: Ախ Աստուած, մեց կարելի է այդպէս բան սաել: Միթէ պանը չի իմանում՝ արազը որ կայ, Աստուած նրա համար է ստեղծել, որ համն ամեն մարդ տեսնի: Այնաեղ ամենքն այնպէս նաւսոտ են, որ Աստուած ազատի: Մանաւանդ զինուորականները. հինգ վեց վերստ կըսկսեն տակառի ետելից վագ

տալ. մէկ էլ տեսար, մի ծակ բաց կ'անեն. և իսկոյն կըտեսնեն՝ արազ չի ու կասեն «Ճըհուդը դատարկ տակառ չի տանիլ. անշուշտ այստեղ մի բան կայ»:

—Դէ, որ այդպէս է ձկան սայլի մէջ դիր ինձ: —Վայ, -վայ, -վայ, չի կարելի, այն Աստուածը, որ չի կարելի: Այնաեղ ճանապարհին ամեն տեղ շան պէս քաղցած մարդիկ են. ինչպէս էլ ուզե՞ւ՝ պահիր պահպանիր, էլի կըդողանան և պանիս կըտեսնեն:

—Դէ, թէկուզ սատանի վրայ լինի, միայն տար:

—Կացէք, կացէք. այժմ ճանապարհին շատ աղիւս են տանում: Այնաեղ ինչ-որ բերդեր են շինում: Պանը թող սայլի տակին պառկի, իսկ ես վերեկից աղիւս կըշարեմ: Պանը առողջ ու պինդ կազմուածք ունի, նրա համար ոչինչ, որ մի քիչ ծանր կըլինի. ես էլ սայլի տակից մի ծակ կըշինեմ ու պանին կըկերակրեմ:

—Ի՞նչ ուզում ես՝ արա, միայն տար:

Եւ մի ժամկից յետոյ աղիւսով բեռնած սայլը, երկու քոնձուոտ ձի լծած, դուրս եկաւ Ումանից: Զիաներից մէկի վրայ նստած էր բարձրահասակ Եանկելը, և ինչքան որ ձին նրա տակին գնդգնգում էր, այնքան էլ նրա երկայն, խուճուճ կաւիքներն էին թասակի տակից ծածանում:

Պ.

Այն ժամանակ, երբ տեղի էր ունենում՝ նկարգրած իրողութիւնը, սահմանագծերի վրայ դեռ ևս մաքսատան պաշտօնեաներ ու ձիւոր պահապաններ—ձեռնարկու մարդկանց այդ ահ ու սարսափը, չկային, ուստի ամեն մարդ ինչ որ քէփն ուզէր՝ կարող էր տանել։ Եթէ պատահում էլ էր, որ մէկը խուզարկութիւն ու վերաբննութիւն էր անում, մեծ մասսամբ այդ իր սեփական զուարձութեան համար էր անում, մանաւանդ երբ սայլի վրայ աչքի համար հրապուրիչ առարկաներ էին դրանում, և եթէ նրա ձեռքը կարգին կշիռ ու ծանրութիւն էր ունենում։ Բայց աղիւսը սիրահար չէր գտնում և առանց արգելքի ներս մտաւ քաղաքի գլխաւոր գուներով։

Բուլբան իր նեղլիկ վանդակի մէջ կարողանում էր միայն դրսի ազմուկը, սայլապանների աղաղակները լսել-և ուրիշ ոչինչ։ Եանկելն իր ցածրիկ, փոշտուած նժոյգի վրայ դնդգնգալով, մի քանի պտոյտ անելուց յետոց, շուռ եկաւ, մտաւ մի մութ, նեղ փողոց, որ ցեխոտ, միանգամայն և ջնուզի փողոց անունն էր կրում, որովհետև արդարեւ Վարշաւի որ ծայրից ագես ջնուզներն այստեղ էին գտնւում։ Այդ փո-

զոցը խիստ նման էր փորուփառը բաց արած մի թրքաբակի։

Արեգակը, կարծես, երբէք ներս չէր թափանցում այդ տեղ։ Բոլորովին սևացած վայտաշէն տները, պատուհաններից ձգուած բազմաթիւ ձողերի հետ աւելի ևս սաստկացնում էին մռայլը։ Հազիւ երբեմն նրանց միջին կարմրին էր տալիս մի ազուրի պատ, բայց դա էլ արդէն շատ տեղ բոլորովին սև գոյն էր ստացած լինում։ Մէկ-մէկ միայն վերեւում պատի գաճած կտորը, արեւի շողբը վրան ընկած ժամանակ փացուց էր աչքերի համար անտանելի սպիտակութեամբ։ Այդ տեղ ամեն ինչ սաստիկ ծայրայեղութիւններից էր կազմուած, ծինելոյզի խողովակ ասես, լաթի կտորտանք ասես, կճեպներ, դուրս զցած կոտրած կարաներ, ինչ ասես՝ կար։ Ամեն մարդ ինչ որ անպէտք բան ունէր, փողոցն էր գուրս շպրտում և անցորդներին ամենայն յարմարութիւն ընծայում այդ անպէտք բաներով իր բոլոր զգացմունքները պարարելու։ Զիաւորը քիչ էր մնում՝ ձեռքը կպցնի փողոցի վրացով մի անից դէպի միւսը ձգած ձողերին, որոնց վրայ կախէին արած ջնուզի գուլպաներ, կարճ վարտիկներ, և ապլատած սազ։ Երբեմն հրէուհու բաւական սիրունատեսիկ մի դէմք, մթագնած

ուլունքներով զարդարուն, դուրս էր նայում
հնացած պատուհանից: Զհուղի լակոսների
խումբը, ցեխոսուած ու պատառոտուն հա-
գուստով, խուճուճ մազերով, գոռում գչչում
էր ու ցեխի մէջ թաւալ տալիս: Մի շիկահեր
ջնուդ, ամբողջ երեսը դեղնագոյն բժերով
ծածկուած, որ նրան ճնճղուկի ձուի նման էին
դարձնում, պատուհանից դուրս նայեց, խորյուն
եանկելի հետ իրենց անհասկանալի բարբառով
խօսել ակեց, և Եանկելն խփոյն ներս մտաւ մի
բակ: Փողոցով անցնում էր մի ուրիշ ջնուդ.
կանգնեց, նոյնպէս խօսակցութեան մէջ մտաւ,
և երբ Բուլբան, վերջապէս, աղիւսի տակից
դուրս պրծաւ, երեք ջնուդ տեսաւ, որոնք
տաք տաք խօսում էին:

Եանկելը դարձաւ նրան ու ասաց, որ ամեն
բան կը լինի. Նրա Օստապը քաղաքացին բան-
տում է նստած, և թէ պէտք դժուար է պահա-
պաններին համաձայնեցնել, բայց և այնպէս
յոյս ունի տեսակցութիւն գլուխ բերել նրա
համար:

Բուլբան երեք ջնուդների հետ մտաւ
սենեակը:

Զհուղները նորից ակեցին իրար հետ
իրենց անհասկանալի լեզուով խօսել: Տարասը
նայում էր նրանց իւրաքանչիւրին: Կարծես՝

մի բան խիստ յուղեց նրան: Նրա կոպիտ ու
անտարբեր գէմքի վրայ բորբոքուեց յոյսի մի տե-
սակ սրտմաշուկ բոց, այն յոյսի՝ որ երբեմն
յուսահատութեան վերջին աստիճանին այցե-
լում է մարդուս: Նրա ծերուկ սիրտն՝ սկսեց
ինչպէս մի պատանու սիրտ՝ սաստիկ բարախել:

— Լսեցէք, ջնուդներ, ասաց նա, և նրա
խօսքերի մէջ մի տեսակ հանդիսաւոր հրճու-
անք կար: — Աշխարհիս երեսին դուք ամեն
բան կարող էք անել. որ ուղեք՝ կարող էք
մինչև անգամ ծովի տակից փորել ու դուրս
հանել. առածը վաղուց արդէն ասում է ջնու-
դըն ինքն իրեն կը զողանաց, միայն թէ գողա-
նալ ուղենայ: Ազատեցէք Օստապիս. այնպէս
արեք, որ նա հնար ունենայ այդ գևերի ձեռ-
քեց փախչելու: Այս, այս մարդուն տասներկու
հազար ոսկի եմ խոստացել, — վրան տասներկու
հազար էլ կաւելացնեմ: Խնչքան թանգագին
բաժակներ ու գետնում թաղած ոսկի ունիմ,
խրճիթս և վերջին հագուստս, բոլորը կը ծա-
խեմ և ձեզ հետ պայման կը կապեմ, որ, քանի
կենդանի եմ, ինչ որ կոռուի մէջ ձեռք բերեմ,
բոլորը ձեզ հետ հաւասար կէս անեմ:

— Ո՛չ, կարելի չէ, սիրելի պան. կարելի
չէ, յոգւոց հանելով ասած Եանկելը:
— Չէ, չի կարելի, ասաց միւս ջնուդը:

Երեք ջհուդն էլ իրար երեսի մարիկ տուին։
—Հասպն մի փորձենք, ասաց երրորդը, երկ-
չոտութեամբ միւս երկուսի երեսին նայելով, —
կարելի է, Աստուած աջողում է։

Երեք ջհուդն էլ սկսեցին գերմաներէն
խօսել։ Բուլլան, ինչքան էլ ականջները սրեց,
ոչինչ չկարողացաւ հասկանալ, նա լսում էր
միայն շատ անդամ արտասանում «Մարդո-
խայ» բառը, և ուրիշ ոչինչ։

—Լսիր, պան, —ասաց Խանկելը, —պէտք է
մի այնպիսի մարդու հետ խորհուրդ անենք,
որի նմանը աշխարհս գեռ չի տեսել։ 0'օ, նա
Սոլոմոնի պէս իմաստուն է, նա էլ որ բան
չանի, էլ աշխարհիս երեսին ոչ ոք չի կարող
անել։ Նատիր այսաեղ. ահա բանալին, և ոչ
ոքի ներս մի թռողնիլ։

Ջհուդները փողոց դուրս եկան։

Տարար դուռը փակեց և փոքրիկ պատու-
հանով ջհուդի այդ կեղտոտ պողոտաչին-
էր նայում։ Երեք ջհուդները փողոցի մէջտե-
ղում կանգնեցին ու սկսեցին բաւական տաք-
տաք խօսել։ Նրանց միայաւ շուտով և չորրոր-
դը, վերջապէս և հինգերորդը։ Տարար լսեց
նորից կրկնուող Մարդոխայ, Մարդոխայը։
Ջհուդները շարունակ դէպի փողոցի մի կողմն-
էին նայում։ Վերջապէս փողոցի ծայրում, մի-

խարխուլ տան ետեկից, ջհուդի մաշիկ հազած
մի ոտք երեաց, և աչքի ընկան բարձկոնակի
փէշեր։ «Այ, Մարդոխայը, Մարդոխայը», միա-
բերան գոռացին բոլոր ջհուդները։

Մի լղար ջհուդ, Խանկելից մի քիչ կարձ
հասակով, բայց երեսը սպիներով շատ աւելի
ծածկուած, և ահազին վերին շրթունքով,
անհամբեր խմբին մօտեցաւ, և բոլոր ջհուդ-
ներն էլ, խօսքն իրար բերնից խլելով, շատ-
պեցին պատմել նրան, որի ժամանակ Մար-
դոխայը մի քանի անդամ աչքը փոքրիկ պա-
տուհանին զցեց, և Տարար գլխի ընկաւ, որ
խօսքն իր վրայ էր։ Մարդոխայը ձեռները
թափ էր տալիս, ականջ էր դնում, խօսքը
կարում էր, յաճախ մի կողմի վրայ թքում
էր և, բարձկոնակի փէշերը բարձրացնելով,
ձեռքը գրպանն էր կոխում և այնտեղից ինչոր
բան դուրս հանում, որի միջոցին երեան էր
հանում իր խիստ անպիտան վարտիկը։ Վեր-
ջապէս բոլոր ջհուդներն այնպիսի ճիշ-աղա-
ղակ բարձրացրին, որ պահապան կանգնած
ջհուդը ստիպուած էր լոելու նշան անել, և
Տարասն արդէն սկսեց երկիւղ տանել իր ապա-
հովութեան համար. բայց մտաբերելով, որ
ջհուդները բացի փողոցից՝ ուրիշ տեղ խոր-
հուրդ անել չեն կարող, և որ նրանց լեզուն

սատանան անդամ չի հասկանալ, հանգստացաւ:
Երկու րոպէ յետոյ՝ ջհուդները միասին
ներս մոտան սենեակը: Մարդոխայը մօտեցաւ
Տարասին, փաղաքշանքով նրա ուսին խիեց
ու ասաց. «Երբ մենք ուզենք, ու Աստուած
էլ կամենայ, այն ժամանակ ինչպէս հարկա-
ւոր է կըլինի»:

Տարասը մտիկ տուաւ այդ Սողոմոնին, որի
նմանը դեռ աշխարհիս երեսին չէր եղել, և
մի քիչ յոց առաւ: Յիրաւի, նրա կերպա-
րանքը կարող էր մի փոքր վստահութիւն
ներշնչել: Նրա վերին շրթունքը, իսկը մի զար-
հուրանք էր: Այդ շրթունքի հաստութիւնն
անկասկած կողմանակի պատճառներից էր մե-
ծացել: Այդ Սողոմոնի միրուքը միայն տասնու-
հինգ մազ ունէր, այն էլ ձախ կողմում: Սո-
ղոմոնի դէմքի վրայ՝ իր կտրճութեան համար
ստացած այնքան հարուածի նշաններ կային,
որ նա անկասկած, դրանց հաշիւը վաղուց
կորցրել էր և վարժուել էր իծնէ բծեր հա-
մարել:

Մարդոխայը հեռացաւ իր իմաստութեան
վրայ զարմանքով լցուած ընկերների հետ:
Բուլբան մենակ մնաց: Նա մի օտարոտի, չե-
ղած-չտեսնուած դրութեան մէջ էր. կեանքի
մէջ առաջին անդամն էր, որ անհանդստու-

թիւն էր զգում: Նրա հոգին տենդային դրու-
թեան մէջ էր: Նա էլ այն, առաջուայ
անընկճելին, կազնու պէս անդրդուելին ու
հզօրը չէր. նա փոքրոդի էր. նա այժմ թոյլ
էր: Ամեն մի շառակի վրայ, փողոցի ծայրում
երեւացող ամեն մի նոր ջհուդի կերպարանքի
վրայ սոսկում էր: Այդ վիճակի մէջ անցկաց-
րեց վերջապէս ամբողջ օրը. ոչ ուսում էր,
ոչ խմում: և նրա աչքերը ոչ մի րոպէ չէին
բաժանւում փողոցի վրայ նայող փոքրիկ պա-
տուհանից: Վերջապէս արդէն ուշ երեկոյեան
երեւացին Մարդոխայն ու Եանկելլը: Տարասի
սիրտը թալիացաւ:

— Ինչպէս է, աջնդ է, — հարցրեց նա վայ-
րենի ձիու անհամբերութեամբ: Բայց դեռ
ջհուդները սիրտ չէին արել պատասխանելու,
Տարասը նկատեց, որ Մարդոխայի վերջին խո-
պոպիկն էլ չէր մնացել, որ լուկ բաւական
անդիւր, բայց և այնպէս օղակ-օղակ ոլորւում
էր նրա թասակի տակից: Երեսում էր, որ Մար-
դոխայը ուզրւմ էր մի բան ասել, բայց մի
այնպիսի յիմար բան դուրս տուաւ, որ Տա-
րասը բան չը հասկացաւ: Հենց Եանկելն ինքն
էլ խիստ յաճախ ձեռքը բերնին էր դնում,
այնպէս որ, կարծես, մրսած լինէր:

— Ո՞վ սիրելի պան, ասաց Եանկելլը, —

այժմ իսկի չի կարելի, այն Աստուածը, որ
չի կարելի: Այնպէս վաս մարդիկ են, որ
երեսներին մի կոռոփի թքես: Այ Մարդոխայն
էլ կ'ասի: Մարդոխայը այնպիսի բան արեց,
որ աշխարհումն՝ դեռ ոչ մի մարդ չի արել,
բայց Աստուած չկամեցաւ, որ մեր ուզածը
լինէր: Երեք հազար զօրք կան պահապան
կանգնած, և վաղը պէտք է բոլոր բանտար-
կեալներին մահուան պատիժ տան:

Տարասը ջնուդների աչքին նայեց, բայց
արդէն առանց անհամբերութեան ու բար-
կութեան:

— Իսկ եթէ պանը նրան տեսնել է ուզում,
պէտք է էզուց առաւօտը վաղ դնանք, այն-
պէս որ արեգակը դեռ դուրս եկած չլինի:
Պահապանները համաձայնում են, և մի լեն-
տար ^{*)} խօսք տուաւ: Միայն ինչ որ ինձ
արին, թող նրանց հոգուն դէմ գայ այն կեան-
քում: Պահ-պահ, պահ-պահ-այդ ինչ ազահ մար-
դիք են. մեզնում անզամ այդպիսի մարդիկ
չկան: Ամեն մէկին ցիսուն ոսկի տուի, լեն-
տարին հօ... .

— Լա՛ւ, նրա մօտ տար ինձ, — վճռապէս
ասաց Բուլբան, և դարձեալ հոգու բոլոր ան-

^{*)} Առանձին տեսակ հակնուած ու գինուորուած
դիմուոր (լեհաց): Յ. թ.

վեհերութիւնը վերադարձաւ իրեն: Նա հա-
մաձայնեց Եանկելի առաջարկութեանը, որ
ծպտուի իրրե գերմանացոց երկրից եկած մի
օտարազգի կոմս, որի համար հեռատես ջնու-
դըն արդէն հագուատ ճարել էր.

Գիշեր էր արդէն: Տանուտէրը, զեղին բծե-
րով՝ ծանօթ շիկահեր ջնուդը, դուրս քաշեց
մի բարակ ներքնակի, որ ծածկուած էր ինչոր
փսիաթով, և տախտի վրայ վուեց Բուլբայի
համար: Եանկելը պառկեց յատակին՝ միւնոցն
տեսակ ներքնակի վրայ: Նիկահեր ջնուդը մի
բաժակ ինչ-որ թուրմ խմեց, կապան հանեց
և, գուլպաներն ու մաշիկները հագին, վա-
ռեկի նման մի բան դառնալով, իր կողակցի
հետ դէպի պահարանի նման մի տեղ ուղեռուեց: Ջնուդի երկու լակուները, ինչպէս
տանու երկու շնիկներ, գետնին պահարանի
մօտ պառկեցին:

Բայց Տարասի քունը չէր տանում: Նա ան-
շարժ նստած էր և մատներով թեթև կեր-
պով թմրկահարում էր սեղանին: Նա բերա-
նին բռնած ունէր չիբուխը և ծուխ էր արձակում,
որից ջնուդը քնաթաթախ փոշտում էր և քիթը
վերմակի տակ կոխում: Հենց որ արշալոյսի
ծէգը բացուեցաւ, Բուլբան սոտով Եանկելին հրեց:

— ԶՀԱՆԴ, վեր կաց, կոմսիդ հագուստը
տուր:

Մի բոպէում հագնուեց, բեղերը, ուն-
քերը սև ներկեց, կատարին դրեց փոքրիկ
սեագոյն դլամարկը—և ամենամօտիկ կազակնե-
րից անգամ ոչ ոք չէր կարող ճանաչել նրան:
Տեւքին նայելով երեսունհինդ տարեկանից
աւելի չէր լինիլ նա: Առողջ, կարմիր գոյնը
խաղում էր նրա այսերին, իսկ սպիները նրա
դէմքին մի տեսակ հրամայողականութիւն էին
տալիս: Ոսկով զարդարուն հագուստը շատ
սագում էր նրան:

Փողոցները գեռ քնի մէջ էին: Ոչ մի շա-
հախնդիր արարած, կողովը ձեռին, գեռ չէր
երեսում քաղաքում: Բուլլան ու Եանկելը մի
շէնքի մօտ եկան, որ նստած ճայի տեսք ու-
շէնքի: Դա մի ցած, ընդարձակ, ահազին, սեա-
ցած շէնք էր, որի մի կողմից դուրս էր ընկած
արագլի զզի պէս երկայն, նեղ աշտարակը, և
այդ աշտարակի վերեսում ցցուած էր տանիքի
կտորը: Այդ շինութիւնը բազմաթիւ ու բազ-
մատեսակ պաշտօններ էր կատարում: Այդաեղ
էր և զօրանոցը, և բանտը, և մինչեւ ան-
գամքրէական դատարանը: Մեր ուղեսորները
դուներից ներս մտան և մի ընդարձակ դահլի,
կամ ծածկած բակի մէջ ընկան: Առ հազար

մարդ քնած էին միասեղ: Ուղիղ դէմուղէմն
ընկնում էր մի ցածրիկ դուռ, որի առաջը
նստած երկու պահնորդները մի խաղ էին խա-
ղում: Խաղն այն էր, որ մէկը երկու մատով
խփում էր միւսի ափին: Նրանք շատ էլ ուշա-
դրութիւն չդարձրին եկուորների վրայ և գլուխ-
ները միայն այն ժամանակ շուռ տուին, երբ
Եանկելն ասաց:

— Մէնք ենք, լսում էք, պաներ, մենք ենք:

— Գնացէք, ասաց նրանցից մէկը, մի ձեռ-
քով դուռը բանալով, իսկ միւսն իր ընկերին
մեկնելով, որ նրանից հարուածներն ընդունի:

Նրանք մի նեղ ու մթին նրբագաւիթ
մտան. նրբագաւիթը նորից հանեց նրանց մի
նոյնպիսի դահլիճ, որի փոքրիկ պատուհան-
ները վերելց էին:

— Ո՞վ է... գոռացին մի քանի ճայներ, և
Տարասը բաւական թուով սպառազինուած
մարդիկ տեսաւ: — Մեղ ոչ ոքի չի հրամայած
ներս թողնել:

— Մէնք ենք, — կանչում էր Եանկելը. — այն
Աստուածը, մենք ենք, պայծառ պաներ:

Բայց ոչ չէր կամենում լսել: Բարեբախ-
տարար այդ միջոցին մօտեցաւ հաստափոր
մէկը, որ բոլոր նշաններից երեսում էր՝ պէտք

է մեծաւորը լինէր, որովհետև ամենքից աւելի
էր հայհոյանքներ թափում:

—Պահն, ախր այս մենք ենք: Դուք մեզ
արդէն ճանաչում էք, և պահ կոմար դեռ էլի
շնորհակալութիւն կանէ...

—Թողէք անցնեն, անէծք, հազար անէծք
չար սասանին: Էլ ոչ ոքի ներս չժանդնէք:
Մէկ էլ թրերդ դէս ու դէն չձգէք ու դետնին
շան պէս ալաշ-թալաշ չդաք...

Մեր ուղեղները պերճախօս հրամանի
շարունակութիւնը այլ ևս չլսեցին:

«Մենք ենք, ես եմ, այս մերոնք են», ասում
էր Եանկելը, ամեն մէկին հանդիպելով:

—Հը, հիմա կարելի՞ է, —հարցրեց նա պա-
հապաններից մէկին, երբ մօտեցան վերջապէս
այն տեղին, ուր նրբազաւիթն արդէն վերջա-
նում էր:

—Կարելի է, միայն չգիտեմ՝ բանտը ներս
կըթողնե՞ն, թէ չէ: Այժմ արդէն Եանը չէ
այսուղ. Նրա տեղն ուրիշն է կանգնած, —պա-
տասխանեց պահնորդը:

—Վայ, վայ, վայ, —կամացուկ արտասանեց
ջհուդը, —այս վաս եղաւ, սիրելի պահն:

—Տար, —յամառութեամբ պատասխանեց
Տարասը: Ջհուդը հասպանուեց:

Ստորերկեայ բանտի՝ դէպի վերը սուր

Ճայրով վերջացող դռան մօտ կանգնած էր
երեք յարկանի բեղերով մի հայդուկ: *) Բեղերի
վերին յարկը դէպի ետեն էր գնում, միւսն
ուղիղ դէպի առաջը, երրորդը դէպի ներքեւ,
որ նրան կատուի շատ նման էր դարձնում:

Ջհուդը երեք-տակ գունդ ու կծիկ եկաւ
հայդուկի առաջ և դրեմէ կողքով մօտեցաւ
նրան:

—Ձերդ պայծառափայլութիւն, պայծա-
ռափայլ պահն:

—Ջհուդ, այդ ինձ ես ասում:

—Զեզ, պայծառափայլ իշխան:

—Հըմ..: բայց ես մի հասարակ հայդուկ
եմ, ասաց երեք-յարկանի բեղերաւորը զուար-
թացած աչքերով:

—Իսկ ես, Աստուած վկայ, կարծեցի թէ
հենց ինքը վոյւդան (զօրավար) է: Փահ, փահ,
փահ... այս ասելով ջհուդը գլուխը պտտեցրեց
և մասները չուեց:

—Փահ, փահ, ինչ երեկը տեսք է: Այն
Աստուածը, գնդապետ էք, իսկը գնդապետ:
Այ եթէ էլի մի մաս աւելացնելու լինին,
այն ժամանակ հօն գնդապետ էք որ գնդա-
պետ: Պէտք է միայն պահս նժոյդի վրայ

Հունգարացի վիճուոր: Ծ. թ.

նստած լինէր, ճանձի պէս արագոտն նժոյշել վրայ, և այն ժամանակ տեսնէիք թէ ինչ հրամաններ կ'արձակէր զօրքին:

Հայդուկն ուղղեց բեղերի ներքին յարկը՝ նրա աչքերը բոլորովին զուարթացան:

— Խնչ մարդիկ են այս զինուորականները՝ է, — շարունակեց ջհուղը, — փա՞ռ, փա՞ռ, փա՞ռ, ինչ պատուական մարդիկ են: Խնչ երիզներ, ինչ օղամանեակներ, հենց իմանսա արև լինին: Էնդուր է աղջկերը զինուորական մարդ որ չեն տեսնում, խելքները գնում է... պա՞ռ, պա՞ռ, — ջհուղը գլուխը նորից պատեցրեց:

Հայդուկը ձեռքով վերին բեղերը ոլորեց և ատամների միջից ձիու խրինջոցի մի քիչ նման մի ձայն արձակեց:

— Խնդրում եմ պանիս, որ մի շնորհ անի, — ասաց ջհուղը: — Այ, այս իշխանը օտար երկրեց եկել է, ուզում է կազակներին տեսնել: Նա իր կեանքումը դեռ կազակ ասած բանը չի տեսել:

Օտար երկրացի կոմսերի և բարոնների կեհաստան այցելելը բաւական սովորական բան էր. շատ անգամ դրանց հրապուրում էր Եւրոպացի այս գրեթէ կէս-ասիական անկիւնը (Մոկովիան և Ուկրայնան նրանք արդէն Ասիայում էին համարում) տեսնելու միակ հե-

տաքրքրութիւնը, ուստի և հայդուկը, բաւական խոնարհ գլուխ տալուց յետոց, պատշաճ համարեց իր կողմից մի քանի խօսք աւելացնել:

— Ձերդ պայծառափայլութիւն, — ասաց նա, — զիտեմ ինչու էք ուղղում դրանց տեսնել: Դրանք մարդ հօ չեն, շուն են: Դրանց հաւատան էլ այնպիսի մի հաւատ է, որ ոչ ոք չի ուղղում յարդի:

— Սնեւ ես ասում, սատանի սերունդ, — ասաց Բուլլան, — ինքդ ես շունը: Խնչպէս ես համարձակուում ասել թէ մեր հաւատը չեն յարգում: Այդ ձեր հերետիկոս հաւատն է, որ չեն յարգում:

— Է-հէ-հէ, -ասաց հայդուկը. — զիտեմ ինչ մարդ ես, բարեկամ. դու ինքդ էլ հենց նրանցից ես, որ արդէն այստեղ ձեռքիս տակ նըստած են: Կաց զեռ մերոնց մի այստեղ կանչեմ:

Տարասն իր անզգուշութիւնը հասկացաւ, բայց կամակորութիւնն ու զայրոյթը արգելեցին իրեն, որ մտածի թէ ինչպէս այդ անզգուշութիւնն ուղղի: Բարեբախտաբար Եանկելին յաջողեց իսկոյն և եթ ճարը գտնել:

— Պայծառափայլ պան, այդ ինչպէս կարելի է, որ կոմճը կազակ լինի: Որ կազակ մենէր, մրտեղից հապա կարող էր այսպիսի հագուստ և կոմսական կերպարանք ճարել:

— Ումն ես ուզում՝ խարես,-և հայդուկն այն է իր լայն բերանը բաց էր անում, որ աղաղակի:

— Զերդ արքայական մեծութիւն, լռեցէք:
Նռեցէք, ի սէր Աստուծոյ, — զոռաց Եանկելը: —
Նռեցէք, մենք դրա համար ձեզ այնպէս կրվար-
ձատրենք, որ դեռ երբէք չէք տեսել, -ձեզ եր-
կու ոսկի կրտանք:

— Հըմմ, երկու ոսկի: Երկու ոսկին ինչ բան
է ինձ համար: Երկու ոսկի ես սափրիչն եմ
տալիս, որ միրուքիս կէսը միայն վէր անի: Հա-
րիւր ոսկի տուր, ջնուդ: -Այդ ժամանակ հայ-
դուկը վերին բեղերը պինդ ոլորեց: -Հարիւր
ոսկի որ չտաս, իսկոյն կը կանչեմ:

— Ել ինչու այդքան շատ, -ասաց վշտագին
ձայնով՝ գունատուած ջնուդը, իր կաշէ տող-
րակը բաց անելով: Բայց նա բախտաւոր էր,
որ իր քսակում աւելի չկար, և հայդուկը հա-
րիւրեց դէնը համարել չդիսէր:

— Պան, պան, հեռանանք շուտով: Տես-
նում էք, ինչ անպիտան մարդիկ են, -ասաց
Եանկելը, նկատելով, որ հայդուկը ձեռքի մէջ
տնտղում է փողերը, կարծես թէ ցաւելով, որ
աւելի չուզեց:

— Ի՞նչ է, դե հայդուկ, -ասաց Բուլբան, -փո-
ղը վերցրիր և ցոյց տալ էլ չես ուզում: Զէ,

զու պէտք է ցոյց տաս: Մի անգամ որ փողն
ստացար, էլ իրաւունք չունիս մերժելու:

— Գնացէք, կնրէք գնացէք, թէ չէ իսկոյն
իմաց կրտամ և այն ժամանակ ձեզ... փասայ-
գուսէքդ քաշէք, ասում եմ, շուտով:

— Պան, պան, գնանք. այն Աստուածը,
գնանք: Թու դրանց... Աստուած քար ու կայ-
ծակ թափի դրանց գլխին. շներաց-գէլերաց
լինի... կանչում էր խեղճ Եանկելը:

Բուլբան դլուխը կախ զցած, զանդաղ
շուռ եկաւ ու յետ էր գնում: Եանկելը կշտամ-
բանքներ էր որ նրա գլխին թափում էր.
Խեղճին մաշում էր զուր տեղը ոսկիները կորց-
նելու ցաւը:

— Ի՞նչ հարկաւոր էր դիպչել: Շունը հայ-
հոյում էր՝ հայհոյէր: Դրանք այնպիսի մարդ
են, որ առանց հայհոյելու չեն կարող ապրել:
Պապապապա. այդ մարդկանց բախտը ինչպէս
բաց է անում Աստուած: Հարիւր ոսկի նրա
համար միայն, որ դուրս քշեց մեզ: Խոկ մենք,
մեր կաւիքներն էլ կըտղին, մեր քիթ ու
պրունգն էլ կըջարդեն, արիւնլուայ կ'անեն,
բայց էլի մէկն էլէ հարիւր ոսկի չի տալ:
Ո՛հ, Աստուած իմ, ողորմած Աստուած...:

Բայց Բուլբայի վրաց շատ աւելի ազդեցու-
թիւն արեց այդ անաջողութիւնը, որ լափող

բոցի նման արտայայտում էր նրա աչքե-
րում:

—Գնանք, ասաց նա յանկարծ, կարծեա
թէ քնից վեր թռչելով, —գնանք հրապարակը.
ուղում եմ տեսնել՝ թէ ինչպէս պիտի տանջեն
նրան:

—Օ՛հ, պան, ինչ հարկաւոր է գնալ:
Դրանով էլ խօ բան չենք կարող անել:

—Գնանք, ասաց Բուլբան յամառութեամբ,
և ջհուդը դայեակի պէս, հառաչելով, քարշ
եկաւ նրա ետեից:

Դժուար չէր գտնել այն հրապարակը, որ-
տեղ պիտի մահուան պատիժը գործադրուէր:
Ժողովուրդն ամեն կողմից այնաեղ էր խուժում:
Այն ժամանակուայ բիրտ դարում դա ամենա-
գրաւիչ տեսարաններից մէկն էր ոչ միայն
խաժամուժ ամբոխի, այլև բարձր դասակարգի
համար: Նատ ամենաբարեկաշտ պառաւներ,
շատ ամենավախկոտ մանկամարդ օրիորդներ ու
կանաչք, որոնք յետոց ամբողջ գիշերը անրջի-
մէջ արիւնշաղախ դիմուներ էին տեսնում,
որոնք քնած տեղից այնպէս բարձր գոռում
էին, ինչպէս որ միայն հարբած հուսարը կա-
րող է գոռալ, —հետաքրքրութիւնները յագեց-
նելու առիթը ձեռից չէին փախցնում: «Ա՞ս,
ինչ տանջանք է», խտերիքական տենդով աղա-

դակում էին նրանցից շատերը, աչքները փա-
կելով և երեսները շուռ տալով. բայց դար-
ձեալ երբեմն բաւական երկար ժամանակ տեղ-
ներումը կանգնած մնում էին: Ոմանք և բե-
րանները բաց արած և ձեռքերը մեկնած՝ ա-
ռաջ էին խցկում. հենց իմանաս ուղում էին
ամենքի գլխի վրայ թռչեն, որ այնտեղից ա-
ւելի լաւ մտիկ անեն: Նեղ, փոքր ու սովորա-
կան գլուխների խմբի միջից իր հաստ դէմքը
դուրս էր ցցում մազործը, դիտակի տեսքով
դիտում էր ամբողջ գործողութեան ընթաց-
քը՝ սկզբից մինչեւ վերջը, և միավանկ բառե-
րով խօսում մի զինագործի հետ, որին կնքա-
ւոր էր անուանում, որովհետեւ տօն օրերը
նրա հետ մի տեղ միենոյն զիննուանն էր հար-
բում: Ուրիշները տաք-տաք դաստողութիւններ
էին տալիս. կային և այնպիսիները, որ մինչեւ
անգամ գրակ էին գալիս. բայց մեծ մասն
այնպիսի մարդիկ էին, որոնք ողջ աշխարհիս
վրայ, և ինչ որ աշխարհումն լինի-չլինի՝ ամեն
բանի վրայ մատով քթները քչփորելով են
մտիկ անում:

Առաջին կարգում, ուղիո՝ քաղաքային պա-
հապան զօրքը կազմող բեղաւորների մօտին,
կանգնած էր զինուորական հազուստով մի երի-

տասարդ շլեախտիչ, *) կամ շլեախտիչ երևացող
մէկը, որ ինչ ունէր-չունէր, ամբողջապէս վրան
էր առել, այնպէս որ բնակարանում միայն
քըքրուած շապիկը, մէկ էլ հին կօշիկներն էին
մնացել։ Նրա վզից մէկը միւսի վրայից երկու
շղթայ կար կախուած մի ինչ-որ դուկատի
հետ։ Նա կանգնած էր իր նշանածի՝ Խւզի-
սիայի հետ, և անդադար աչքը վրան էր սփա-
հում, որ վերջինիս մետաքսեաց հագուստը չկեղ-
տուեն։ Նա իր սիրուհուն մէկ-մէկ բացատ-
րում էր ամբողջապէս բոլորը, այնպէս որ էլ
ամենեին բան չէր կարելի աւելացնել։ «Այ,
հոգեակա, Խւզիսիա», ասում էր նա. «այս բո-
լոր ժողովուրդը որ տեսնում էք, նրա համար
է այսուղ հաւաքուել, որ մտիկ անեն թէ ինչ-
պէս պէտք է յանցաւորներին պատժեն։ Իսկ
այս նա, որ տեսնում էք, հոգեակա, ձեռին կա-
ցին և ուրիշ գործիներ ունի բռնած, նա
դահիճն է և նա պէտք է պատժի։ Որ կըսկի
անուով ոսկորները ջարդել և ուրիշ չարչա-
րակներ տալ, յանցագործը գեռ կենդանի
կըլինի. բայց հենց որ դլուսը կըսկըն, այն
ժամանակ, հոգեակա, իսկոյն ևեթ կըմեռնի։
Սկզբում կը գոռայ ու կըշարժուի, բայց հենց

*) Լեհացի ազնուական։ Ծ. թ.

որ գլուխը կըսկըն թէ չէ, էլ չի կարող ոչ
գոռալ, ոչ ուտել, ոչ խմել, և այդ նրա հա-
մար, հոգեակա, որ էլ գլուխ չի ունենալ։ Եւ
Խւզիսիան սարսափով ու հետաքրքրութեամբ
լում էր այս ամենը։

Տների կտորները բռնուած էին ժողովրդով։
Տանիքների վրայ շինած պատուհաններից
դուրս էին նայում խիստ տարօրինակ դէֆեր՝
բեղերով և լաչակի նման մի բանով։ Պատշ-
գամբներում ծածկերի տակ նստած էր ազ-
նուականութիւնը։ Ծիծաղիկ շարմաղ երեսով
շաքարի պէս ձերմակ պանենայի գեղեցիկ ձեռ-
նիկը հանգչում էր բաղրեկի վրայ։ Բաւական
մարմնեղ պայծառափայլ պաները մտիկ էին
անում յարգելոր ու վեհապանծ կերպարանքով։
Ծառան, փայլուն զարգարանքով, թեքերը
ետել ձգած, այնտեղ և եթ զանազան խիչք-
ներ և ուտելեղին էր մատուցանում սրան-նրան։
Եատ անգամ սեաչեայ, չարաձմի աղջկայ մէկը՝
իր լուսաթաթախ ձեռնիկով կարկանդակ ու
պառողներ էր վերցնում, ժողովրդի մէջ ձգում։
Քաղցած ասպեանների խումբը դլսարկները
տակին պահում էին, որ բռնեն. և որևէ բարձ-
րահասակ շլեախտիչ, որի դլուխը բազմու-
թեան միջից դուրս էր ցցւում, սեացած, ոս-
կեթել երիզներով խունացած կարմիր վերնա-

զգեստը հագին, իր երկայն ձեռների օդնութեամբ առաջինը բունում, համբուրում էր ստացած որսը, սրտին էր սեղմում և յետոյ քերանը դնում: Պատշգամբի տակ ոսկեզօծ լմագակում կախած բազէն նոյնպէս հանդիսատես էր լինում: Նա կտուցը կողքի վրայ կորացրած և մազիլը բարձրացրած, իր կողմից նոյնպէս ուշադրութեամբ մոիկ էր անում ժողովրդին:

Բայց ահա բազմութիւնը սկսեց յանկարծ աղմուկ բարձրացնել և ամեն կողմից այս ձայներն էին թնդում. «Տերում են, կազակներին բերնեմ են»:

Կազակները գալիս էին գլուխները բաց և երկայն քեաքիւները կախ գցած: Նրանք միրուք էին թողած. Նրանք քայլում էին ոչ երկշուռութեամբ և ոչ թափառութեամբ, այլ մի անդորր հապարտութեամբ: Նրանց թանգագին մահուդէ հագուստները մաշուել էին և հնոտի ծլանքները քաշ ընկած տատանում էին: Նըրանք չէին նայում ու գլուխ տալիս ժողովրդին: Օստապը գնում էր նրանց ամենքի առաջից:

Ի՞նչ զգաց ծերունի Բուլբան, երբ իր Օստապին տեսաւ: Ի՞նչ էր կատարւում այդ ժամանակ՝ նրա սրտում: Ծերունին բազմութեան միջից որդուն էր նայում և որդու մի

շարժուածքն անգամ աչքից չփախցրեց: Կազակներն արդէն պատժարանին մօտեցան: Օստապը կանգ առաւ: Առաջինը նրան էր վիճակուած խմել այդ դառն բաժակը: Նա իրեն-ներին նայեց, ձեռքը վեր բարձրացրեց և ասց բարձրաձայն. «Աստուած տայ, որ այսեղ կանչնած բոլոր հերետիկոսներն ու անօրէնները չլսեն թէ ի՞նչպէս է տանջւում քրիստոնեան, որ մեզնից ոչ ոք մի ծպոտուն անգամ չհանի»: Այնուհետև նա կառավինարանին մօտեցաւ:

—Ապրիս, որդիս, ապրիս,—ասաց Բուլբան կամացուկ և իր ալեզարդ գլուխը գետին խոնարհեց:

Դահիճը Օստապի վրացից քաշեց, հանեց ցնցոտիները. Նրա ձեռներն ու ոտները յատկապէս շինած մահուլի մէջ կապեցին և... բայց ես չպէտք է ընթերցողներին յուղեմ դժոխացին տանջանքների նկարագրով, որից նրանց մազերը բիզ-բիզ կըկանգնեն: Այդտան-ջանքներն այն ժամանակուայ կոպիտ, կատաղի դարու ծնունդն էին, երբ մարդս գեռ միայն պատերազմական քաջագործութիւնների արիւնուշտ կեանք էր վարում և այդ կեանքի մէջ հոգւով այն աստիճանի բրտացել էր, որ մարդասիրութեան համար անզգայ էր դարձել

Պէտք է, սակայն, ասել, որ թագաւորը գրեթէ միշտ առաջին հակառակորդն էր հանդիսանում այդ քստմնելի միջոցների. դէմ: Նաշատ լաւ տեսնում էր, որ պատիժների այդպիսի խստութիւնը կարող էին կազմակ ազգի վրէժխնդրութիւնը միայն վառել: Բայց թագաւորը չէր կարողանում ոչինչ անել պետական մագնատների ժպիրհ կամքի դէմ, որոնք անըմբոնելի անհեռատեսութեամբ, երեխայական ինքնասիրութեամբ, գոռողութեամբ և անհիմն վարմունքով սէյմը *) վարչութեան մի ծանրատեղի էին դարձրել:

Օստապը աներեւակայելի պնդութեամբ հըսկայի պէս դիմացաւկոտանքին, և երբ նրա ձեռների ու ոտների ոսկորները ակսեցին կոտրատել, այնպիս որ նրանց քստմնելի խրթիսրթոցը արձանացած բազմութեան միջից հեռաւոր հանդիսատեսների ականջին էր հասնում, երբ պաննաները երեսները շուռ էին տալիս, — հառաչանքի նման ոչ մի բան դուրս չթռաւ նրա շրթունքներից. նրա դէմքը չարսուաց:

Տարասը բազմութեան միջին կանգնած էր գլուխը քաշ գցած և աչքերը, սակայն, վեր

*) Լեհաց ազգակին երեսփոխանական ժողովը: թ.

բարձրացրած, և միայն քաջալերիչ ձայնով առւմ էր.

— Ապրիս, որդիս, ապրիս:

Վերջապէս Օստապի ոյժն սկսեց, կարծես, նուազել: Երբ նա տեսաւ տանջանքի նոր զժոխացին գործիքները, որոնցով պէտք է իր ջըղերը դուրս քաշելին, շրթունքները սկսեցին դողողալ: «Հայր», բացականչեց նա տակաւին հաստատուն ձայնով, որ ցոյց էր տալիս տանջանքներին յաղթահարելու ցանկութիւնը. «Հայր, ուր ես. լսում ես արդեօք»:

— Լսում եմ, լսելի եղաւ ընդհանուր լուսութեան միջից, և միլիօնաւոր ժողովուրդը բոլորը միաժամանակ ցնցուեցին: Զիաւոր զօրականների մի մասը վրայ վագեց, որ ժողովրդի խուռն բազմութիւնը ինսամքով աչքէ անցնի, կանչողին որոնի: Եանկելի գոյնը թռաւ, մեռելի գոյն ստացաւ, և երբ զօրականները մի փոքր հեռացան իրենից, ահ ու դողով ետ շուռեկաւ. բայց Տարասն այլ ես իր կշախն չէր. նըրա հետքն անգամ չէր մնացել:

Թ.

Տարասի հետքը գտնուեցաւ. Ուկրայնացի սահմանների վրայ երեսուն հազար կազմակ զօրք երեացին: Դա արդէն աւար առնելու կամ իր

առանձին նպատակի համար դուրս եկած որևէ զօրագունդ չէր. դա հասարակաց զործի համար էր: Դա մի ամբողջ ազգ էր, որի համբերութիւնն արդէն լցուել էր և վեր էր կացել վրէժ առնելու իր բռնաբարուած իրաւունքների, իր անարգուած կրօնի ու սովորութիւնների, իր հեթմանների ու գնդապետների ու խտագրութեամբ սպանուելու, ջնուդ կապալառուների հարստահարութեան համար, և այն ամենի համար, որով իրեն անպատուած էր համարում ընկճուած ժողովուրդը:

Զօրքի գլխաւոր սպարապետն էր Օստրանիցա *) հեթմանը, տակաւին մի երիտասարդ, որ եռում էր պետական մագնատների կամայական ինքնափարութեամբ դրած ձնշող բռնակալութեան լուծը շուտով թօթափելու և Ուկրայնան ջնուդներից, ունիացից և կողմանակի խաժամուժից մաքրելու բուռն ցանկութեամբ: Օստրանիցայի հետ նշանաւոր էր և նրա ծերունի ու փորձուած ընկերն ու խորհրդականը՝ Գունիան: Քառաօտն հազար ձիանք անհամբերութեամբ վրնջում էին հեծեալների տակ և առանց հեծեալների: Ուժ գունդ, որոնց կէսը

*) Մալոսոսիակի Օստրանիցա հեթմանը, որ նըշանաւոր է լինացոց դէմ վարած կոխներով, հեթման է ընտրում 1638 թ.

ձիաւոր էր, կէսը հետևակ, ալ, կապոյտ ու գեղին մահուցէ կապաց հագած, առաջ էին խաղում արիաբար ու խրոխտ: Ուժ փորձառու գնդապետներ էին կառավարում նրանց և իրենց ունքերի անվրդով շարժումով նրանց անհամբեր արշաւանքը արագացնում կամ կանգնեցնում էին:

Գնդերից մէկին հրամանատարութիւն էր անում Բուլբան: Նրա պատկառելի հասակը, հոչակին ու փորձառութիւնը խորհրդի մէջ նըրա ձայնին մեծ կշիռ էին տալիս: Բայց նրա անողոք ու կատաղի խատարտութիւնը մինչև անգամ խորը վիրաւորուած պաշտպաններին զարհութելի էր թւում: Նրա խորհուրդն աւերում ու կործանում էր միայն շնչում, և նըրա ալեզարդ գլուխը կրակ ու կախաղան էր միայն որոշում:

Զպէտք է նկարագրեմ այն ճակատամարտները, որոնց մէջ կազակները քաջ հանդիսացան, և ոչ ամբողջ մեծ պատերազմի աստիճանական ընթացքը,—դա պատմութեանն է վերաբերում: Այնուեղ մանրամասն նկարագրած է թէ ինչպէս լեհական բերդապահ զօրքերը փախչում էին ազատուած քաղաքներից, ինչպէս անխիղճ կապալառու ջնուդները կախուեցան, ինչպէս պետական հեթման նիկոլայ Պո-

սոցկին իր բազմամբովս բանակով թոյլ էր այս
անսպարտելի ոչժի առաջ. ի՞նչպէս նա՝ կորիգլուխ
ջարդուած ու հալածուած՝ իր զօրքի ամենա-
լաւ մասը խեղգոտեց մի փոքր զետակի մէջ.
ի՞նչպէս կազակների ահարկու գնդերը փոքրիկ
Պոլոննի գիւղում պաշարեցին նրան, և ի՞նչպէս
Նեհաց հեթմանը՝ խիստ նեղն ընկած՝ թագա-
ւորի և պետական պաշտօնեաների կողմից եր-
դումով խոստացաւ կազակներին լիովին գոհա-
ցում տալ և վերադարձնել նրանց առաջուաց
բոլոր իրաւունքներն ու առանձնաշնորհումնե-
րը: Բայց կազակներն՝ սուաջուաց ուխտագրժու-
թեամբ խրատուած՝ անողոք էին, և Պոտոցկին
իր վեցհազարանոց արքամակի *) վրայ նստած,
այլևս սիգաճեմ չէր շքեղանալ, նշանաւոր օրի-
որդների հայեացքը զրաւելով և աղնուական-
ների նախանձը գրգռելով, եթէ այդ գիւղում
գտնուած ուուս հոգեորականութիւնը չազատէր
նրան: Հանդիսաւոր թափորը՝ խաչով ու խաչ-
վառով և ծերունի քահանացի աղերսանքները
շարժեցին կազակների սիրտը, որոնք գեռ զգում
էին իրենց՝ թագաւորի հետ կապող կապերը:
Հեթմանն ու գնդապետները որոշեցին Պոտոց-
կուն բաց թողնել, բայց միայն կազակներին

*) Մեծամարմին, թանգարին ձի: Ծ. թ.

ամեն բանում ապահովացնող դաշինք կուելուց
յետոյ:

Բայց անընկճելի Տարասն իր սպիտակ գըլ-
խից մի բուռը մազ պոկեց, երբ գնդապետնե-
րի այսպիսի, իր խօսքերով, կանացի փոքրո-
գութիւնը տեսաւ: «Զեմ թողնիլ, գնդապետ-
ներ, որ դուք մի այդպիսի բան բոնէք», աղա-
զակեց նա հաստատագիս: Բայց այս անգամ
նրա խորհուրդը մերժուեցաւ: «Զեղ ասում եմ՝
լեհերին մի՛ հաւատաք, պաներ», միենոյն ձայ-
նով կրկնեց նա նորից, մորակը ձօնելով ու
թնդանօթին շրմիացնելով: Խակ երբ գնդի գը-
րագիրն արդէն գրուած պատրաստ պայմանը
հեթմանին տուեց ստորագրելու, նա ձեռքը թափ
տուաւուասաց. «Կացէք, դէ՛ պաներ դուք գիտէք՝
ձեր գլուխը: Ինձ էլ չէք տեսնիլ: Տեսէք, պա-
ներ, իմ խօսքս կըցիշէք»: Եւ նրա ձայնի մէջ
մարգարէական մի բան կար: «Դուք կարծում
էք՝ դրանով հանգստութիւն ձեռք բերեցիք
և պէտք է այժմ պանութիւն անէք: Կըտե-
նէք, այդ չի լինիլ: Հեթմանն, քո գլխիդ կա-
շին կըքերթեն, մէջը խոտ ու դարման կը-
լցնեն և երկար ժամանակ այդ գլուխդ տօնա-
վաճառանոցներում ի ցոյց գրուած կըլինի:
Հենց դնեք էլ, պաներ. ձեզանից շատ քչերի
գլուխը ողջ կըպրծնի. քարեղէն պատերի մէջ

փակուած, խոնաւ նկուղներում՝ դուք պիտի
փաէք, եթէ միայն ոչխարի պէս ձեզ ողջ-ողջ
չխաշեն կաթսաներում։

— Իսկ գո՞ւք, տղե՞րք, ուղում էք մեռնել, —
շարունակեց նա՝ իր գնդին դառնալով, — մեռ-
նել այնպէս, ինչպէս մեռնում են պատուաւոր
կազակները։ Բայց կարելի է կրցանկաք դեռ ևս
ապրել և տանը վառարանի վրայ վէր ընկնիլ
և այնտեղ վէր ընկած մնալ, մինչեւ որ թըշ-
նամին ձեզ էլ իր բուռը հաւաքի։ Ո՞րն է լաւ,
հարցնում եմ, կտրիճներ. ո՞րն է լաւ, — տուն-
վերադառնաք, որ ամեն օր ձեր կնիկը ձեզ
թակի և հարբէք ու մի տեղ ցանկապատի
տակ շան պէս շնթռկէք մնաք, թէ ամենքդ
էլ իսկական ասպետի պէս, հարազատ եղբօր
պէս կոռւի դաշտում միատեղ պառկէք և փառ-
քի անուն թողնէք յաւիտեան։

— Քո ետևից, պան գնդապետ, քո ետևից
կըդանք, — պատասխանեցին գնդի մէջ առջեռում
կանգնածները։ — Տար, Աստուծու անունը զի-
տենայ, կռիւ տար։

— Ապրիք, պան կտրիճներ, — ասաց Տա-
րասը, գլխարկը ձեռն առնելով և յետոյ նորից
գլխին գնելով։ Նրա աչքերը փայլատակեցին։
— Զնջե՞նք բոլոր կաթոլիկութիւնը. նրա

հոտն անդամ չմնայ աշխարհիս երեսին։ Կոր-
չին անհաւատները Հայ-դէ, տղե՞րք։

Այս ասելով՝ մոլեգնած ալեոր ֆանատի-
կոսն իր գնդովը ճանապարհ ընկաւ։ Միւս
կազակները նախանձով էին նայում հեռացող
ընկերակիցներին, և միայն նրանց մշտական
առաքինութիւնը, գնդապետներին հնագան-
դուելու պարտաճանաչութիւնն էր արգելք
լինում, որ շատ ցանկացողներ հեռացողներին
չէին միանում։

Հեթմանն ու գնդապետներն հեռացող գնդին
արգելք չեղան։ Տարասի գուշակութիւնը,
կարծես, փոքն ինչ վրդովեց նրանց. գո՞նէ մի
առժամանակ լուռ նստած մնացին և իրար
երեսի չէին նայում։ Վակայն Բուլբայի մար-
դարէական խօսքերը շուտով կատարուեցան։
Քիչ ժամանակից՝ Կանեի մօտ եղած ուխտա-
դրուժ վարմունքից յետոյ, շատ իշխանաւոր-
ների գլխի հետ՝ հեթմանի գլուխն էլ ցցի
անց կացըին։

Բայց մեր պատմութեանը դառնանք։ Հապա-
Տարասն իր գնդով ինչ էր անում։ — Տարասը
տասնութ գիւղ, մօտ քառասուն կաթոլիկաց
եկեղեցի կրակ տուեց, և արգէն կրակովին էր
մօտենում։ Իգո՞ւր փոքրաթիւ զօրագնդեր էին
ուղարկում նրան բռնելու, — նա գրեթէ միշտ

ջարդում, կոտորում էր դրանց: Նա անակնկալ կերպով էր գործում և իր դիտաւորութիւնները ծածկում էր: Երբ մի շեն կամ փոքր քաղաք ահ ու սարսափի մէջ նրա գալուն էր սպասում, յանկարծ ճանապարհը փոխում էր և այնտեղ էր կործանում բերում, ուր նրան ամեննեին չէին սպասում: Ոչ մի վրձին չէր համարձակուիլ նկարագրել այն բոլոր անազորոյն խստութիւնները, որով հոչակւում էին նրա աշխարհակործան աւերութիւնները: Գութ ասած բանը չկար այդ ծերուկ սրտի մէջ, որ վրէմիսնդրութեամբ էր միայն եռում: Ոչ մէկին խնայել չգիտէր նա: Իզուր դժբախտ մայրերն և նորատի կանացքն ու օրիորդները, որոնցից ոմանք շուշանի պէս գեղեցիկ և անմեղ էին, սեղանների մօտ փրկութիւն էին որոնում,—Տարասը եկեղեցու հետ միասին կրակ էր տալիս նրանց: Եւ երբ սպիտակ ձեռները, յուսահատութեան ճշի հետ, կրակ ու ծխի գարհուրելի հեղեղի միջից դէպի երկինք էին վերանում, ու զզզզուած մազերը ծխի միջով նրանց ուսերին էին փուռում, իսկ կառաղի կազակները լաց լինող մանուկներին նիզակներով փողոցներից վերցնում, նրանց մօտ բոցի մէջ էին ձգում,—Տարասը հրճուանքի մի տեսակ սարսափելի զզացմունքով մաիկ էր

անում և ասում. «Օստապիս ժամ պատարագն է դա, ապիրատ լեհեր»: Եւ նա ամեն գիւղում Օստապի հոգու համար այսպիսի ժամեր էր անում: Վերջապէս լեհացոց կառավարութիւնը տեսաւ, որ Տարասի արարքները սովորական աւազակութիւնից մի փոքր աւելի էին և միւնոյն Պոտոցկուն յանձնեցին, որ հինգ գնդով անպատճառ բռնի Տարասին:

Տարասը վտանգն զգաց և ճանապարհը շուռ տուեց, որ ետ դառնայ: Նա իր կազակների հետ գիշերը խուլ արահետներով արշաւում էր բոլոր զօրութեամբ և միմիայն թաթարական ձիանքն էին—որոնցից սովորութիւն ունէր մի ամբողջ ջոկ պահել իր զօրքի հետ—որ կարողացան նրա փախատի անսովոր արագութեանը դիմանալ: Բայց այս անգամ Պոտոցկին արժանի էր իր վրայ դրած յանձնարարութեանը,—նա զարմանալի անխոնջութեամբ հալածում էր կազակներին և վերջապէս նրանց ետևից հասաւ Դնեստրի ափին, ուր Բուլբան, մի փոքր գագար առնելու համար, բռնել էր մի բարձի-թողի արած և կիսաւեր բերգ:

Բերդը բարձր տեղում էր և գետի կողմից մի այնպիսի սարսափելի, համարեա կախ ընկած քերծով էր վերջանում, որ, ասես, հենց

այն է՝ ալիքների մէջ էր փուլ դալու։ Գրեթէ քսան սամէն ներքեռում վշշում էր Դնեստրը։ Պոտոցկին հենց այգտեղ իր զօրքերով Բուլբացին շրջապատեց բերդի այն երեք կողմից, որոնք դարձած էին դէպի դաշտն ու դէպի անհարժ ափերի ծործորները։ Տարասն իր քաջութեան և յամառ կամքի շնորհիւ կարող էր պաշարողների բոլոր ճիգերն իդերև հանել, բայց ամայի բերդում կերակրուելու ոչ մի միջոց չունէր, իսկ կազմակներն ամենից պակաս քաղցին կըդիմանային, մանաւանդ երբ տեսնում էին, որ այդ քաղցը վերջը դանդաղ մահով պիտի վերջանաց։ Գետի հետ անհնար էր հաղորդակցութիւն ունենալ. նեղ շաւզի մի կէսըն էր միայն վերեսում կախուած մնում, մնացած կէսը նորերում պոկուած ժայռի բեկորի հետ ալիքների մէջ էր ընկել, և սեղը միայն սեպացած քերծն էր մնում։

Տարասը վճռեց որ բերդից հեռանայ. փորձ փորձեց պատառել-անցնել թշնամիների շարքերի միջից և ափը բռնած՝ մի այնպիսի տեղի հասնել, որտեղից կարելի լինէր ձիով գետի մէջ ցատկել ու լող ընկնել, գնալ։ Նա սրարշաւ դուրս եկաւ բերդից, և կազմակներն արդէն ձեղքել, անցել էին թշնամու շաբքերի միջով, ու Տարասը, յանկարծ, կանգ առնելով և գետին

կոանալով, ասաց. «Կացէք եղբայրներ, չիբուլս վէր ընկաւ։» Հենց այդ ժամանակ նա հըզօր բազուկների մէջզգաց իրեն. թիկունքի կողմից վրայ վազող թշնամու զօրագունդը ըռնեց նըրան և իր մարդկանցից բաժանեց։ Նա իր ոսձեռը թափահարեց, բայց էլ առաջուայ պէս դեսին չթափուեցան իրեն բռնող հայդուկները։ «Ե՛հ, ծերութիւն, ծերութիւն», ասաց նա համարեա լացակումած։

Նրա ձեռները ոլրեցին, պարաններով ու շղթաններով պինդ կապեցին, և ահազին գերանից ամրացրին. աջ ձեռքն, աւելի ասպահով լինելու համար, մեխեցին, և գերանի ծայրը պատի ճեղքուածի մէջ անցկացնելով ուզզորդ կանգնեցրին, այնպէս նա ամենքից բարձր էր կանգնած և բոլոր զօրքերի համար՝ իրեւ աջողութեան մի յաղթական աւար՝ տեսանելի էր։ Նրա սպիտակ մագերը ծածանում էին քամուց։ Նա, կարծես, օդի մէջ լինէր կանգնած և այդ դրութիւնը, սաստիկ անզօրութեան արտայացտութեան հետ, մի ոգու նմանութիւն էր տալիս նրան, ոգու, որ երեռում է իր գերբնական իշխանութեամբ մի բանի արգելք լինելու և իր իշխանութեան ոչնչութիւնն է տեսնում։ Նրա դէմքի վրայ իր մասին ոչ մի հոգսի նըշմարանք չկար։ Նա աչքերն այն կողմն էր սե-

ենել, ուր կազակները հրացանաձգութեամբ
պաշտպանում էին թշնամու յարձակումից:
Բարձրութիւնից ամեն ինչ պարզ աեսնում էր:
«Վեր ելք, տղերք», կանչում էր նա. «անը վեր
ելք, ասում եմ ձեզ, սատանի լսկուներ.
շնուռ արեք, անտառի ետեի անը բարձրա-
ցէք. այնտեղ չեն կարող մօտ գալ սրանք»:
Բայց քամին նրա խօսքերը տեղ չհասցրեց:
«Ահ, պիտի կորչին, զուր տեղը պիտի կոր-
չին», ասում էր կատաղութեամբ և նայեց
դէպի ցած, ուր շողջողում էր Գնեսարը: Ու-
րախութեան զգացմունքը փայլեց աչքերում:
Նա տեսաւ, որ մացաների միջից երեք նա-
ւաքիթ են երեւում: Իր բոլոր ոչերը հաւա-
քեց և այնպէս աղաղակեց, որ քիչ մնաց մօ-
տին կանգնողներին խլացնի. «Տղերք, դէպի
ափը, դէպի ափը քշէք: Եերգի գահաւանդր
տակ մակոչիներ կան կանգնած. ձեր ետեւում
էլ, քսան քայլ հեռու, դէպի ափն իջնելու
ճանապարհ կայ: Չմոռանաք, բոլոր մակոչիներն
էլ հետներդ վերցնէք, որ ետեներիցդ չընկնեն»:

Այս անգամ քամին միւս կողմից փշեց, և
կազակները բոլոր խօսքերը լաեցին: Բայց այդ
խորհրդի համար գլխին կացնի կոթով այն-
պիսի հարուած տուին, որ ամեն բան աչքին
խաւարեց ու պտոյտ եկաւ: Նրան գերանով

միասին ցած իջեցրին, որ էլ խորհուրդ տալ
չկարողանայ:

Կազակները ձիաների գլուխը ետ դարձրին
և արշաւասոյը առաջ սլացան. բայց ափը
դեռ ևս շարունակ մեպացած ժայռերից էր
կազմուած: Նրանք կըհասնէին ափի ցածրա-
դիր տեղին, եթէ ճանապարհը չսափանէր մօս
չորս սաժեն լայնութեամբ մի անդունդ: Քան-
դուած կամրջի ցեցցից սիւներն էին միայն
մնում երկու ծացրին. անդնդի անհասանելի
խորսութիւնից հազիւ մարդու ականջի հաս-
նում էր Գնեսարի մէջ գահիվիժուող մի վտակի
խուլ խոխոջիւնը: Այդ անդունդը կարելի էր
դէպի աջ բռնելով պտուել անցնել, բայց
թշնամու զօրքերն արդէն գրեթէ կազակների
գլխին էին: Կազակները մի ակնթարթ միայն
կանգ առան, մորակները բարձրացրին, շու-
ացրին—և նրանց թաթարական ձիանքը, ոտ-
ները գետնից կտրելով, օձի պէս ձգուեցան օդի
մէջ և թեւ առան թռան անդնդի վրայով:
Մէկի տակին միայն ձին սխալ քայլ առաւ,
բայց սմբակը դէմ տուաւ քարաժայոին
և, քերծերին վարժուած լինելով, դուրս
պրծաւ իր հեծեալի հետ միասին:

Թշնամու զօրագունդը ապշած կանգնեց
մնաց անդնդի ծացրին: Հրամանատար գնդա-

պետը, անմտութեան ասովիճանի աներկիւղ մի երիտասարդ (նա խեղճ Անդրէին թովող գեղեցիկ լեհացի աղջկայ եղբայրն էր), առանց երկար բարակ մտածելու, վճռեց ինքն էլ նոյնը կըկնի, և ցանկանալով իր գնդին օրինակ տալ, առաջ ընկաւ իր ձիով. բայց ցիցցից քարերը կոոր-կոոր արին նրան, որ կորաւ անդնդի մէջ, և նրա արիւնաշաղախ ուղեղը շաղ եկաւ վհի անհարթ պատերին բուսած թփերի վրայ:

Բուլբան գլխին եկած հարուածից մի փոքր ուշքի եկաւ և Դնեստրին նայեց, իր ներքեւում կազակներին նաւակների մէջ նստած տեսաւ: Նրա աչքերն ուրախութիւնից փայլատակեցին: Վերելից կազակների գլխին գընտակների կարկուտ էր թափւում, բայց նրանք ամենեին ուշադրութիւն չին դարձնում և նաւակներն էին շտապով հեռացնում ափերից: «Գնաք բարով, պան եղբայրներ. ընկերներ», վերելից ասում էր Տարասը: «Մէկ մէկ անգամ ինձ էլ մտերդ բերէք: Ինձ համար հոգ մի տանեք. ես գիտեմ իմ վիճակս. գիտեմ՝ ինձ կենդանի-կենդանի մաս-մաս կ'անեն և մարմիս մի կտորիկն անգամ չի մնալ աշխարհիս երեսին: Բայց այդ արդէն իմ գիտնալու բանն է... Ո՞չ լինիք, պան եղբայր-

ներ, ընկերներ: Բայց տեսէք՝ գալ ամառ էլի գաք ու մի լաւ քէֆ անէք»... զլսին եկած կացնի կոթի հարուածը կտրեց նրա խօսքը:

Տէր Աստուած, արդեօք աշխարհումն կայ մի բան, որից վախենաց կազակը: Փոքր գետ չէ Դնեստրը. բայց երբ քամին մկանում է ծովից փչել, այն ժամանակ ալիքը ճղփում, մինչև լուսինն է հասնում: Կազակները լողում էին կրակ ու գնտակների ու կրակի տակ. զգուշութեամբ մի կողմ թողին, անցան կանաչ կրզիները. առազասաները մի լաւ պարզում էին, միաբան սիրով ու համաչափ զարկում էին թիակները և իրենց ասամանի վրայ զբոյց անում:



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Ընկերութեան ՀԱՅԵՐԵՆ ԳՅՐ-
ՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽԱՅԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ-
ՆԱԺՈՂՈՎՐ ՄՐԱՆՈՎ յայտարարում է, որ տպա-
գրութեան համար ընդունվում են հետևեալ բո-
վանդակութեան ինքնուրոյն և թարգմանական
գրուածքները.

1. Գեղարուեստական:

2. Գիտնական, զուտ դիտնական գրուած-
քներից կը տպագրուին միայն այնպիսիները, ո-
րոնք վերաբերում են հայոց կեանքի հետազօ-
տութեան, իսկ զիտութեան միւս ճիշդերից
միայն ժողովրդականացրած գրքեր:

3. Գասագրեր, նամանաւանդ ընդհանուր
գրականութեան, ընդհանուր պատմութեան, հա-
յոց գրականութեան, բնական պատմութեան և
ֆիզիկայի ձեռնարկներ՝ կազմած մեր թեմա-
կան գաղրոցների համար:

4. Մանկական լնթերցանութեան հա-
մար:

5. Նիւթեր մեր ժողովրդի կեանքի ուսում-
նասիրութեան վերաբերեալ (աւանդութիւններ,
երդեր, սովորութիւններ և այլն):

Մանօթութիւն. — Մանրամասն ծրագիր
վերոցիշեալ նիւթերի ժողովելու համար կը տը-
պագրուի յետոյ: Ընկերութեանս խմբ. մասնա-
ժողովն իրան է վերապահում ներկայացրած
նիւթերից ընարութիւն և քաղուածք անել,
եթէ ուղարկողը նախօրօք որոշ պայմաններ չէ
դնում:

Տպագրուած գրքերի համար վարձատրութիւն
արվում է մի տպագրական թերթին՝ ինքնուրոյն
գրուածքների համար՝ 20—25 ռ., իսկ թարգ-
մանական գրուածքի համար՝ 15—20 ռուբլի:

Բացառիկ գէսկը բում վարձատրութիւնը կա-
րող է աւելի լինել խմբ. մասնաժողովի հայե-
ցողութեամբ:

Հասցէն՝ Տիֆլիս, Պրавленіо Տիֆլіսскаго
Общества издания армянскихъ книгъ.



- 14 Ծննդեան պատմութիւնը և Մայ-
 սեան տօնը Ֆինլանդիակում. . . — 10
 15 Ազաթանգեղեաց պատմութիւն. . . 1 —
 16 Գիւղական Խալիֆայ. Ա. Արարատ. . . — 50
 17 Վանակ Սաղ. Դ. Շերմանցի . . . — 75
 18 Փնջիկ. գրեց Աղէքո. Արարատեան . . . — 20
 19 Նամուս. վէպ. գրեց Շերմանզադէ . . . 1 —
 20 Ստեփանոսի Տարօնեցւոց Ասողկան
 Պատմ. տիեզերական. 2-րդ. տպագ. . . 2 —
 21 Թիֆլիսեցւոց մատար կեանքը. Գ. Տէր-
 Աղէքսանդրեանի 1 —
 Նոնը ընտիր թղթի վրապ 1 50
 22 Ղեղին պատմագիր. 2 —
 23 Սրբազն պատմութիւն հին ուխտի. Սա-
 հակ քահանակ Ասհակեանի. — 30
 24 Նոնը ուսուցիչների համար 1 75
 25 Սոկրատէս, թարգ. օր. թ. Ստեփուեան. — 10
 26 Պատմութ. Հայոց. Պալատանեանի. . . 1 50
 27 Ուղեցոց գործնական շերամապահու-
 թեան. Կ. Մելիք Շահնազարիմանցի. — 40
 28 Ժամանակագրութ. հայոց Յ. Դարդելի. 1 25
 29 Վարդ-Ռէսլի. Սպիրի. թարգ. Ե. Յ. — 10
 30 Նալ և Ժամանանթի. Ֆ. Շմիդտի թարգ.
 Յ. Լալայեանցի — 20
 31 Աստուած գիտէ արդարն ու մելպատրը
 Կոմս Լ. Տուսոտի. թարգ. Մ. Ա. . . . — 7
 32 Հաւասարիմ Սալլարին. Վալունէր,
 թարգ. Փ. Վարդանեան — 10
 33 Լինհարդ և Գերարդուդ. Հենրիլս Պետա-
 լոցի. թարգմանութիւն — 25
 34 Յաւելուած ի գիրս պատմութեան Ստե-
 փանոսի Տարօնեցւոց Ասողիկ կոչեցելու.
 Նորալը Բիւղանդացի. — 29
 35 Նաւի փոքրաւորը. Մ. Առղենհանի.
 թարգմ. Յ. Լալայեան. — 15
 36 Ուսենց Յովհէփի. Ե. Սպիրի. թար-
 գ. Առաջնական. — 15
 37 Մեծապատիւ Մուրացկ. Յ. Պար-
 գ. Աղդամին Ջոջեր. Յ. Պարոնեանլ



NL0312652

39	Յը-ա-րա,	Ե.	Օժէշկովի.	—	15
40	Շնիկ.	Կուլիկովայի.	—	5	
41	Շէղրինի	Երեք զրացներ.	—	15	
42	Տարասկոնցի	Տարտարէնը.	—	40	
43	Օրէանի	կոմը.	Օստրագորսկու.	.	.	.	—	25	
44	Արարատսկու	ինքնակինսազրութիւնը	—	75	
45	Գաղափարական	քահանաւ, Պօտապինկօ.	—	75	
46	Ըստանիքի	լուսը.	—	10	
47	Հոսհոսի	ձեռատետրը	{}, Պարմնեանի.	.	1	.	—		
48	Քիմիա	Ռուկովի, թարգմ. Ա.	Մելիք Ալահ-	միրզեան.	.	.	.	—	40
49	Շէղրինի	Երեք վեպիկ, թարգմ. Մ.	Վա-	ղարեան	.	.	.	—	15
50	Սասմայ	ծոեր,	Գարեգին սարկ,	.	.	.	—	50	
51	Զաւախիքի	բուրժունը,	Ե. Լալակեանցի.	.	.	.	—	25	
52	Մաստոր,	բարձրական,	Փիղիքական կըր-	թութիւն Ապենսերի,	թարգմ. Մ.	Վա-	ղարեանցի	.	.
53	Մըսուան.	Օ. Ի.	Շմիդտ թարգմ. Ա.	Քա-	լանթար	.	.	—	20

Նոյն տեղ վաճառվում են նաև հետեւեալ զրքերը.

- 1 Ուսումնարանների առողջապահութեան
հարցեր. բժ. Ա. Բարակեանի. — 1 —
- 2 Կրքեր և նոցա աղեցութիւնը առողջու-
- թեան վրայ. բժ. Ա. Բարակեանի. — 30
- 3 Բռնի միութիւն Հայոց Լեհաստանի. — 2 —